ԳԱՐԻԿ ԱԹԱՆԵՍՅԱՆ
ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՆԳԵԼՈՒԾ



ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ.

ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Garik Atanesyan, Mihran Galstyan
Gayane Hakobyan, Lusine Angelush

WAR AND MEMORY: THE PROBLEM OF MEMORIALIZATION OF THE 44-DAY WAR

IAE PUBLICATION
YEREVAN 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գարիկ Աթանեսյան, Միհրան Գալստյան
Գայանե Հակոբյան, Լուսինե Անգելուշ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ. ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2024

Հետազոտությունն իրականացվել է «Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը և հեռանկարի ուրվագծումը» (ծածկագիր՝ 21T-6A136) ծրագրի շրջանակներում՝ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ինագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. թ. *Ռ.Ս. Օհանջանյան*

Գրախոսներ՝ պ.գ.թ. *Հ.Մ. Մուրադյան*, ս.գ.թ. *Ս.Ա. Միհիթարյան*

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Պ 287

Պ 287 Պատերազմ և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը / Գ. Աթանեսյան, Մ. Գալստյան, Գ. Հակոբյան, Լ. Անգելուշ. – Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, 2024. – 168 էջ:

Մենագրությունը քննարկում է Արցախյան երկրորդ պատերազմի հանրային և պաշտոնական հիշման գործընթացները՝ պատերազմի հուշարձանացման ու զոհերի հիշատակման պրակտիկաների օրինակներով: Հետազոտությունը դիտարկում է պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման մեմոնիկ դերակատարներին և նրանց ակտիվության շարժառիթներն ու նպատակները: Հեղինակների կողմից 2021-2023 թթ. իրականացված որակական հետազոտությունների հիման վրա վերլուծվում են պատերազմի հուշարձանների տեղադրության վայրերի ընտրության խնդիրը, պատերազմի ու նրա զոհերի հիշատակման պաշտոնական և հանրային պրակտիկաներն ու պատերազմի զոհերի հիշատակման նորահայտ վիրտուալ դրսևորումները: Գիրքը կարող է հետաքրքրել հումանիտար ու հայագիտական ոլորտի մասնագետներին և ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-886-68-8

© Գ. Աթանեսյան, 2024
© Մ. Գալստյան, 2024
© Գ. Հակոբյան, 2024
© Լ. Անգելուշ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ I
ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՍՈՒԳԸ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ 13

Պատերազմի հիշողության և հիշատակման պրակտիկաների ուսումնասիրման տեսական մոտեցումները 14

Հարցնել հուշարձանների մասին: Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը 20

Ղարաբաղյան պատերազմների հիշողությունը և նոր պատերազմի հիշատակման խնդիրը 25

ԳԼՈՒԽ II
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ 32

Արցախյան ազատամարտի հուշարձանացումը և պետությունը 34

Պատերազմի հուշարձանացման պաշտոնական դերակատարները 38

Պատերազմի հուշարձանացման ոչ պաշտոնական դերակատարները 48

Բարերարը որպես հուշարձանացման դերակատար 56

ԳԼՈՒԽ III
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ 63

Համայնքային զինվորական պանթեոնները 65

Դպրոցը՝ որպես հիշողության տարածք 73

Անհատական վիշտը հանրային տարածքում 84

ԳԼՈՒԽ IV
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ 98
Զոհերի հիշատակման պաշտոնական
և ոչ պաշտոնական պրակտիկաները 98
Պատերազմը և վիրտուալ սուգը 109
Հիշողության լանդշաֆտը
հետպատերազմական առօրյայում 119
ՎԵՐՋԱԲԱՆ 128
ԱՄՓՈՓՈՒՄ 135
SUMMARY 137
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 139
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 148
ՀԱՐՑԱՐԱՆ 148
44-օրյա պատերազմի հուշարձանների տեղադրման
նախաձեռնությունների հեղինակների հետ խորացված
անհատական հարցազրույց վարելու համար 148
ՀԱՐՑԱՐԱՆ
Փորձագիտական (Ա) հարցազրույց վարելու համար 151
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 153

ՆԱԽԱԲԱՆ

Ինչու՞ է այդքան կարևոր հիշատակել պատերազմի զոհերին: Պատերազմի զոհերի հիշատակումը մարդաբանի համար առավել հաճախ կապվում է ոչ թե պատերազմի կամ զոհերի, այլ համայնքի համար նրա կարևորման հետ: Պատերազմի զոհերի հիշատակումը կենսական նշանակություն ունի ցանկացած համայնքի գոյատևման համար, քանի որ այն արդարացնում է առանձին անդամների կողմից անհատական զոհաբերությունը՝ հանուն ընդհանուր համայնքի բարձրագույն շահի: Այդ պատճառով, պատերազմի հիշատակումը հատկապես արդյունավետ պատուհան է դեպի համայնքի ինքնաներկայացում՝ դեպի համայնքի սեփական երևակայությունն իր հավաքական պատմության, արժեքների և պատմական նպատակի մասին: Պատերազմի հուշարձանները, փորձում են (վերա)պատկերացնել և (վերա)ներկայացնել մի համայնք, որի համար արժե մեռնել, և, հետևաբար, հավաքական ինքնահիմաստավորման պրակտիկաներ են հանդիսանում[1]:

Պատահական չէ, որ Ղարաբաղյան շարժման ու առաջին պատերազմի տարիներին և պատերազմի ավարտից անմիջապես հետո Հայաստանի նորանկախ Հանրապետության ու Արցախի Հանրապետության տարածքներում հայտնվեցին ազգային-ազատագրական շարժման հերոսների, պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ, հուշահամալիրներ, զինվորական պանթեոններ: Արցախյան առաջին պատերազմում տարած հաղթանակը, նոր պատերազմի վտանգի գիտակցումը, նոր ձևավորված հայկական երկու պետությունների առջև դրված մարտահրավերները նպաստեցին Արցախյան ազատամարտի նահատակների, ազատագրական պայքարի, հաղթանակի հիշողութ-

[1] M. Giangiulio, E. Franchi, G. Proietti. Commemorating War and War Dead: Ancient and Modern, Stuttgart: Franz Steiner Verlag, 2019, էջ 337.

յունների (այլ կարևոր պատումների հետ մեկտեղ) հիման վրա ազգային ինքնության ու պատմական հիշողության կառուցմանը, ամրապնդմանն ու վերարտադրմանը, որը պետք է նպաստեր արտաքին այս բարդ մարտահրավերի առջև ազգային համախմբմանը: Արցախյան ազատամարտի հիշողության խորհրդանշանային արտահայտումը եթե սկզբում հանրային ինքնաբուխ դրսևորման արդյունք էր, ապա հետագայում դարձավ նորանկախ պետության իշխանությունների վարած հիշողության քաղաքականության առանցքային մասերից. հետխորհրդային Հայաստանի իշխանությունները ժամանակի ընթացքում ընդունեցին համապատասխան օրենքներ ու քաղաքականություններ, պաշտոնական տոնացույցին ավելացրեցին պատերազմի, հաղթանակի ու հաղթանակած բանակի տարեդարձային հիշատակումները, հուշարձանների ու հուշահամալիրների կառուցման նախաձեռնություններով հանդես եկան, հանրային տարբեր վայրեր ու կառույցներ անվանակոչեցին արցախյան ազատամարտի հերոսների ու կարևոր խորհրդանիշների անուններով:

Անկախության տարիներին ՀՀ իշխանությունների կողմից վարած հիշողության քաղաքականության ու ազգային ինքնության կառուցման գործընթացների առանցքային բաղադրիչն է հանդիսացել պատերազմում հաղթանակը, իսկ պատերազմի հիշատակման արարողություններն ու պրակտիկաները, պատերազմի և զինադադարից հետո ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող զինված բախումների հետևանքով զոհված զինվորների հուղարկավորման, հիշատակման պրակտիկաները ժամանակի ընթացքում վերածվել են հիշատակման ու սգո պաշտոնական արարողակարգային քաղաքականության՝ պետության ինստիտուտներին պատրաստելով հետագա հնարավոր առանցքային իրադարձությունների հիշատակմանը: Հետխորհրդային Հայաստանի համար նմանատիպ կարևոր քննություն էր 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմը. Ադրբեջանի ձեռնարկած լայնամասշտաբ հարձակման հետևանքով ընթացած պատերազմին հայկական կողմից զոհ գնացած մոտ հարյուր զինվորների հիշատակի հավերժացմանն ուղղված պաշտոնական նախաձեռնություններից ու արարողություններից զատ ՀՀ մի շարք համայնքների իշխանությունները բախվեցին հարյուրից ավել հիշատակման նախաձեռնությունների, որոնք առաջարկվեցին ու իրականացվեցին զոհվածների ծնողների, բարեկամների, ընկերների ու հարևանների,

տեղի և սփյուռքի բարերարների կողմից: Հաշվի առնելով պատերազմի նման բարդ հիշողության հիշատակման խնդիրը, զոհված զինծառայողների հարազատների ու նրանց բնակավայրերի բնակչության հոգեբանական զգայուն վիճակը՝ ՀՀ ՏԻՄ-երը փոխզիջումների միջոցով համաձայնության եկան բոլոր նախաձեռնությունների կյանքի կոչման հարցում, չնայած նրան, որ այդ նախաձեռնությունների մեծ մասը, հանդիսանալով զոհերի հիշատակման եղանակների ու վայրի ընտրության անհատական ու նեղ խմբային պատկերացումների արտահայտում՝ շատ դեպքերում չէին հետևում պետության կողմից սահմանված կարգերին ու օրենքներին: Ապրիլյան քառօրյա պատերազմից մոտ չորս տարի անց ՀՀ իշխանությունները, ՏԻՄ-երն ու Հայաստանի բնակչությունը կանգնեցին հետխորհրդային Հայաստանի համար ամենաբարդ հիշողության հիշատակման խնդրի առջև:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի չճանաչված հանրապետության վրա՝ սկիզբ դնելով Ղարաբաղյան երկրորդ պատերազմին: Պատերազմը տևեց 44 օր և ավարտվեց նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հայտարարությամբ: Արդյունքում, Արցախի Հանրապետությունում և ՀՀ-ում զոհված զինծառայողների ու քաղաքացիական անձանց ընդհանուր թիվը կազմեց 3825, հայկական կողմը կորցրեց Արցախի 7 շրջան, Շուշին ու Հադրութը: Պատերազմը տարբեր աղբյուրներում ստացավ *44*-օրյա պատերազմ, Ղարաբաղյան երկրորդ պատերազմ կամ *Արցախյան երկրորդ պատերազմ* անվանումները:

Պարտությունը 44-օրյա պատերազմում, կորսված տարածքներն ու բազմաթիվ զոհերն ու տեղահանվածները, և ճգնաժամային իրավիճակը, որում հայտնվեցին հայկական երկու պետությունները, և՛ հայ հասարակությանը, և՛ քաղաքական տարբեր խմբերի կանգնեցրին բարդագույն խնդրի առջև՝ գնահատական տալու տեղի ունեցած իրադարձություններին, որոշել դրանց դերը ազգային ինքնության ու պատմական հիշողության համակարգում և ապագայի ռազմավարության ծիրում: Խնդիրն էլ ավելի բարդացավ, երբ հետագա երեք տարիների ընթացքում Ադրբեջանի Հանրապետությունը ոչ միայն լայնամասշտաբ հարձակում սկսեց ՀՀ տարածքի վրա ու օկուպացրեց որոշ շրջաններ, այլև շրջափա-

կեց Արցախի Հանրապետությունը և իրականացրեց էթնիկ զտում՝ ամբողջովին հայաթափելով Արցախը:

Հայաստանի Հանրապետության համար ստեղծված աղետալի իրավիճակին տրվող հանրային ու պաշտոնական գնահատականն ու արձագանքը տեսնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է հետևել 44-օրյա պատերազմի հիշման ու մոռացման հանրային ու պաշտոնական գործընթացներին: Մեր հետազոտությունն առավել մեծ ուշադրություն է հատկացրել հատկապես պատերազմի նման բարդ հիշողության հուշարձանացման պրակտիկաներին. պատերազմի հուշարձանները կարող են ծառայել որպես գերազանց առաջնային աղբյուրներ, քանի որ դրանք պատմում են տվյալ ժամանակաշրջանում պատերազմի, քաջության և մահվան վերաբերյալ հասարակության մեջ գերակշռող արժեքների, պրակտիկաների, գաղափարների և վերաբերմունքի մասին: Հուշարձանային լանդշաֆտները շատ հաճախ դառնում են պատմական պատումների կրողներ, հանրային արժեքներ արտահայտողներ և հուսալի ապագայի կառուցման մասին գաղափարներ արտադրողներ[2]: Բացի այդ, հուշարձանները դեռ պատերազմի ընթացքում ու պատերազմի ավարտից անմիջապես հետո դարձան 44-օրյա պատերազմի հիշատակման ամենակարևոր ու ամենատարածված դրսևորումը. պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների նույնիսկ մոտավոր քանակը հաշվարկելը չափազանց բարդ խնդիր է՝ պայմանավորված պաշտոնական մարզային ու համայնքային ցուցակագրման բացակայությամբ, հուշարձանների մի մասի անավարտ ու մեծ մասի՝ «ինքնաշեն» կարգավիճակներով: Այնուամենայնիվ, սոցիալական ցանցերում ու ՋԼՄ-ներում լուսաբանված ու մեր կողմից իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված նյութերը խոսում են ՀՀ համայնքներում հազարից ավել հուշարձանների տեղադրման մասին, որոնց քանակն իրականում շատ ավելի մեծ է:

Պատերազմը բարդ հիշողություն է պետությունների ու հասարակությունների համար, որի հիշման գործընթացն ու պրակտիկաներն էլ ավելի են բարդանում, երբ խոսք է գնում հատկապես պարտված պատե-

---

2 Հ. Մելքումյան, Հիշողությունից ազգայնականությո՞ն. Խորհրդայինի և հետխորհրդայինի հուշարձանները, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2, Եր., 2017, էջ 45-46:

ռազմի մասին: Պատերազմում պարտությունը առաջին հերթին խնդիր է առաջացնում Արցախյան ազատամարտի հիշողության վերաիմաստավորման հարցում. հարց է առաջանում, թե ինչպիսի՞ փոխակերպումների կենթարկվեն Ղարաբաղյան առաջին պատերազմի հուշահամալիրների ու հուշարձանների խորհրդանշանային ու ֆիզիկական լանդշաֆտները, ի՞նչ փոխակերպումների կենթարկվեն հաղթանակի տոներն ու հիշատակման տարեդարձային արարողությունները՝ հաշվի առնելով պարտությունը 44-օրյա պատերազմում:

Եւ՛ հանրային ինքնաբուխ, և՛ պաշտոնական կառավարվող դիսկուրսների (վեր)արտադրությունը ժամանակի ընթացքում կարող են նպաստել որոշ թեմաների հիշատակմանն ու ամրագրմանը պատմական և հանրային հիշողության մակարդակում, իսկ որոշների՝ տեղափոխմանը հիշողության լուսանցքներ, քանզի պատերազմի հիշողության դեպքում գործ ունենք հիշողության քաղաքականության հետ: Պատերազմի դեպքում, հիշողությունը առավել սուր քաղաքական համատեքստ է ստանում և շատ կարևոր է դառնում հետևել այն ձևավորող սուբյեկտների (հանրային ու քաղաքական տարբեր խմբեր և անհատներ) գործունեությանը:

Այս հետազոտությունը դիտարկում է Արցախյան երկրորդ պատերազմի հանրային և պաշտոնական հիշման գործընթացները՝ պատերազմի հուշարձանացման ու զոհերի հիշատակման պրակտիկաների օրինակներով: Հետազոտությունը նաև քննարկում է Հայաստանի համար ստեղծված ճգնաժամային իրավիճակում ազգային ինքնության պատումների, պատմական հիշողության և ապագայի տեսլականի վերաիմաստավորման խնդիրները՝ պատերազմի հուշարձանացման դերակատարների կողմից այդ կառույցներին վերագրվող անհատական, հանրային ու պաշտոնական իմաստների վերլուծության միջոցով:

Հետազոտությունն իրականացվել է 2021 թ. հոկտեմբերից մինչև 2023 թ. հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում և ընդգրկում է նաև Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և 2023 թ. սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղ Ադրբեջանի զինված ուժերի ներխուժումն ու ուժի սպառնալիքի տակ հայ բնակչության էթնիկ զտման իրականացումը: Գիրքը կենտրոնանում է հիմնականում 44-օրյա պատերազմի հուշարձանացման գործընթացի վրա, դիտարկելով նաև 2022 թ.

սեպտեմբերյան ռազմական գործողությունները (հայտնի է նաև հայ-ադրբեջանական պատերազմ անունով), որի ժամանակ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը լայնամասշտաբ ռազմական գործողություններ իրականացրեցին ՀՀ արևելյան սահմանների նկատմամբ: Այս կարճատև պատերազմի արդյունքում հայկական կողմի պաշտոնական կորուստները կազմեցին 207 զոհ:

Այս գիրքը համեստ փորձ է՝ ընթերցողներին ներկայացնել 2020 թ. 44-օրյա պատերազմի հիշման ու մոռացման հանրային ինքնաբուխ և պաշտոնական կանոնիկացված դրսևորումներն ու ամրապնդման մեխանիզմները, ներկայացնել պատերազմի հուշարձանացման ու հիշատակման պրակտիկաներն և ցույց տալ դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները՝ Արցախյան ազատամարտի և Ապրիլյան քառօրյա պատերազմի համեմատ: Ամենակարևորը, մենք ցանկանում ենք, որ լսելի դառնան պատերազմում զավակ, հարազատ ու բարեկամ կորցրած քաղաքացիների իրական վերաբերմունքն ու կարծիքը պատերազմի ու նրա զոհերի հիշատակման եղանակների, պրակտիկաների ու հանրության և պատասխանատու պաշտոնատար անձանց իրականացրած քաղաքականության նկատմամբ՝ զերծ հերոսականացման ու սրբազնացման խորհրդանշանային ու քաղաքական ներկայացումներից:

ԳԼՈՒԽ I
ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՍՈՒԳԸ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ինչո՞ւ են հասարակությունները հիշում և նույնիսկ հիշատակում պատերազմները: Ինչո՞ւ ենք մենք նախընտրում հիշել ու հիշատակել պատերազմները՝ այդ խիստ տրավմատիկ իրադարձությունները մոռանալու փոխարեն: Խնդիրն առավել տարակուսելի է դառնում, երբ արձանագրում ենք, որ ոչ միայն հաղթողներն են հիշատակում պատերազմները, այլև՝ պարտվողները. խոսքը ոչ միայն պատերազմի զոհերի հուղարկավորման, հիշատակի արարողությունների անցկացման մասին է, այլև՝ պատերազմի զոհերի հիշատակման խորհրդանշանային գրեթե բոլոր դրսևորումների իրականացման[3]:

Պատերազմի հիշողության դեպքում գործ ունենք հիշողության քաղաքականության հետ: Պատերազմների հուշարձանացման ու հիշատակման պրակտիկաները, գրեթե միշտ, հիշելու ու մոռանալու միջև ընտրություն կատարելու գործընթաց են հանդիսանում[4]: Հիշողության քաղաքականությունը կարելի է սահմանել որպես հուշային (մնեմոնիկ) դերակատարների կողմից իրականացվող կազմակերպված և ինստիտուցիոնալացված գործունեություն: Մ. Բերնարն ու Յ. Կուբիկը մնեմոնիկ դերակատարներին բնութագրում են որպես քաղաքական ուժերի, որոնք գերազանցապես հետաքրքրված են անցյալի կոնկրետ մեկնաբանմամբ[5]: Մնեմոնիկ դերակատարները պայքարում են խորհրդանշա-

---

3 E. Franchi. Memories of Winners and Losers: historical Remarks on why Societies Remember and Commemorate Wars, STAMPA, 2019, էջ 36-37.

4 О.Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, “ПОЛИТИЯ” № 4 (87), 2017, էջ 11:

5 M. Bernhard, J. Kubik. A Theory of the Politics of Memory // In Twenty Years after Communism: The Politics of Memory and Commemoration, edited by Michael Bernhard and Jan Kubik, Oxford and New York: Oxford University Press, 2014, էջ 9:

կան տարածության մեջ գերակայություն հաստատելու համար, իրենց ցանկալի պատումներն ու օրակարգերը ներկայացնելու, վերարտադրելու ու տարածելու համար:

Պարտված պատերազմը շատ բարդ հիշողություն է թե՛ պետությունների, թե՛ հասարակությունների համար: Պատահական չէ, որ նման հիշողությունների հիշման ու մոռացման գործընթացների ժամանակ մնեմոնիկ հիմնական դերակատարներ հանդիսացող պետությունից զատ հայտնվում կամ ակտիվանում են նաև այլ դերակատարները: 44-պատերազմից հետո պատերազմի զոհերի հիշատակման գործընթացի ակտիվ մասնակիցներ հանդես եկան պետական ինստիտուտները, ՏԻՄ-երն ու Հայ առաքելական եկեղեցին, ինչպես նաև զոհվածների ծնողները, բարեկամները, ընկերները, հարևանները, տեղի և սփյուռքի բարերարները, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, քաղաքական կազմակերպություններ ու գործիչներ:

Մնեմոնիկ դերակատարների՝ պատերազմի հիշման կամ մոռացման, հուշարձանացման, զոհվածների հիշատակման պրակտիկաների վերաբերյալ պատկերացումներն ու մոտեցումները, ինչպես նաև հուշարձաններին վերագրվող իմաստներն ու գործառույթները կարող են չհամընկնել, կտրուկ տարբերվել, բանակցվել, համաձայնեցվել կամ դառնալ «հիշողության» կոնֆլիկտների պատճառ: Ուստի, 44-օրյա պատերազմի հիշման ու մոռացման գործընթացն ու հուշարձանացման պրակտիկաների համակողմանի ու խորքային վերլուծություն իրականացնելու նպատակով, մեր հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը փորձել ենք կառուցել պատերազմի հիշողության ու հիշատակման ուսումնասիրությունների բազմաշերտ մոտեցումների վրա:

Պատերազմի հիշողության և հիշատակման պրակտիկաների ուսումնասիրման տեսական մոտեցումները

Մեր աշխատանքի վերլուծական հիմքը կազմում են հիշողության ուսումնասիրությունների (memory studies) մեջ ընդունված տեսամեթոդական մոտեցումները՝ մեր ուշադրությունը հիմնականում ուղղելով պատերազմի հիշողության և հիշատակման ուսումնասիրությունների ներկա-

յացրած գրականությանը: Պատերազմի հիշողությունը և հիշատակումը ուսումնասիրության են ենթարկվել գերազանցապես երկու հիմնական հայեցակարգերի շրջանակներում. մի կողմից հանդես են գալիս մոտեցումները, որոնք այն մեկնաբանում են որպես սկզբունքորեն քաղաքական երևույթ՝ դիտարկելով այն որպես ազգային նույնականացման ծեսերի հետ կապված պրակտիկա և ազգային պետության՝ իր քաղաքացիներին հավաքական ազգային ինքնության մեջ կապելու համար հասանելի խորհրդանշական հնարների առանցքային տարր: Մյուս կողմից, պատերազմի հիշողությունը և հիշատակումը նշանակալի են դառնում հիմնականում հոգեբանական նկատառումներով, որպես սգի արտահայտություն, լինելով մարդկային պատասխան՝ մահվան և տառապանքի, որը պատերազմի արդյունքում հանգում է մեծ մասշտաբների[6]: Այս հիմնախնդիրների շուրջ ներկայումս գոյություն ունեցող աշխատանքների շրջանակում միտում կա այս երկու հայեցակարգերը մեկնաբանելու այնպես, ասես դրանք միմյանց հետ կապ չունեցող այլընտրանքներ են, և վերլուծությունը կենտրոնացնելու մեկի կամ մյուսի տեսանկյունից:

Մասամբ այս մոտեցումների տարբերությունները հիշողության ուսումնասիրությունների երիտասարդ ոլորտի ներսում առկա գիտակարգային բաժանումների արդյունք են հանդիսանում. մի կողմում հետազոտողներն են, ովքեր կրում են քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների կամ սոցիոլոգիայի ազդեցությունը, մյուս կողմից՝ մարդաբանության, մշակութային քննադատության կամ հոգեվերլուծության ազդեցության տակ գտնվող մասնագետները: Առաջին մոտեցման հիմնական դրույթները կարելի է ցույց տալ՝ քննարկելով Էրիկ Հոբսբաումի և Բենեդիկտ Անդերսոնի ազդեցիկ աշխատությունների մեջ ներկայացված «քաղաքական» շեշտադրումները, իսկ, ահա երկրորդ մոտեցման փայլուն օրինակներ են հանդիսանում Ջեյ Ուինթերի աշխատանքները և Էմանուել Սիվանի հետ նրա համագործակցության արդյունք հանդիսացող հայտնի հետազոտությունները:

Հոբսբաումի և Թ. Ռեյնջերի «Ավանդույթների հորինում» գիրքն անդրադառնում է հասարակություններում «անցյալի» կառուցված տար-

---

6 T.G. Ashplant, G. Dawson, M. Roper. The Politics of War Memory and Commemoration, 1st ed, Routledge, 2000, էջ 22.

բերակների դերին՝ սոցիալական համախմբվածության հաստատման, իշխանության լեգիտիմացման և ընդհանուր մշակույթին բնակչության սոցիալիզացիային[7]: Հոբսբաումը պնդում էր, որ այս «հորինված ավանդույթները» խիստ արդիական են «ազգի» ու նրա հետ կապված՝ ազգայնականություն, ազգային պետություն, ազգային խորհրդանիշներ, պատմություններ և այլ երևույթների վերլուծության համար[8]: Այս փաստարկը համադրվում է Բ. Անդերսոնի «երևակայված հանրությունների» հետ, որտեղ «ազգը» դիտարկվում է որպես համախումբ՝ սահմանված իրեն երևակայելու սեփական ձևերով և նրան պատկանողների ինքնություններով: Անդերսոնն այս գործընթացի կենտրոնում է դնում այն «ուրվական երևակայությունները», որոնց միջոցով կենդանի սերունդները զգում են իրենց կապը մահացածների հետ, ովքեր պատկանում են «նույն» ազգային համայնքին՝ այդպիսով ապահովելով ազգի երևակայական շարունակականությունն ու ժամանակի անդրանցականությունը[9]: Անդերսոնի համար «Անհայտ զինվորի գերեզմանը» նման երևակայությունների առանցքային կերպարն է. այն առաջ է բերում զոհաբերությունը, որը կարող է պահանջվել քաղաքացուց՝ որպես հանրույթին պատկանելու վճար, և այն միջոցը, որով ազգային պետությունը համոզում է իր քաղաքացիներին իր համար զոհաբերել իրենց կյանքերը[10]: Այս երկու աշխատանքները պատերազմի հիշատակման ձևերին ու ծեսերին անդրադառնալիս՝ դրանք դիտարկում են հիմնականում քաղաքական համատեքստում՝ անձնազոհության ու կորստի թեմաների շահարկումը ներկայացնելով որպես դոմինանտ վերնախավերի ու գաղափարախոսությունների պահպանման ու վերարտադրման գործիք:

Ջեյ Ուինթերը բացահայտորեն քննադատել է աշխատանքները, որոնք, նրա կարծիքով, գերագնահատում են պատերազմի հիշողության քաղաքական առումները՝ իր հերթին կարևորելով սգալու «էքզիստեն-

---

7 E. Hobsbawm, T. Ranger. The Invention of Tradition, Cambridge, 1983, էջ 9:

8 Նույն տեղում, էջ 13:

9 B. Anderson. Imagined Communities: Reflections on the Origins and Spread of Nationalism, rev. edn., London, 1991, էջ 6-7:

10 Նույն տեղում, էջ 9:

ցիալ» գործառույթը պատերազմի հիշատակման պրակտիկաներում[11]: Իր աշխատանքներում Ուինթերը հիմնականում քննարկում է Առաջին համաշխարհային պատերազմի հիշատակման դերը՝ անհատական վիշտը հանրային սուգի վերածելու հարցում, որը խթանվում է կորուստի հոգեբանական փոխհատուցման մարդկային համընդհանուր ցանկությամբ՝ ի պատասխան պատերազմի ժամանակ մահվան տրավմատիկ ազդեցությանը[12]:

Այս հեղինակների աշխատանքներն ընդգծում են պատերազմի հիշողության ու հիշատակման գործընթացների ուսումնասիրման՝ հետազոտողների շրջանում առկա երկու մոտեցումները, որոնք միմյանց հակադրում են հիշատակման քաղաքական ու կոլեկտիվ սգի չափումները. առաջին մոտեցումն առաջնահերթություն է տալիս պատերազմի հիշողության կառուցման ձևերին՝ կարևորելով պետության դերը, իսկ երկրորդի դեպքում դիտարկվում են քաղաքացիական հասարակության գործակալների կողմից իրականացված հիշատակի արարողությունները: Տպավորություն է ստեղծվում, թե երկուսում էլ իրականացվող գործընթացները փոխկապակցված ու միմյանց լրացնող չեն: Իրականում այս ֆենոմենի տարբեր ասպեկտները չեն կարող այդքան խստորեն տարանջատվել. պատերազմի հիշողության և հիշատակման քաղաքականությունը միշտ պետք է ներգրավվի սգի և պատերազմի հոգեբանական ու ֆիզիկական վնասը փոխհատուցելու փորձերի հետ, իսկ որտեղ մարդիկ հանձն են առնում սգի և հատուցման օրակարգը, այդտեղ միշտ ներկա է քաղաքականությունը[13]:

Պատերազմի հիշողության ուսումնասիրման երկատություններից և բևեռացումներից խուսափելու համար անհրաժեշտ է տեսականացնել մրցակցող հայեցակարգերում առանձնացված տարրերի միջև փոխհարաբերությունները՝ ստեղծելով անհատին, քաղաքացիական հասարակությանը և պետությանը կապող փոխազդող գործընթացների ավելի

---

11 J. Winter. Sites of Memory, Sites of Mourning: The Great War in European Cultural History. Cambridge University Press; 2014, էջ 79:

12 J. Winter J, E. Sivan. War and Remembrance in the Twentieth Century, Cambridge, 1999.

13 T.G. Ashplant, G. Dawson, M. Roper. The Politics of War Memory and Commemoration, էջ 25:

բարդ, ինտեգրված պատկեր: Թեև սույն աշխատանքը կարող է օգուտ քաղել վերը ներկայացված երկու մոտեցումների դրույթներից, էական հարուստ ռեսուրսներ կարելի է գտնել նաև պատերազմի հիշողության վերաբերյալ երրորդ մոտեցման մեջ, որն օգտագործում է բանավոր պատմությունների մեթոդը: Նման մեթոդ օգտագործող հետազոտություններում վերլուծությունն ավելի հավանական է, որ սկսվի անձնական հիշողություններից, որոնք պատմվում են բանավոր պատմության հարցազրույցներում կամ կյանքի պատմության այլ ձևերում, քան «պաշտոնական» հիշատակման արարողություններից կամ պատերազմի ազգային պատումներից, կամ պատերազմի հիշատակման գեղարվեստական և մշակութային արտադրության այլ եղանակներից: Պատերազմի անհատական հիշողությունների հետ գործ ունեցող այլ գիտակարգերի հետազոտողները ենթադրել են, որ այդ անհատական իմաստները կարելի է դուրս բերել հանրային հիշատակման օբյեկտներից կամ պրակտիկաներից, մտահղացումները հաջողությամբ ընկալվել են հանրության կողմից կամ պատշաճ կերպով ներկայացվել են մեդիայում[14]: Մինչդեռ, բանավոր պատմությունների հայեցակարգում աշխատող հետազոտողների համար սկզբնակետը հիմնականում պատերազմի վերաբերյալ իմաստներն ու նրա հիշատակումն է, որը մարդիկ ստեղծում են իրենց համար ու արտահայտում են իրենց սեփական բառերով ու պատմություններում: Միևնույն ժամանակ, հետազոտողները գիտակցում են անհրաժեշտությունն ուսումնասիրելու նրանց հարաբերություններն ավելի լայն մշակութային ձևերի ու հիշատակման համատեքստերի հետ: Սա նպաստել է, որ հետազոտողները դիտարկեն հիշելու և մոռանալու տարբեր դերակատարների փոխազդեցությունը և տարբեր ոլորտները, որտեղ տեղի են ունենում այդ պրակտիկաները[15]: Մեր կարծիքով, այս հետազոտության շահերից է բխում՝ 44-օրյա պատերազմի հիշման ու հուշարձանացման գործընթացները դիտարկել ոչ թե այս երեք մոտեցումների դիտանկյուններից կամ ընտրություն կատարել նրանց միջև, այլ այդ երեքի միջև փոխհարաբերությունների տեսանկյունից:

---

14 Նույն տեղում, էջ 28:

15 Т. А. Смирнова. Особенности изучения исторической памяти и практик коммеморации Первой мировой войны в Великобритании 1918-1939 гг., Ярославский педагогический вестник, № 4, Том I (Гуманитарные науки), 2014, էջ 95-98.

Բանավոր պատմությունների հղացքում առանցքային նշանակություն է տրվում «հանրային ներկայացումների» և «մասնավոր հիշողության» միջև եղած տարբերություններին: Առաջինը վերաբերում է անցյալի այն ներկայացումներին, որոնք «կենտրոնականություն են ձեռք բերում» հանրային տիրույթում, որտեղ դրանց ինստիտուցիոնալ տարածումը ազգային և լոկալ իշխանությունների, մշակույթի ոլորտների կամ հանրային լրատվամիջոցների կողմից ապահովում է այդ իմաստների կարևորումը հանրային լայն լսարանների համար[16]: Ընդհակառակը, մասնավոր հիշողությունը վերաբերում է «անցյալի ավելի մասնավորեցված զգացմանը», որը շրջանառվում է որոշակի սոցիալական խմբերի մեջ՝ նրանց «առօրյայում»[17]: Հիշողության այս առումների փոխազդեցությունը գրամշյան եզրութաբանությամբ մեկնաբանվում է որպես գաղափարական տիրապետության և դիմադրության հեգեմոնիկ գործընթաց: Գերիշխող հիշողությունների ուժը կախված է ոչ միայն դրանց հանրային տեսանելիությունից, այլև նրանց կարողությունից՝ կապվելու և արտահայտելու որոշակի հանրաճանաչ հայեցակարգեր՝ միաժամանակ ակտիվորեն լռեցնելով կամ մարգինալացնելով ուրիշները[18]:

Տվյալ հասարակության ներսում սոցիալական տարբեր խմբեր, ինչպես նաև անհատների բազմազան շրջանակներ ձգտում են արտահայտել պատերազմի մասին իրենց հիշողությունները: Այս խմբերից ոմանք նախկինում արդեն գոյություն ունեին՝ պատերազմից անկախ (քաղաքական, քաղաքացիական կամ կրոնական խմբեր և այլն). մյուսները գոյանում են հենց պատերազմի արդյունքում (վետերաններ, հաշմանդամներ, զոհվածների այրիներ կամ ծնողներ, բռնի տեղահանված բնակչություն և այլն): Նրանք տարբերվում են քաղաքական և մշակութային իշխանությունից օգտվելու իրենց հնարավորություններով, և, հետևաբար, ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ են՝ ցանկալի պատումները կառուցելու և տարածելու համար: Նրանք կարող են պահանջներ ներկայացնել իրենց հիշողությունների ընդունման համար հանրային հարթակներից որևէ

---

16 Popular Memory Group, 'Popular memory: theory, politics, method', in Centre for Contemporary Cultural Studies, Making Histories: Studies in History-Writing and Politics (London, 1982), էջ 207.

17 Նույն տեղում, էջ 210:

18 Նույն տեղում, էջ 211:

մեկում կամ բոլորում: Նրանք կարող են աշխատել պետական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կամ ավելի ոչ ֆորմալ խմբերի միջոցով:

Այս առումով, ներկայացվող հետազոտությունը որոշ չափով նաև մի փորձ է՝ 44-օրյա պատերազմի հուշարձանացումն ու հիշատակումը դիտարկել պատերազմի հիշողության կառուցման դերակատարների (պետություն, քաղաքացիական հասարակություն, առանձին խմբեր ու անհատներ) միջև ընթացող հարաբերությունների ու բանակցությունների տեսանկյունից:

Հարցնել հուշարձանների մասին: Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը

Պատերազմի հիշողության ու հիշատակման ուսումնասիրման երեք կենտրոնական մոտեցումները կարևոր հիմք են հանդիսացել սույն հետազոտության համար. մենք փորձ ենք կատարել ներառել այդ մոտեցումների հիմնական դրույթները՝ նպատակ ունենալով դուրս բերել պատերազմի հիշողության կառուցման դերակատարների (պետություն, քաղաքացիական հասարակություն, լոկալ խմբեր ու անհատներ) միջև փոխհարաբերություններն ու բանակցությունները: 44-օրյա պատերազմի հուշարձանացման դերակատարների, նրանց կողմից հուշարձաններ տեղադրելու շարժառիթների ու նպատակների վերհանման, այդ հուշարձանների տեղադրման վայրերի ու այնտեղ իրականացվող հիշատակման պրակտիկաների ուսումնասիրումը, մեր կարծիքով, օգնել է դուրս բերել պատերազմի հիշողության ու հիշատակման նրբությունները:

Սույն աշխատության հիմքում ընկած են 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը իրականացված մարդաբանական դաշտային հետազոտության նյութերը: Անցկացվել է 168 խորացված հարցազրույց՝ բանասացների երեք խմբի ներկայացուցիչների հետ: Առաջին խումբը ընդգրկել է պատերազմի հետևանքով զոհ ունեցող ընտանիքները, որոնց ներկայացուցիչները հանդես են եկել զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանների տեղադրման նախաձեռնություններով: Երկրորդը՝ պատերազմի զոհերի հիշատակին նվիր-

ված հուշարձանների նախաձեռնությունների մյուս բոլոր հեղինակներն են, որոնք անմիջական կապ չունեն որևէ զոհի հետ: Եվ երրորդ խումբն ընդգրկում է փորձագետներին, որոնց մեջ մտնում են ՀՀ Կառավարության ու նրան առընթեր մարմինների ներկայացուցիչներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ ու աշխատակիցներ, ՀՀ ԲՈՒՀ-երի, դպրոցների ու մշակութային տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ և այս հիմնախնդրին մասնագիտական առնչություն ունեցած հետազոտողներ: Ելնելով թիրախային խմբերի բազմազանությունից՝ հետազոտությունն իրականացնելու համար պատրաստել ենք երկու տարբեր հարցաշարեր, որոնք հարմարեցրել ենք բանասացների վերը նշված խմբերին (տե՛ս Հավելված): Հետազոտության բուն թիրախ խումբը եղել են պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման նախաձեռնությունների հեղինակ հանդիսացող անձինք, որոնց հետ իրականացվել է թվով ամենից շատ հարցազրույցներ (120 հարցազրույց): 48 խորացված հարցազրույց է իրականացվել փորձագիտական տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ: Բոլոր հարցազրույցների սղագրությունները արխիվացվել են էլեկտրոնային, իսկ հարցազրույցների ձայնագրությունները՝ թվային տարբերակներով: Դաշտային աշխատանքների ընթացքում կատարվել է 1000-ից ավելի լուսանկարներ, որոնք նույնպես արխիվացված են, սակայն, ցավոք, դրանց միայն մի փոքր մասը կարող ենք ներկայացնել այս աշխատության մեջ:

Արցախյան երկրորդ պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններ տեղադրվել են ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում և նրանց թիվը հասնում է մի քանի հազարի: Այդ բոլոր հուշակոթողները գրանցելն ու հետազոտելը շատ բարդ և ժամանակատար գործընթաց է, քանզի նրանց մեծ մասը գրանցված կամ պաշտոնական գործընթացներ անցած չեն և նրանց գրանցելու համար պետք է այցելել բնակավայրեր: Սա նույնիսկ չափազանց բարդ կլիներ իրականացնել, եթե վերցնեինք թեկուզ մեկ մարզ: Ուստի նպատակահարմար ենք գտել վերցնել պատերազմից հետո Ադրբեջանին սահմանամերձ դարձած 4 և Նախիջևանին սահմանամերձ Արարատի մարզերից նվազագույնը չորս բնակավայրերի հուշարձանային լանդշաֆտները՝ փորձելով պահպանել բնակավայրերի՝ սահմանից մարզկենտրոն անցումը:

Հետազոտություն ենք իրականացրել ՀՀ Տավուշի մարզի մարզկենտրոն Իջևան քաղաքում, ինչպես նաև մարզի Կիրանց, Աճարկուտ, Սարիգյուղ, Սևքար, Աչաջուր և Հաղարծին համայնքներում: Սյունիքի մարզում այցելել ենք Քաջարան, Կապան, Գորիս և Սիսիան խոշորացված համայնքները, Վայոց Ձորի մարզում՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ խոշորացված համայնքներն ու մարզկենտրոն Եղեգնաձորը: Գեղարքունիքի մարզում հետազոտություն ենք իրականացրել Մարտունի, Գավառ և Վարդենիս խոշորացված համայնքներում ու մարզկենտրոնում, իսկ Արարատի մարզում՝ Մասիս, Արտաշատ ու Արարատ համայնքներում ու մարզկենտրոն Արտաշատ քաղաքում:

Միևնույն ժամանակ, սահմանամերձ համայնքների և կենտրոնի համեմատական ուսումնասիրության նպատակով հետազոտել ենք նաև Երևան քաղաքի պատերազմին նվիրված հուշարձանային լանդշաֆտը, ինչպես նաև գրանցել ենք պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների լուսաբանումները համացանցում՝ մեր դաշտային աշխատանքներից դուրս մնացած բնակավայրերի օրինակներով: Այս ամենը մեզ հնարավորություն տվեց դիտարկել ոչ միայն առանձին մարզերում սահմանամերձ բնակավայրերից դեպի մարզկենտրոն հիշողության քաղաքականության և հիշատակման պրակտիկաների տարբերություններն ու առանձնահատկությունները, այլև համեմատել ոչ միայն մարզերը միմյանց հետ, այլև բոլոր այդ բնակավայրերը ՀՀ մայրաքաղաք Երևանի հետ:

ՀՀ վերոնշյալ համայնքներում տեղադրված հուշարձանների տարածքներում ու նրանց բացման արարողությունների կամ հիշատակի արարողությունների ժամանակ դիտում ենք իրականացրել: Դիտումների ընթացքում իրականացրել ենք լուսանկարահանումներ և տեսանկարահանումներ: Ընդհանուր առմամբ, դիտում ենք իրականացրել ՀՀ 19 համայնքներում ու 5 քաղաքներում տեղադրված հուշարձանների տարածքներում:

Յուրաքանչյուր պատերազմ, էական չէ հաղթել ես, թե՝ պարտվել, ունենում է զոհեր, և հարց է առաջանում, թե այդ զոհերը ինչպե՞ս են ներկայացվում պաշտոնական և հանրային մակարդակներում: Արդյո՞ք պատերազմում իրենց կյանքը կորցրած զինվորները ներկայացվում են որպես զոհեր, հերոսներ, թե նահատակներ: Ուստի, մեր կողմից կարևոր-

վել է նաև պատերազմի զոհերի հիշատակումը կամ այսպես կոչվող «վիրտուալ սուգի» արտահայտումը ՀՀ վիրտուալ հարթակներում. իրականացրել ենք ՋԼՄ-ների, սոցիալական ցանցերի ու վիրտուալ հնարավոր բոլոր հարթակների նյութերի բովանդակային վերլուծություն:

Հետազոտության շրջանակներում քննության առարկա են դարձել նաև տեղադրված հուշարձանների հետ կապված բոլոր իրադարձությունները և հուշարձանային պրակտիկաները (միջոցառումները, բացման արարողությունները, դրանց լուսաբանումը ՋԼՄ-ներում և այլն): Մեր ուշադրության կենտրոնում են եղել տարեդարձային բնույթի հիշատակումները և դրանց վերաիմաստավորման ու վերամեկնաբանման պրակտիկաները. փորձ ենք կատարել հասկանալ՝ ինչպե՞ս են պատերազմին հաջորդող տարիներին հիշատակվել Արցախի անկախության, բանակի, Շուշիի ազատագրման ու հաղթանակի (մայիսի 9-ի) տոները, ինչպե՞ս են հիշվել Արցախյան առաջին, երկրորդ և Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակները: Թվարկված իրադարձությունների հուշարձանացման նոր պրակտիկաներն ու հիշատակման ձևերի փոփոխությունների դիտարկումը կարևոր գործիք է՝ պարզելու, թե ինչ հանրային ու պաշտոնական գնահատականներ են ստանում վերոնշյալ պատմական իրադարձությունները և, թե դրանք ինչ նշանակություն են ունենալու հայ հասարակության կողմից ներկայի մեկնաբանման և ապագայի սպասելիքների պատկերացման հարցում:

Պատերազմի հիշողության ու զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման վերաբերյալ հարցազրույցներ անելը բավականին բարդ գործընթաց է: Մեր հարցվողների մեծ մասը կիսվում էին իրենց տրավմատիկ փորձառություններով, մարդկային և իրենց համար կարևոր կորուստների մասին պատմություններով. հարզացրույցների մեծ մասը իրականացրել ենք զոհվածների ծնողների, բարեկամների ու ընկերների հետ, փորձագետների մի մասն էլ կա՛մ մասնակցել էին մարտական գործողություններին, կա՛մ ունեին ծանոթներ, բարեկամներ, ովքեր զոհվել էին մարտի դաշտում: Անհրաժեշտ էր շատ զգույշ լինել հարցերը ձևակերպելիս, որպեսզի կարողանայինք պահպանել էթիկական նորմերը. անձնական կյանք չներխուժելու, նորից հոգեբանական տրավմայի չենթարկելու և տրամադրած տվյալների գաղտնիության սկզբունքները: Մեկ այլ խնդիր էր ՏԻՄ ներկայացուցիչների, ինչպես

նաև հուշարձանի տեղադրման նախաձեռնությունների հեղինակ անձանց մտավախությունները՝ կապված հուշարձանների տեղադրման օրինական պահանջների թերի իրականացման կամ ընդհանրապես բացակայության դեպքերի վերաբերյալ տեղեկության տրամադրման հետ: Հարցվողները մտավախություն էին ունենում, որ հուշարձանների տեղադրման ընթացակարգի վերաբերյալ իրենց կողմից տրված պատասխանները կարող են հանգեցնել այդ կառույցների ապամոնտաժմանը կամ վարչական պատասխանատվության:

Պատերազմի արդյունքում հարազատ կամ հայրենի տունը կորցրած մարդկանց շրջանում հետազոտություններ կատարելիս միշտ հաշվի են առնվել նրանց առանձնահատուկ հոգեվիճակը: Սույն գրքում հղված յուրաքանչյուր խորացված հարցազրույց համաձայնեցվել է բանասացների հետ և դրանք հետազոտական նպատակով օգտագործելու համար ստացել ենք նրանց թույլտվությունը: Գրքում տեղադրված հուշարձանների բոլոր լուսանկարները, որոնք պատկերում են հարցվողների մասնավոր տարածքներում տեղադրված կառույցները, ներկայացվել են բանասացների համաձայնությամբ: Հետազոտության ժամանակ կար նաև մտավախություն, որ հարազատ կորցրած մարդիկ հնարավոր է հրաժարվեն մեզ հետ հարցազրույց իրականացնել: Սակայն, հարցվողների մեծ մասը շատ էին ուրախանում մեր հետաքրքրության փաստով, իսկ որոշները զրույցից հետո նույնիսկ շնորհակալություն էին հայտնում հարցազրույցի համար, նշելով որ գնահատում են իրենց զավակին կամ հարազատի հիշողությունը վառ պահելուն ուղղված ցանկացած դրսևորում:

Ցավոք, Եռակողմ պայմանագրի կնքումը և Ռուսաստանի Դաշնության խաղաղարար առաքելության տեղակայումը Արցախում չտվեցին իրենց արդյունքները. պատերազմի ավարտից հետո ԱՀ-ում, ինչպես նաև ՀՀ տարածքում տեղի ունեցան ռազմական բախումներ, գրանցվեցին նոր զոհեր թե՛ խաղաղ բնակչության, թե՛ զինված ուժերի շրջանում: Դաշտային հետազոտության իրականացման ժամանակաշրջանում շատ տեղերում իրավիճակը մնում էր լարված, արձանագրվում էին ռազմական միջադեպեր, որոնք ուղղակիորեն ազդում էին հետազոտության ընթացքի, դաշտային աշխատանքների վայրերի ընտրության վրա՝ հետազոտողների և հարցվողների կյանքին սպառնացող հնարավոր վտանգ-

ների տեսանկյունից: Արդյունքում, նախատեսված որոշ սահմանամերձ համայնքների փոխարեն, մեր դաշտային աշխատանքներն իրականացրեցինք հարևան համայնքներում, իսկ ԱՀ այցելությունը սկզբում հետաձգվեց, իսկ հետագայում չեղարկվեց՝ Արցախից եկող ճանապարհների փակման, Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման ու արցախահայերի՝ իրենց հայրենիքից էթնիկ զտման արդյունքում:

Ղարաբաղյան պատերազմների հիշողությունը և նոր պատերազմի հիշատակման խնդիրը

Անհատների կամ խմբերի արձագանքը նոր պատերազմին ձևավորվում է անձնական փորձառությունների ու արդեն գոյություն ունեցող պատումների համադրության արդյունքում: Վերջինս կարող է վերաբերել անձնական պատմություններին, ինչպիսիք են օրինակ ընտանեկան պատմությունները՝ հոր կամ պապի մասնակցած պատերազմի մասին, որն ազդում է երեխաների՝ հետագա հակամարտությունների նկատմամբ ձևավորվող վերաբերմունքի վրա: Նոր պատերազմի հիշողությունն անհատները կամ տարբեր խմբեր կարող են կառուցել նախորդ պատերազմների կամ կարևոր իրադարձությունների առկա նախահիշողությունների (pre-memories) կամ կաղապարների (templates) օգտագործմամբ: Այս կաղապարները, որոնք բաղկացած են մշակութային պատումներից, առասպելներից և մոտիվներից (tropes), այն շրջանակներն են, որոնց միջոցով հասկացվում և մեկնաբանվում են հետագա հակամարտությունները: Այսպիսով, անհատները կամ խմբերը, ովքեր արտահայտում են պատերազմի վերաբերյալ իրենց անմիջական անձնական հիշողությունները, կարող են վկայակոչել այնպիսի տարրեր, որոնք վերցված են նախորդ սերունդների փորձառություններից և պատկերացումներից: Նույնիսկ պատերազմի «ականատեսների» հիշողությունը կառուցված է ինչպես անձնական փորձառության, այնպես էլ նախկինում գոյություն ունեցող մշակութային կաղապարների վրա: Նախորդ պատերազմում տարած հերոսական հաղթանակի կամ տառապանքի հիշողությունը կարող է ծառայել որպես կաղապար, որի միջոցով հասկացվում են հետագա պատերազմները: Նման կաղապարները հակված են գործել ինչպես անհատական ու խմբային, այնպես էլ հանրային ու քաղաքական մակար-

դակներում՝ նոր հակամարտություններին ակտիվ արձագանքելու համար:

44-օրյա պատերազմի մեկնաբանման, հիշման ու հիշատակման համար հայ հասարակության տարբեր խմբերի, անհատների ու իշխանությունների համար, առաջին հերթին, հիշողության կաղապարներ են հանդիսանում Հայրենական մեծ պատերազմի, Ղարաբաղյան շարժման ու Արցախյան ազատամարտի և Ապրիլյան քառօրյա պատերազմի հիշողություններն ու հիշատակման պրակտիկաները:

1988 թ. սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը, Խորհրդային Միությունից անջատվելու և անկախ պետություն ստեղծելու նպատակն ու հետագա ազգային-ազատագրական պատերազմը դրեցին ազգային պետության կառուցման հիմքերը: Պատահական չէ, որ անկախության սկզբի տարիների հիշողության քաղաքականությունը հիմնականում միտված էր խորհրդային անցյալի խորհրդանիշների վերացմանը կամ վերաիմաստավորմանը[19] ու ադրբեջանական և թուրքական տեղանունների փոփոխությանը, հուշարձանների հեռացմանն ու այլ խորհրդանշանային ներկայության վերացմանը Հայաստանի հանրային տարածքներից:

Ցեղասպանության ու Արցախյան ազատամարտի ու հաղթանակի հիշողությունները հանդիսացել են հետխորհրդային Հայաստանի ազգային ինքնության կառուցման ու հիշողության քաղաքականության անկյունաքարային պատումները՝ ակտիվորեն ազդելով հիշողության ձևավորման այլ պրակտիկաների մեծ մասի վրա: Արցախյան ազատամարտի հիշողությունը՝ սերտորեն միահյուսված լինելով Ցեղասպանության պատումին[20], վերջինիս հետ միասին գերիշխել են հիշողության քաղաքականության մեջ և հիշողության լանդշաֆտում[21]՝ իրենց ազդեցութ-

---

19 Л. Абрамян. «Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении)», Acta Slavica Iaponica XX, 2003, էջ 25-49.

20 Հ. Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը: Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009:

21 Լ. Խառատյան, Գ. Շագոյան, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, Heinrich Boell Foundation South Caucasus, Երևան, 2022, 28 էջ:

յունները թողնելով ինչպես հուշարձանների և հուշահամալիրների կառուցման, այնպես էլ հետխորհրդային Հայաստանի հիշողության մշակութային կաղապարների (վերա)կառուցման վրա: Նման կաղապարների կառուցման, վերարտադրման ու տարածման տարրեր են հանդիսանում հուշարձանները, թանգարանները, հուշահամալիրները, պաշտոնական տոնացույցը, հանրային ծեսերը, տեղանուններն ու անվանակոչումները, գրականության, արվեստի գործերը և այլն[22]:

Արցախյան ազատամարտի հերոսների ու զոհվածների հիշատակին հուշարձաններ և հուշակոթողներ Հայաստանում կանգնեցվել են պատերազմի առաջին իսկ օրերից, ընդ որում դրանք թե՛ անհատական, թե՛ հանրային և թե՛ պետական նախաձեռնություններ էին հանդիսանում: Իսկ Եռաբլուր ազգային հուշահամալիր պանթեոնի վայրը, որը դարձել է Արցախյան ազատամարտի զինվորների ու 20-րդ դարի հայ ազգային ազատագրական պայքարի բոլոր նշանավոր ներկայացուցիչների հիմնական հուշահամալիրը՝ հիմնվել էր դեռ 1992 թ.: Եռաբլուրի օրինակով համայնքային հուշահամալիրներ ու զինվորական պանթեոններ կառուցվեցին նաև Հայաստանի այլ համայնքներում (օրինակ՝ Կապանի հուշահամալիրն ու Սիսիանի պանթեոնը): Հետխորհրդային Հայաստանի Տոնացույցին ավելացվեցին Բանակի տոնը (հունվարի 28-ը) և Երկրապահի օրը (մայիսի 8-ը)[23]:

Անկախության տարիներին ՀՀ իշխանությունների կողմից իրականացվող հիշողության քաղաքականությունների արդյունքում ձևավորված հիշողության կաղապարները ազգային ինքնության պատումների խորհրդանշանային ներկայացման ու վերարտադրման և նոր պատմական իրադարձությունների հիշատակման կարևոր ռեսուրս են հանդիսացել: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ պետությունները ժամանակի ընթացքում պատմական բարդ ու ողբերգական իրադարձությունների բախվեն, որոնք կարող են լրացնել, փոփոխել և նույնիսկ վերակառուցել նրանց գործող հիշողության լանդշաֆտները: Հետխորհրդային Հայաս-

---

22 О. Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, էջ 20:

23 Լ. Խառատյան, Գ. Շագոյան, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, էջ 6:

տանի համար նմանօրինակ բարդ ու ողբերգական իրադարձություն դարձավ 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը:

2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը արցախա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում ադրբեջանական կողմը նախաձեռնեց լայնածավալ ռազմական գործողություններ, որոնք ընդունված է անվանել *Ապրիլյան քառօրյա* պատերազմ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2016 թ. ապրիլ ամսվա ընթացքում հայկական զինված ուժերից մարտական գործողությունների հետևանքով զոհվել է ավելի քան 100 զինծառայող, իսկ պատերազմի արդյունքում հայկական կողմը կորցրել է նաև մոտ 800 հեկտար տարածք: Ձինադադարի կնքումից հետո, Ապրիլյան քառօրյա պատերազմը առաջին մեծամասշտաբ ռազմական բախումն էր երկու պետությունների միջև, որի արդյունքում հայկական կողմն ունեցավ մեծաթիվ զոհեր ու տարածքային որոշակի կորուստներ:

Չնայած նրան, որ Արցախյան ազատամարտի ու հետագա տարիների համեմատ Ապրիլյան պատերազմի հիշատակումը տեղի էր ունենում մի իրավիճակում, երբ հուշարձանացման ու հիշատակման այլ դրսևորումների նախաձեռնությունները պետք է հաստատվեն, իսկ նրանց իրականացումը՝ վերահսկվի պետական ինստիտուտների կողմից, միևնույն է, արձանագրվեցին պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող նախաձեռնություններ, որոնք իրականացվեցին զոհվածների ծնողների, բարեկամների, ընկերների ու հարևանների, բարերարների ու այլ անձանց պատկերացումների համաձայն՝ շատ դեպքերում իրավասու մարմիններին կանգնեցնելով արդեն տեղադրված հուշարձանների լեգիտիմացման խնդրի առջև: Բացի այդ, Արցախյան ազատամարտի հիշման ու հիշատակման պրակտիկաների վերարտադրությունից զատ ՀՀ տարբեր համայնքների հանրային վայրերում հայտվեցին նաև պատերազմի հիշատակման նոր պրակտիկաներ: Պատերազմի զոհերի մեծ մասը հուղարկավորվեց Եռաբլուրում կամ իրենց համայնքնային զինվորական պանթեոններում, իսկ պանթեոնների ու հուշահամալիրների տարածքներում տեղադրվեցին Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհվածների հիշատակը հավերժացնող խմբային հուշարձաններ: Զոհվածներին նվիրված խմբային հուշարձաններից զատ, նրանց մեծ մասի համար իրենց բնակավայրերի հանրային վայրերում տեղադրվեցին տարբեր տեսակի անհատական հուշարձաններ (հուշաղբյուրներ, խաչքարեր, ար-

ձաններ և այլն)։ Սոցիալական ցանցերում բացվեցին զոհվածներին հիշատակող ու նրանց հերոսական սխրանքների մասին պատմող էջեր, բնակավայրերի հանրային վայրերում տեղադրվեցին նրանց նկարներով պաստառներ, տարաբնույթ շենքերի պատերին հայտնվեցին զոհվածների պատկերներով գրաֆիտիներ։ Զոհվածներից մի մասի անուններով փողոցներ, դպրոցական ու համալսարանական դասասենյակներ անվանակոչվեցին, կրթական հաստատություններում ստեղծվեցին «հիշատակի անկյուններ»։ Կրթական հաստատություններում զոհվածների հիշատակման տարաբնույթ պրակտիկաների ի հայտ գալը կապված էր պատերազմի զոհերի մոտ կեսի երիտասարդ տարիքի հետ. նրանց մեծ մասը բանակ էր զորակոչվել կա՛մ անմիջապես դպրոցն ավարտելուց հետո, կա՛մ էլ դեռ հանդիսանում էր ԲՈՒՀ-ի ուսանող։ Որոշ դպրոցների դիմաց կամ բակերում հայտնվեցին նաև զոհվածների նվիրված խմբային կամ անհատական հուշարձաններ։

Ապրիլյան քառօրյա պատերազմի ակտիվ հուշարձանացման կարևոր գործոն դարձավ զոհվածների ընտանիքներին տրվող փոխհատուցումների հարցը, որը հետագայում արդեն առանցքային գործոնի վերածվեց 44-օրյա պատերազմի հուշարձանացման ժամանակ։ Զոհվածների ընտանիքներին տրվող մոտ 2 մլն դրամ կազմող փոխհատուցումը ծնողների մեծ մասը հատկացրեց իրենց զավակների հիշատակը հավերժացնող անհատական հուշարձանների տեղադրման նախաձեռնություններին։ Ապրիլյան պատերազմի արդյունքում հայկական կողմից մեծաթիվ զոհերի առկայությունն ու նրանց ընտանքիներին փոխհատուցում տրամադրելու խնդիրները գործող իշխանություններին ստիպեցին հարցին նոր լուծում առաջարկել։

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին և 1-ին ու 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով 2017 թ. ստեղծվեց «Զինապահ» զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը։ Հիմնադրամը առավել հայտնի դարձավ «1000 դրամների հիմնադրամ» անունով՝ քանզի ՀՀ ՊՆ նախկին նախարար Վիգեն Սարգսյանի կողմից առաջարկված օրենսդրական նախագիծը առաջարկում էր ՀՀ աշխատող քաղաքացիներից ամեն ամիս գանձել 1000-ական դրամ ու

փոխանցել հիմնադրամին: Այս նախաձեռնությունն արձագանք էր հենց Քառօրյա պատերազմին՝ նպատակ ունենալով հետագայում նոր ռազմական բախումների կամ պատերազմների դեպքում փոխհատուցում տրամադրել իրենց կյանքը հայրենիքի համար զոհած զինվորների ընտանիքներին: Այս նախաձեռնության արդյունքում, հետագայում՝ 44-օրյա պատերազմի արդյունքում զոհված զինծառայողների ընտանիքները միանվագ ստացան 10 միլիոն դրամ փոխհատուցում և ամսական 200 հազարից մինչև 300 հազար դրամ նպաստ՝ պայմանավորված զոհված զինծառայողի կոչումով: Այս գումարները դարձան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված անհատական հուշարձանների տեղադրման ֆինանսավորման աղբյուրներն ու պատերազմի հուշարձանացման այդքան մեծ ծավալների խթաններից մեկը:

44-օրյա պատերազմի հիշման ու հուշարձանացման պրակտիկաների համար կարևոր նշանակություն ունեցան Արցախյան ազատամարտի ու Ապրիլյան քառօրյա պատերազմի հիշողություններն ու հիշատակման դրսևորումները: Սակայն, ինչպես կտեսնենք աշխատանքի հաջորդ գլուխներում, նախորդ պատերազմների հիշման ու մոռացման գործընթացների արդյունքում ձևավորված հիշողության կաղապարները, համադրվելով նոր պատերազմի անհատական ու խմբային նոր փորձառությունների հետ, ենթարկվում են փոխակերպումների: Հիշողության կաղապարների վերարտադրման ու փոխակերպումների արձանագրման առաջնային աղբյուրներ են հանդիսանում 44-օրյա պատերազմի հուշարձանացման պրակտիկաները:

Ներկայացվող աշխատությունը բաղկացած է չորս գլխից: Առաջին գլխում նկարագրել ենք իրականացված վերլուծությունների հիմնական տեսական մոտեցումները, ինչպես նաև հետազոտության համատեքստն ու մեթոդները: Ներկայացրել ենք նաև Ղարաբաղյան պատերազմների հիշման ու մոռացման հիմնական գործընթացների նկարագրությունը: Երկրորդ գլուխը նվիրված է պատերազմի հիշողության ու հիշատակման հիմնական մնեմոնիկ դերակատարներին ու նրանց կողմից իրականացվող նախաձեռնությունների շարժառիթներն ու օրակարգերը: Երրորդ գլխում ներկայացրել ենք պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների տեղադրման վայրերն ու նրանց ընտրությունը պայմանավորող դրդապատճառներն ու կարևորությունը՝ հիշողության կա-

ռուցման, վերարտադրման ու տարածման գործում: Վերջին՝ չորրորդ գլխում դիտարկվում են պատերազմի հիշատակման պրակտիկաները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի հիշատակման պաշտոնական ու ոչ պաշտոնական պրակտիկաներին, զոհվածների հիշատակման վիրտուալ սուգին ու պատերազմի հիշողության խնդրին Հայաստանի համայնքների առօրյայում:

ԳԼՈՒԽ II
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Խորհրդային Հայաստանում պատերազմի հուշարձանացման գործընթացը կրում էր կանոնակարգված բնույթ, որի հիմքում պետության կողմից գործող իրավական կարգավորումներն էին և կենտրոնական իշխանությունների կողմից սահմանած վերահսկողությունը: Խորհրդային ողջ տարածքում հուշարձանացման բովանդակության վրա իր ազդեցությունը թողեց Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում հաղթող պետության գաղափարախոսությունը և դրանից բխող խորհրդանիշները: Նախկին խորհրդային տարածքում, այդ թվում և Հայաստանում, պատերազմի հուշարձանացման գործընթացը վերահսկվում էր պետության կողմից: Քաղաքային և գյուղական գրեթե բոլոր բնակավայրերի զոհված զինվորների հիշատակին նվիրված հուշարձանները կառուցվում էին կենտրոնական իշխանությունների անմիջական թույլատվությամբ և վերահսկողությամբ: Դրանց կառուցման համար պետության կողմից անցկացվում էին նախագծերի մրցույթներ, ձևավորվում էին հանձնաժողովներ, որտեղ ներգրավվում էին մասնագետներ և կուսակցական պետական պաշտոնյաներ: Պատերազմի բոլոր հուշարձանները խորհրդանշում էին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, որտեղ շեշտադրվում էր խորհրդային անպարտ զինվորի գաղափարը: Իշխանությունների կողմից խորհրդային հանրային կյանքին բնորոշ այդ պատումներն իրենց արտացոլումը գտան պատերազմի զոհվածների համար կառուցվող կոլեկտիվ հուշահամալիրներում: Կոլեկտիվ հուշահամալիրների կամ առանձին արձանների տեսքով Հայաստանում տեղադրվում էին պատերազմի հերոսների և զոհվածների հուշարձանները: Դրա համար հիմք էր ծառայում 1978թ. ընդունված «Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին» օրենքը:

Դրանում նշվում էր, որ «Պատմության և կուլտուրայի հուշարձանները մարմնավորում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, քաղաքացիական կռիվների և Հայրենական մեծ պատերազմի նշանավոր իրադարձությունները, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության աշխատանքային սխրանքները, մեր երկրի ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, խորհրդային ժողովրդի հերոսական պայքարը սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար»[24]: Այդ օրենքով ընգծվում էր նաև պատմության և մշակութային հուշարձանների շրջանակները, որոնք վերաբերում էին ժողովրդի կյանքի կարևոր պատմական իրադարձություններին, հասարակության և պետության զարգացման, հեղափոխական շարժման, հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, քաղաքացիական և հայրենական մեծ պատերազմի, սոցիալական և կոմունիստական շինարարության, միջազգային համերաշխության ամրապնդման, քաղաքական, պետական, ռազմական ականավոր գործիչների, ժողովրդական հերոսների, գիտության, գրականության և արվեստի գործիչների կյանքի հետ կապված շենքերը, կառուցվածքներ, հիշարժան վայրերն ու առարկաները[25]: Օրենքը կարգավորում էր նաև պատմության և մշակութային հուշարձանների պահպանության, վերականգնման, օգտագործման ապահովումը և հողհատկացումները, որոնք իրավասու էին կատարել պատգամավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների գործադիր կոմիտեները՝ իրենց օրենքով վերապահված իրավունքների սահմաններում[26]: Այսպիսով, խորհրդային շրջանում հանրային տարածքներում պատերազմի հուշարձանների տեղադրումը տեղի էր ունենում պետության անմիջական միջամտությամբ և վերահսկողությամբ՝ ելնելով խորհրդային գաղափարախոսության սկզբունքներից: Այդ հարցում միակ դերակատարը համարվում էր պետությունը, իսկ հանրությունը այդ գործընթացի վրա շատ քիչ ազդեցություն ուներ:

---

24 Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին Հայկական ՍՍՀ օրենքը, ընդունված 01.03.1978, https://www.irtek.am/views/act.aspx?tid=2319&sc=p4#p4

25 Նույն տեղում

26 Նույն տեղում

Արցախյան ազատամարտի հուշարձանացումը և պետությունը

Ի տարբերություն խորհրդային շրջանի, Հայաստանի անկախացումը և Արցախյան առաջին պատերազմի գործոնն իր ազդեցությունները թողեցին պատերազմի հուշարձանացման լանդշաֆտի բովանդակության, տեղադրման վայրերի, դրանց վերակազմակերպման, իրականացնող դերակատարների, հանրության մասնակցության և ազդեցության փոխակերպումների վրա: Մասնավորապես, 1989-1994թթ. Արցախյան ազատամարտի, հայ-ադրբեջանական զինված ընդհարումների և հետագա սահմանային բախումների հետևանքով հուշարձաններ կառուցվեցին՝ նվիրված զոհված հայ ազատամարտիկների և զինծառայողների հիշատակին: Ազգային զարթոնքի այդ տարիներին Հայաստանի հանրությունը դարձավ հուշարձանների տեղադրման կարևոր դերակատար[27]: Պետության քաղաքականությունը միտված չէր արգելելու առանձին անհատների և խմբերի կողմից հուշարձանների կառուցման նախաձեռնությունները, դրանով կարևորելով ազգային ինքնության և հերոսականության ձևավորման խնդիրները: Սակայն պետության վարած քաղաքականության արդյունքում Արցախյան պատերազմի հուշարձանային լանդշաֆտը բովանդակային առումով շարունակեց կրել խորհրդային համատեքստը, քանի որ զոհված ազատամարտիկների հուշարձանների հիմնական մասը հայտնվեց Հայրենական մեծ պատերազմին նվիրված հուշարձանների կողքին: Այս դեպքում «թշնամու դեմ պայքարում նահատակված հերոսների» հուշարձանները ոչ թե վերաիմաստավորվում են, այլ տեղի է ունենում իմաստի «կրկնապատկում»[28]: Պետության վարած քաղաքականության արդյունքում, Հայրենական մեծ պատերազմին նվիրված և նրա կողքին կառուցված Արցախյան ազատամարտի որոշ հուշահամալիրներ ընդգրկվեցին Հայաստանի Հանրապետության կողմից պահպանվող հուշարձանների

---

27 Г. Атанесян. Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, էջ 31-36:

28 Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան, Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Հայաստանի բոնաճնշումների հուշարձանացումը, Ստալինյան բոնաճնշումները Հայաստանում, պատմություն, հիշողություն, առօրյա, Եր., 2015, էջ 281:

ցանկում և ձեռք բերեցին հանրապետական նշանակության հուշարձանի կարգավիճակ: Դրանց թվին է պատկանում, օրինակ, Տավուշի մարզի Կիրանց գյուղում 1996 թ. կառուցված հուշահամալիրը, որտեղ տեղադրված են նաև Կիրանց և Աճարկուտ գյուղերից զինվորական ծառայության կամ պատերազմի մեկնած, ինչպես նաև Կիրանց գյուղի մարտերում զոհվածների հուշաքարերը[29]: Պետության կողմից հանրապետական նշանակության կարգավիճակ են ստացել նաև Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի զինվորական պանթոնը[30], Կոտայքի մարզի Պոռշյան[31], Արարատի մարզի Նոր Այգեստան[32], Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքների հուշահամալիրները, որտեղ ամփոփված են նաև արցախյան պատերազմի զոհվածները[33]: Հետխորհրդային Հայաստանում պետության ու համայնքային իշխանությունների նախաձեռնություններով մեծաթիվ բնակավայրերում Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիրների տարածքները համալրվեցին արցախյան ազատամարտի զոհերի շիրիմներով ու խմբային հուշարձաններով, իսկ շատ դեպքերում Արցախյան ազատամարտի հիշողությանը նվիրված հուշարձանները տեղադրվեցին Հայրենական պատերազմի հաղթանակին նվիրված հուշարձանների կողքին: Երկու պատերազմներում տարած հաղթանակների ու նույն

---

29 Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 30 դեկտեմբերի 2004թ. N1929Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13320 (16.05.2024):

30 Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 29 մայիսի 2002թ. N628, http://www.irtek.am/views/act.aspx?aid=18583 (16.05.2024):

31 Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 24 դեկտեմբերի 2003թ. N17-93Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757 (16.05.2024):

32 Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելումասին, 24 հունվարի 2002թ. N65 http://www.irtek.am/views/act.aspx?aid=15615 (16.05.2024):

33 Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու, 9 հունվարի 2003, N80-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37837 (16.05.2024):

համայնքի տարբեր սերունդների ներկայացուցիչների՝ հանուն հայրենիքի արված զոհաբերության հիշատակումը միևնույն տարածքում խորհրդանշանային կարևորում ստացավ նաև պետական Տոնացույցում արված կարևոր համալրման միջոցով: Անկախ Հայաստանում մայիսի 9-ին նշվում է Հաղթանակի և խաղաղության օրը՝ տոնելով Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձը:

Արցախյան առաջին պատերազմի հուշարձանացման հետագա գործընթացն անցավ պետության անմիջական վերահսկողության տակ, և պետությունը գերազանցապես շարունակեց մնալ հուշարձաններ տեղադրող հիմնական դերակատարը: Այդ գործընթացը կարգավորվում էր 1998 թ.-ին ընդունված ՀՀ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենքով»[34] և այնուհետև 2002 թ.-ին ընդունված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգման և օգտագործման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումով»[35]: Համայնքային լանդշաֆտում իրականացվող նոր հուշարձանների տեղադրումը գտնվում էր տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկողության ներքո, որն, ըստ նրանց, պետք է բխեր ընդունված քաղաքաշինական նորմերից: Այդ գործընթացը կարգավորվում է 2002 թ.-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ պետք է տեղի ունենա համայնքային սեփականության հողի վրա տեղադրվող հուշարձանների թույլտվությունը և դրա համար նախատեսվող ֆինանսական հատկացումները: Այդ օրենքով է կարգավորվում նաև

---

34 Տե՛ս Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքը, ընդունված է Ազգային ժողովի կողմից, 11 նոյեմբերի 1998թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=38019 (16.05.2024):

35 Տե՛ս Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգման և օգտագործման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության որոշումը ընդունված 20 ապրիլի 2002թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=22601 (16.05.2024):

Արցախյան պատերազմի զոհվածների անունով համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հաստատությունների անվանակոչումը և անվանափոխումը: Օրենքով նախատեսված կարգով տեղական ինքնակառավարման մարմինները կարող են այդ հարցում մտցնել որոշակի սահմանափակումներ[36]: Իշխանությունների կողմից օրենքի կիրառումը հիմք հանդիսացավ պատերազմի հուշարձանների համայնքային լանդշաֆտի վերահսկման համար և հանրության նախաձեռնություններն այդ հարցում սկսեցին նվազել: Տեղական ինքնակառավարման մարմինները հատկապես քաղաքային բնակավայրերում, փաստարկելով քաղաքաշինական նորմերը, խուսափում էին հանրային վայրերում անհատների նախաձեռնությամբ Արցախյան առաջին պատերազմի զոհվածներին նվիրված հուշարձանների տեղադրումից: Դրանք կառուցվում էին տեղական մարմինների անմիջական վերահսկողությամբ: Այդպիսի հուշակոթողներ բացվեցին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: Օրինակ, Դավիթաշեն համայնքում 2015 թ. բացվել է արցախյան առաջին պատերազմում համայնքից զոհվածների հուշահամալիրը: Կոթողը տեղադրվել է վարչական շրջանում գտնվող Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի հարևանությամբ: Հուշաձանի բացմանը մասնակցել է Երևան քաղաքի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ԵԿՄ վարչական նախագահ Մանվել Գրիգորյանը, համայնքի ղեկավարը, Ֆրանսիայի Անտոնի քաղաքի քաղաքապետ Ժան-Իվ Սենանին[37]:

Ինչ վերաբերում է Արցախյան ազատամարտի հերոսներին ու զոհերին նվիրված անհատական հուշարձանների նախաձեռնություններին, ապա տեսնում ենք, որ պատերազմի զոհերին նվիրված անհատական հուշաղբյուրներն ու հուշակոթողները գերազանցապես հայտնվեցին նրանց բնակության վայրերի տարածքներում ու հանդիսանում էին նրանց հարազատների անհատական ու նեղ խմբային վշտի խորհրդանշանային արտահայտումն ու հարգանքի տուրքը:

---

36 Տե՛ս ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060 (16.05.2024):

37 Երևանում բացվել է Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը, https://www.1in.am/1740061.html, (16.05.2024):

Չնայած նրան, որ Արցախյան ազատամարտի բոլոր զոհերին և՛ հանրային, և՛ պաշտոնական դիսկուրս հարթություններում ներկայացնում ու հիշատակում էին որպես «հերոսներ» ու «նահատակներ», տեսնում ենք, որ Արցախյան առաջին պատերազմի հերոսների հուշարձանացման պետական նախաձեռնությունները հիմնականում նվիրված են պետության կողմից պաշտոնապես հերոսների և զինվորական բարձր կոչումների արժանացած զինվորականներին: Այդպիսի հուշարձաններ բացվեցին Հայաստանում և Արցախում (օրինակ, Մոնթե Մելքոնյան, Ձիվան Աբրահամյան, Մովսես Գորգիսյան, Թաթուլ Կրպեյան, Գեղազնիկ Միքայելյան և այլք): Դրա հիմքում ընկած էր պատերազմի հերոսականացման դիսկուրսը, որը ձևավորվում էր պետության կողմից և այն լրատվամիջոցներով ներկայացվում էր հասարակության լայն զանգվածներին: Հերոսների շրջանակը շատ փոքր էր և նրանց հուշարձանացումը պետության կողմից անցնում էր կանոնակարգված որոշակի գործընթացի միջով: Բացի այդ, ի տարբերություն անհատական մյուս հուշարձանների, այս հերոսներից մեծ մասի հիշատակին նվիրված հուշարձաններ հայտնվում էին նաև իրենց բնակավայրերից դուրս գտնվող այլ համայնքների հանրային տարածքներում:

Այսպիսով, Արցախյան առաջին պատերազմի տարիներին ու դրա ավարտից անմիջապես հետո պատերազմի զոհերին նվիրված հուշարձանների հանրային ինքնաբուխ նախաձեռնությունների իրականացումից որոշ ժամանակ անց հետխորհրդային Հայաստանի հուշարձանային լանդշաֆտի ձևավորման հիմնական դերակատար հանդես եկավ պետությունը, որը գործող օրենքների միջոցով կարգավորում էր այդ գործընթացը՝ ազատամարտի հիշողությունը դարձնելով հիշողության պետական քաղաքականության առանցքային գործոններից մեկը:

Պատերազմի հուշարձանացման պաշտոնական դերակատարները

Պատերազմի դեպքում հիշողությունը առավել սուր քաղաքական համատեքստ է ստանում, և շատ կարևոր է դառնում հետևել իշխող քաղաքական իշխանությունների կողմից պատերազմի հիշատակման ու մո-

ռացման որդեգրած քաղաքականության դրսևորումներին[38]: Հիշողության քաղաքականությունը գործ ունի ոչ թե անցյալի ու նրա հիշողության, այլ պատմական անցյալի վերաբերյալ հանրային ընկալումների ու պատկերացումների հետ: Կառուցելով, վերարտադրելով ու տարածելով հավաքական անցյալի որոշ մեկնաբանություններ ու մոռացության մատնելով մյուսները՝ իշխող վերնախավի ներկայացուցիչները հետապնդում են քաղաքական նպատակներ՝ խնդիր դնելով լեգիտիմացնել սեփական իշխանությունը, ամրապնդել համայնքի համերաշխությունը, արդարացնել կայացվելիք որոշումները և մոբիլիզացնել ընտրազանգվածի աջակցությունը[39]:

Պատերազմում պարտություն կրած պետության հիշման ու մոռացման գործընթացների պարտականությունները հիմնականում ընկնում են պարտված քաղաքական ռեժիմին փոխարինման եկած քաղաքական նոր վերնախավի ուսերին. վարելով հիշողության նոր քաղաքականություն՝ նոր իշխանությունները փորձում են վերաիմաստավորել պատմական բարդ իրադարձություններն ու համախմբել հանրությանն ապագայի նոր տեսլականի շուրջ:

Այլ իրականության հանդիպեցինք հետպատերազմական Հայաստանում. 44-օրյա պատերազմի ընթացքում իշխանության գլուխ կանգնած քաղաքական ուժը ոչ միայն չհեռացավ հայկական կողմի պատերազմում կրած պարտությունից հետո, այլև արտահերթ ընտրությունների միջոցով վերարտադրվեց և լեգիտիմացրեց երկրի ապագային ուղղված իր նոր ռազմավարության իրականացումը:

ՀՀ քաղաքական էլիտան նոր քաղաքականություն է սկսել վարել հետպատերազմական իրավիճակում երկրի ապագայի կառուցման հարցում, որի համատեքստում էլ անհրաժեշտ է դիտարկել վերջին տարիներին իրականացվող հիշողության պաշտոնական քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է խաղաղության նոր օրակարգ՝ առաջարկելով տարածաշրջանի բոլոր երկրներին կարգավորել

---

38 В. Ачкасов. «Политика памяти» как инструмент строительства постсоциалистических наций, Журнал социологии и социальной антропологии, 16(4), էջ 106:

39 О. Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, էջ 9:

հարաբերությունները և համագործակցել. ՀՀ-ն ներգրավվել է Ադրբեջանի հետ խաղաղության բանակցություններում ու նպատակ ունի կնքել խաղաղության պայմանագիր՝ «ապագա սերունդների համար խաղաղ համակեցության դարաշրջանը հնարավոր դարձնելու համար»[40]: Հետպատերազմական Հայաստանը շահագրգռված է նաև Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմամբ և սահմանների ու հաղորդակցուղիների բացմամբ և առանց նախապայմանների ներգրավվել է բանակցությունների մեջ: Հայաստանի Հանրապետության նոր տեսլականը լավագույնս արտահայտված է «Խաղաղության խաչմերուկ» նախագծում, որը պետք է արտահայտվի հետևյալ կերպ. տարածաշրջանի բոլոր երկրներն ապրում են բաց սահմաններով, ճանապարհներով և ենթակառուցվածքներով, կապված են ակտիվ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերով, կուտակել են բոլոր հարցերը դիվանագիտության և երկխոսության գործիքներով լուծելու փորձ ու ավանդույթ:

ՀՀ իշխանությունների կողմից 44-օրյա պատերազմին տրվող գնահատականը, Արցախյան ազատամարտի ու առաջին պատերազմում տարած հաղթանակի վերահիմաստավորումն ու նոր պատերազմի հուշարձանացման պրակտիկաները անհրաժեշտ է քննարկել ՀՀ քաղաքական վերնախավի կողմից առաջքաշված խաղաղության օրակարգի և հարևանների հետ վերակառուցվող ապագայի տեսլականի համատեքստում:

Եռաբլուր զինվորական պանթեոնը դարձավ Արցախյան երկրորդ պատերազմի խորհրդանշանային արտահայտումը դեռ պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո: Հայաստանյան ՁԼՄ-ները և սոցիալական ցանցերը անդադար անդրադառնում էին Եռաբլուրում օրեցօր ավելացող նոր շիրիմներին ու զոհվածների սգացող հարազատներին: Պատերազմից հետո Եռաբլուրը պատերազմի հիշատակման առաջնային նշանը դարձավ նաև իշխանության ներկայացուցիչների համար (նկար 1): 2020 թ. դեկտեմբերի 19-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտին հաջորդած 40-րդ օրը, ՀՀ կառավարության նախաձեռնած անդրանիկ հանրային միջոցառումն անցկացվեց հենց Եռաբլուր զինվորական

---

40 ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ելույթը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանում, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18, (09.05.24):

պանթեոնում, որտեղ վարչապետը պատերազմի զոհերի հիշատակին եռօրյա սուգ հայտարարեց[41]:

Եռաբլուր զինվորական պանթեոնը հետագայում նաև դարձավ ՀՀ իշխանությունների կողմից պատերազմի հիշատակման քաղաքականության նախընտրելի հիմնասյունը. սուբվենցիոն ծրագրերի միջոցով կառավարությունը սկսեց ֆինանսավորել ՀՀ այլ համայնքներում զոհվածների միանման շիրիմների տեղադրմամբ զինվորական գերեզմանների կառուցման ծրագրերը, որոնք հիմնականում սկսեցին դրսևորվել տարբեր համայնքներում զինվորական պանթեոնների տեսքով՝ հաճախ կրկնօրինակելով Եռաբլուրի հիշատակման պրակտիկաները:

Կյանքի զբոսայգու կառուցման նախագծի ընդունումը դարձավ ՀՀ իշխանությունների կողմից պատերազմի զոհերի հիշատակման հաջորդ կարևոր ծրագիրը, որի մասին 2021 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության 30-ամյակին, հայտարարեց վարչապետ Փաշինյանը: Նախագիծը նախատեսում է արցախյան բոլոր պատերազմների զոհերի կենդանությունն ու ներկայությունը խորհրդանշող ծառեր տնկել, իսկ, Փաշինյանի խոսքերով, «պուրակի կուլմինացիան կլինի Կենաց ծառը, մեր բոլոր նահատակներին և հայրենիքին տված նրանց կյանքը խորհրդանշող: Դա չի լինելու հուշակոթող, դա լինելու է կենաց պուրակ, որտեղ վազվզելու, աղմկելու, խաղալու են երեխաները, երիտասարդները ժամանց են ունենալու, մեծահասակները ճեմելու են ու զրուցելու, և այդ պուրակը լինելու է նրա մասին, որ ահա այդ բոլոր մարդկանց, այս բոլոր մարդկանց՝ Հայաստանի ու Արցախի ապրելու համար են զոհվել նրանք»[42]: Տեսնում ենք, որ պատերազմի հիշատակմանն ուղղված պետական երկրորդ խոշոր նախագիծը նույնպես չի նախատեսում հանրային վայրում հուշարձանի տեղադրում, իսկ Ղարաբաղյան բոլոր պատերազմների հիշողությունները մեկնաբանվում ու ներկայացվում են որպես շարունակական պայքար ու զոհողություն՝ Հայաստանի խաղաղ ապագայի կերտման համար:

---

41 Լ. Խառատյան, Գ. Շագոյան, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, էջ 20:

42 ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում https://www.youtube.com/watch?v=IbVaV9Mekkc, (09.05. 24):

Հայաստանյան քաղաքական վերնախավի մոտեցումը պատերազմի հուշարձանացման պրակտիկաներին հստակ արտահայտում ստացավ վարչապետի 2024 թ. մի ելույթում. սիսիանցի աշակերտների հետ հանդիպման ժամանակ մասնավորապես ասել է. *«Ուր գնում ենք, ասում ենք՝ եկեք խաչքար դնենք, խաչքար դնենք... Ինչքա՞ն խաչքար դնենք... Եկեք ամեն մեկի վզից մի խաչքար կապենք, ասենք՝ քարշ տվեք, երեխեք, սա ձեր առաքելությունն է... Մեծ խաչքարեր կապենք երեխաների ուրքից, ասենք՝ դե, քարշ տվեք, որովհետև Վարդան Մամիկոնյանի սերունդներն եք դուք: Մեր նահատակները զոհվել են, որ երեխաների վզերից խաչքարերը կախենք, հա՞»*[43]:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչների հետ հարցազրույցների ժամանակ տեղեկացանք, որ պատերազմից հետո ծրագրվել էր բոլոր համայնքներում տեղադրել պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող միանման հուշարձաններ, որը, սակայն, հետագայում չի իրականացվել[44]:

ՀՀ հիշողության քաղաքականության պաշտոնական դերակատարներ են հանդիսանում նաև ՀՀ ՏԻՄ-երը. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավասու են վարելու լոկալ հիշողության քաղաքականություն, որը կա՛մ կարող է կրկնօրինակել համապետական քաղաքականությունը, կա՛մ իրենից կարող է ներկայացնել սեփական համայնքային հիշողության քաղաքականություն՝ կառուցելով լոկալ ինքնության պատումներ և դրանց հիշատակման համապատասխան պրակտիկաներ: Միևնույն ժամանակ, բարդ հիշողության հուշարձանացման ժամանակ համայնքային իշխանությունները կարող են բախվել լոկալ հիշողության քաղաքականության մնեմոնիկ դերակատարների հիշատակման գործունեությանը և ստիպված մտնել նրանց հետ բանակցությունների մեջ՝ լոկալ հուշարձանային լանդշաֆտի վերակառուցման հարցում:

44-օրյա պատերազմի օրերին ու դրա ավարտից անմիջապես հետո պատերազմի հուշարձանների տեղադրման նախաձեռնությամբ հանդես եկան ՀՀ գրեթե բոլոր համայնքները և նրանց ղեկավարները,

---

43 Ինչքա՞ն խաչքար դնենք, հասկացանք. եկեք ամենքի վզից էլ մի հատ խաչքար կապենք, ասենք՝ քարշ տվեք, երեխեք. Նիկոլ Փաշինյան, https://newspress.am/?p=216160&l=am, (09.05.24):

44 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

որոնք այն իրականացնում են՝ համագործակցելով պետական ինստիտուտների, տարբեր կազմակերպությունների և զոհվածների ծնողների հետ: Նման դեպքերում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հուշարձանների տեղադրման համար տարածքները հատկացվում են առանց դժվարության՝ նախատեսված ընթացակարգերով: ՏԻՄ-երի կողմից պատերազմի հուշարձանների տեղադրման շառժառիթները հիմնականում պայմանավորված են համայնքներում զոհվածների մասին հիշողության պահպանման, զոհվածների ու նրանց ընտանիքների նկատմամբ հարգանքի դրսևորման, այլ համայնքների կողմից իրականացվող հիշողության պրակտիկաների կրկնօրինակման ու համայնքների միջև «մրցակցության», հայրենասիրության ուղերձներ փոխանցելու, համայնքի ղեկավարի կարգավիճակի բարձրացման և հետագա քաղաքական կապիտալի ամրապնդման և այլ գործոններով:

Մեր հետազոտության մաս կազմած ՀՀ համայնքներում տեղի իշխանությունները հիմնականում նախընտրություն են տվել զոհվածների միատեսակ շիրիմների կառուցմանը համայնքային հուշահամալիրների, զինվորական պանթեոնների տարածքներում ու խմբային հուշարձանների տեղադրմանը համայնքի հանրային նշանակության վայրերից մեկում՝ հիմնականում կողմ չլինելով զոհվածների անհատական հուշարձանների տեղադրմանը համայնքի հանրային տարածքներում: Վերջիններիս թիվը Արցախյան առաջին պատերազմի հետ համեմատած մի քանի անգամ ավելացել է, որի մասին փաստում են նաև ՏԻՄ-երի ներկայացուցիչները: Մեր այն հարցին, թե *«Իսկ տարբերություն նկատու՞մ եք առաջին և 44-օրյա պատերազմների հուշարձանների միջև»*,- Տավուշի մարզի տեղական ինքնակառավարման մարմնի պատասխանատուն նշեց հետևյալը. *«Այո, հիմա ավելի կոնկրետացած և ավելի մեծ ծավալի բաներ են անում: Նախկինում եղել է մի հատ ընդհանուր խաչքար, հիմա անհատական շատ են անում: Նոյեմբերյանում, օրինակ, անհատական հուշարձաններ չկան, միայն Բերդում է: Դիլիջանում էլ չեմ տեսել, Հաղարծինում, օրինակ, եղել են ամենաշատ զոհերը, բայց անհատական բաներ չկան: Իջևանում մի քանի տեղ կա, Կիրանցում, օրինակ, հանգստի գոտի ու մանկական խաղահրապարակ են սարքում»:*

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ՏԻՄ-ի աշխատակիցներից մեկը համաձայն չէր պատերազմի զոհերի անհատական հուշար-

ձանների տեղադրման հետ՝ հստակեցնելով. *«Ես կողմ եմ ընդհանրական հուշարձաններին, ոչ թե՝ անհատական: Հիմա մենք քաղաքում ունենք Արցախյան հերոսամարտերին նվիրված հուշարձան: Ինքը ամբողջ պատերազմի ընթացքում զոհվածներին, կարող ենք ասել, որ նվիրված է, խորհրդանշում է: Որ ինչ-որ մեկի անունով ենք կառուցում, կարծում եմ, ճիշտ չի: Հիմա էնպիսի իրավիճակում ենք, լավ չի, որ ասում ենք, բայց էլի կունենանք զոհեր»:*

Ինչպես Արցախյան առաջին, այնպես էլ 44-օրյա պատերազմից հետո պատերազմի հիշատակման համայնքային իշխանությունների մոտեցումները հիմնականում չեն փոխվել և շարունակում են հուշարձանների տեղադրումը Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան ազատամարտում զոհվածների հուշահամալիրների տարածքում: Կապանի համայնքապետարանից մեզ հայտնեցին, որ իրենք առաջիններից են եղել, որ նախաձեռնել են համայնքից զոհված զինծառայողների հուղարկավորումը համայնքի հուշահամալիրում՝ մասնավորեցնելով. *«Կապանն առաջիններից է, եթե ոչ առաջինը, որ համայնքը գերեզմանները սարքեց: Մենք այնպես ենք արել, որ զոհվածների փարին լրանալուն պես պատրաստ լինի իրենց գերեզմանը: Համայնքային միջոցներով ենք արել, ոչ թե փոխհատուցումներով»:* Եթե Կապանը դեռ Արցախյան ազատամարտից ուներ զինվորական պանթեոն և նույն տարածքում է հուղարկավորել նաև նոր պատերազմի զոհերին, ապա նույն մարզի Գորիս համայնքում քաղաքային իշխանությունները նոր պանթեոն են կառուցում՝ դեռ պատերազմի ընթացքում հուղարկավորելով համայնքից զոհված զինծառայողներին: Զինվորական պանթեոններին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլխում:

Որոշ համայնքներում պատերազմի հուշարձանացման նախաձեռնությունները հանգեցնում են նրան, որ «պատերազմի զոհերը» և նրանց հերոսացումը ներառվում են պաշտոնական-պետական թևից ձևավորվող ինքնության պատումների մեջ: Այսինքն, պետական-քաղաքական կազմակերպությունները «սեփական տարածքի մեջ» են ներգրավում ինքնության, հերոսականության խորհրդանշանները[45]: Դրանք տեղա-

[45] Հ.Մելքումյան, Հիշողությունից ազգայնականությու՞ն. Խորհրդայինի և հետխորհրդայինի հուշարձանները, էջ 52:

դրվում են վարչական շենքերի մոտ, գյուղապետարանների, մշակույթի տան, դպրոցի, մանկապարտեզի, փոստի հարևանությամբ: Որոշ հուշարձաններ տեղադրվել են կառավարության և համայնքապետարանի ֆինանսական միջոցներով, համայնքի ղեկավարի ներդրումներով: Օրինակ, Տավուշի մարզի Սևքարի գյուղապետարանի աշխատակիցը նշեց, որ իրենց բնակավայրում նոր հուշարձանը տեղադրվել է համայնքի ֆինանսական միջոցներով՝ ղեկավարի անմիջական նախաձեռնությամբ: Ըստ նրա, հուշարձանի տեղանքի ընտրության և նախագիծի հարցում համագործակցել և համաձայնեցրել են զոհվածների ծնողների հետ: Այն տեղադրվել է գյուղի ադմինիստրատիվ շենքերի մոտ, մշակույթի տան, երաժշտական դպրոցի և փոստի անմիջական հարևանությամբ (նկար 2): Հուշարձանի բացմանը ներկա են եղել նաև պետական պաշտոնյաներ՝ բանակի գլխավոր շտաբի ներկայացուցիչներ, մարզպետարանի պատասխանատուներ, դրսից հյուրեր, զոհվածների հարազատները և համայնքի բնակչությունը: Համայնքի ավագանու որոշմամբ այդ հուշահամալիրում շարքային զիվորները և հրամանատարները առանձնացվել են և նրանց համար տեղադրվել է առանձին կիսանդրիներ (մեկը նվիրված է ազգային հերոս Թաթուլ Ղազարյանին, մյուսը՝ բանակի գնդի հրամանատարին): Հուշարձանացման այս աստիճանակարգված մոտեցումը, ըստ հարցման արդյունքների, միանշանակորեն չի ընդունվել համայնքի բնակիչների կողմից. այդ առումով զոհվածի ընտանիքներից մեկի անդամը նշեց հետևյալը. *«Մենք գյուղում ունենք 4 զոհ, բայց արձան տեղադրվել է 2-ի համար: Երկուսի անունն ուղղակի գրված է: Իմ ամուսնու անունը գրված է, արձանը չկա: Իմ ամուսինը պայմանագրային էր: Ում արձանը տեղադրել են, ազգային հերոս էր, հրամանատարն է եղել մեր մարզից: Մյուսը փոխգնդապետն է եղել»:* Իսկ, մեր կողմից տրված *«Տեղյակ եք, թե ինչպե՞ս է որոշվել, որ այդպես տարբերակված են դրել»* հարցին, արտահայտեց հետևյալ կարծիքը. *«Չեմ հասկանում՝ ով է որոշել, ինչ են արել, ես դեմ էի, որ տարբերակում դրեցին: Էս դեպքում բոլորն էլ իրենց ամենաթանկն են տվել՝ կյանքը, վերջին պահին որ տարբերակում են, դա, իհարկե, սխալ է: Որ լսեցինք, թե երկուսի արձանն են դնելու, մեր ընտանիքն ու մյուս շարքային զինվորի հայրը, ասացինք, որ եթե գումարի հարցն է, մենք պատրաստ ենք մեր գումարը տրամադրենք, ինչ անում եք, հավասար արեք: Բայց չարեցին: Չեմ*

հասկանում՝ ինչ էր: Ու ծրագիրն էլ որ ավարտվեց, միջոցառում արեցին: Ջինուժից եկան, նկարեցին: Ու մեկնաբանումն էնպես էր, որ ունեն զոհեր ու անընդհատ շեշտվում է էդ երկուսի անունը: Վերջում ոնց որ զոռով ասում են՝ դե, գյուղում էլի կան զոհեր ու երկուսի անունն են տալիս»:

Հետազոտության արդյունքների համաձայն, հուշարձանների տեղադրման հարցում որոշակի համագործակցություն է ծավալվում պետության-տեղական ինքնակառավարման մարմինների-համայնքի ղեկավարի, պետական հիմնարկի, բարեգործների-զոհվածների ընտանիքների միջև: Համայնքի ղեկավարի, պետական հիմնարկի (երաժշտական դպրոց), զոհվածի ընտանիքների համագործակցության օրինակ է Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքում տեղադրված հուշարձանը: Այդ պուրակը կառուցվել է համայնքի ղեկավարի ֆինանսական ներդրումներով, որտեղ յոթ զոհվածների անունով բացվել է հուշատախտակ, որից երկուսը՝ քառօրյա, հինգը՝ 44-օրյա պատերազմի ընթացքում (նկար 3): Նախաձեռնությունը եղել է դպրոցի աշխատողներինը, ովքեր սկզբից մաքրել են այդ տարածքը և ցանկացել են պուրակ կառուցել, բայց 44-օրյա պատերազմից հետո ավագանու որոշմամբ այն անվանակոչվել է զոհվածների անունով: Այնուհետև զոհվածի ծնողներից մեկը, գյուղապետարանից թույլտվություն է ստացել և այդտեղ տեղադրել զրուցարան, իսկ մյուս զոհվածի ծնողը ցայտաղբյուր է կառուցել, իսկ շատրվանը բացվել է գյուղապետարանի միջոցներով: Նույն մարզի Վաղաշեն գյուղում 44-օրյա պատերազմի զոհերի համար, ինչպես նշեց վարչական ղեկավարը, միասնական հուշարձան կառուցվել է ծնողների, համայնքի, դրսի բարերարի ֆինանսական աջակցությամբ. *«Ամենքը մի բանով օգնել է: Օրինակ, մի հարուստ ասել է՝ էս նստարանները իմ կողմից, համայնքը ասել է՝ էս լույսերը իմ կողմից: Ով ինչով կարողացել է, բայց հիմնականում ծնողներն են իրենց միջոցներով արել՝ այս տապանաքարերը Հնդկաստանից են բերել, հետևում քառատողեր կան գրած: Էն ժամանակ ես էլ կոմունալի տնօրենն էի, մենք մեր աշխատակազմով էս հուշաղբյուրի ջուրը բերեցինք, էս էլ մենք սարքեցինք»:* Այսպիսի նախաձեռնությունները հանրության մոտ նպաստում են վարչական ադմինիստրացիայի հեղինակության ամրապնդմանը:

Մյուս հասատությունները, որտեղ շատ են տեղադրվում վերջին պատերազմի զոհվածների համար հուշարձաններ, դպրոցներն են, որոնք

Երևանում գտնվում են քաղաքապետարանի, իսկ մարզերում՝ մարզպետարանների իրավասության տակ: Դպրոցները հուշարձանների տեղադրման համար հանդես են գալիս նախաձեռնությամբ, որը, առաջին հերթին, պայմանավորված է զոհվածի այդ հաստատության սան լինելու հանգամանքով: Դրա համար որպես շարժառիթ է ծառայում զոհվածի հիշատակի հավերժացումը, իսկ տարածքի ընտրությունը՝ որպես մյուս աշակերտների համար հայրենասիրական և դաստիարակչական նշանակություն ունեցող գործառույթ: Հուշարձանի տարածքի տրամադրման թույլտվության համար դպրոցը դիմում է տեղական ինքնակառավարման մարմիններին, և դրանք հիմնականում տեղադրվում են դպրոցի մուտքի մոտ և բակի առավել տեսանելի հատվածում: Այդ «հերոսական» լանդշաֆտի կառուցման, «հերոսական» կերպարի ստեղծման «տեքստը» ուղղված է աշակերտներին և այն դառնում է «ինքնության» ձևավորման միջոցներից մեկը[46]: Այդ առումով, Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի դպրոցի տնօրենը պատմեց բակում 44-օրյա և արցախյան առաջին պատերազմում զոհված 3 սաների նվիրված հուշարձանի տեղադրման մասին: Նախաձեռնությունը եղել է դպրոցինը, որին միացել է համայնքապետարանը և ֆինանսավորել է այն: Արցախյան 44-օրյա պատերազմի զոհվածի համար նրա հարազատները համայնքապետարանից թույլտվություն ստանալուց հետո, իրենց միջոցներով դպրոցի պատին նաև նկար են փակցրել: Դպրոցի նախաձեռնությամբ զոհվածների նվիրված դասասենյակ է բացվել: Նույն մարզի Մարտունի քաղաքի առաջին դպրոցի բակում նույնպես բացվել է հուշարձան, որի նախաձեռնությունը եղել է դպրոցի զինղեկինը, ով մասնակցել էր պատերազմին, և դպրոցի տնօրենինը: Այն տեղադրվել է դպրոցի, համայնքապետարանի և բնակիչների անմիջական համագործակցության և նյութական աջակցության միջոցով: Դպրոցների տարածքներում պատերազմի հիշողության խորհրդանշանային արտահայտման ու զոհերի հիշատակման պրակտիկաներին առավել մանրամասն կանդրադառնանք աշխատանքի հաջորդ գլխում:

Այսպիսով, ՀՀ իշխանությունները հանդիսանալով հիշողության քաղաքականության պաշտոնական դերակատար՝ հետպատերազմա-

---

46 Հ. Մելքումյան, Հիշողությունից ազգայնականությո՞ն. Խորհրդայինի և հետխորհրդայինի հուշարձանները, էջ 52:

կան շրջանում ձևակերպել են պատերազմի հիշման ու հիշատակման իրենց մոտեցումները, դրանց համայնքային դրսևորումները բանակցելով ՏԻՄ-երի հետ՝ պատերազմի հիշատակման մյուս դերակատարների ու նրանց կողմից իրականացվող նախաձեռնությունների քննարկման հարցը թողնելով համայնքային իշխանություններին: ՀՀ ՏԻՄ-երն ունենալով պատերազմի հուշարձանացման սեփական մոտեցումներն ու նախընտրությունները՝ պատերազմի զոհերի հիշատակման գործընթացը քննարկում ու բանակցում են պետության, զոհվածների ծնողների, բարեկամների ու բարերարների հետ:

Պատերազմի հուշարձանացման ոչ պաշտոնական դերակատարները

Պետությունից ու ՏԻՄ-երից զատ Արցախյան 44-օրյա պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման դերակատարներ են հանդես գալիս նաև զոհվածների ծնողները, բարեկամները, նրանց հարևանները, ընկերները և համայնքի բնակչությունը: Այդ նախաձեռնությունները լայն տարածում են գտել համայնքներում, որտեղ զոհվածների շենքերի բակերում, փողոցներում և այլ տեղանքներում բացվում են զոհվածներին նվիրված հուշաքարեր, ցայտաղբյուրներ, մատուռներ, տաղավարներ, գրաֆիտիներ և այլն: Ի՞նչն է պատճառը, որ տարիների ընթացքում ձևավորված ու կայացած հուշարձանացման ոլորտում՝ նրա պատասխանատու պետական մարմիններից զատ պատերազմից հետո հայտնվեցին նաև հուշարձանացման այլ դերակատարներ՝ հանրությանը ներկայացնելով պատերազմի հիշման ու զոհերի հիշատակման սեփական մոտեցումներն ու պրակտիկաները: Բացի այդ, անհրաժեշտ է հասկանալ նաև, թե ինչպես են այս դերակատարները համագործակցում հուշարձանացման գործընթացի այլ դերակատարների հետ:

Նախևառաջ, տեսնում ենք, որ զոհվածների ընտանիքի անդամները, հարազատները, ի տարբերություն պետական մոտեցման, որտեղ նախապատվությունը տրվում է պատմական տարբեր իրադարձությունների ժամանակ զոհվածների միասնական հուշարձանների տեղադրմանը, ձգտում են անհատականացնել իրենց զոհվածների հիշատակումը,

ընդգծել նրանց հերոսացումը, հոգեպես և ֆիզիկապես մատչելի դարձնել նրանց հուշարձանների հետ հաղորդակցումը: Զոհվածի հարազատները տեղադրված այդ հուշարձանների միջոցով ցանկանում են լուծել համայնքում նրանց շարունակական «ապրեցնելու» և մոռացության չմատնելու խնդիրը: Կարևորվում է նաև զոհվածների միջին տարիքը, որն ի համեմատ Արցախյան ազատամարտի, շատ ցածր է. պատերազմի զոհերի մի մեծ մասը ժամկետային զինծառայողներ են, որոնք բանակ էին զորակոչվել 18 տարեկան հասակում: Ժամանակից շուտ կյանքից հեռացած երիտասարդներին «ապրեցնելու» եղանակներից մեկն է հանդիսանում նրանց հիշատակին հանրային հուշարձանների տեղադրումը[47]: Նմանօրինակ պրակտիկաներ են կիրառվում նաև երիտասարդների՝ դժբախտ պատահարների, վթարների և այլ տրավմատիկ դեպքերում մահանալու ժամանակ (հուշաղբյուրներ են տեղադրվում բնակության վայրերում, հուշարձաններ՝ վթարի վայրերում)[48]:

Զոհվածների հարազատների կողմից հուշարձանների տեղադրման մեկ այլ կարևոր գործոն է նշվում հատկապես պետության կողմից զոհված զինծառայողներին տրվող փոխհատուցումները, որոնք, ինչպես նշել են մեր բոլոր հարցվողները, օգտագործվել են միայն հուշարձանների, մատուռների ու այլ կոթողների կառուցման վրա: Ինչպես արդեն նշել ենք, Ապրիլյան քառօրյա պատերազմից անմիջապես հետո, օրենսդրական նոր նախագծով ռազմական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների ծնողներին հիմնադրամը պետք է հատկացնի 10 մլն դրամ փոխհատուցում: Այս գումարները խթան հանդիսացան զոհվածների ծնողների կողմից անհատական հուշարձանների տեղադրման պրակտիկայի տարածմանը:

«Էդ զահրումար գումարը որ տալիս էին, ամուսինս չէր ուզում ստանա: Որ տվեցին, փեսայիս լիազորագիր տվեցինք, սարքեց թղթերը, ասեցինք՝ լավ, որ չես ուզում, ինչի՞ թողնենք պետությանը, ինչ-որ մի բան սարքենք երեխու համար: Բանկից փոխանցեցինք քարի ու երկաթի

---

47 M. Klaassens. Roadside Memorials: Public Places of Public Greaf, URSI research conference 2007, էջ 12-14:

48 Ն. Մարգարյան, Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ: Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային VIII գիտաժողով, Գյումրի, 2010, էջ 48-53:

համար: Էդքանը հերիքեց: Դե, մնացածն էլ վարկ ենք վերցրել, 29-ին երեխուս վերադարձի օրն ա, տեսնենք՝ կհասցնի գոնե գմբեթը հանի»[49]*:*

Տավուշի մարզի մեկ այլ գյուղում՝ Աճարկուտում, մեզ տվեցին նմանատիպ պատասխան. Ձոհված զինվորի մայրը մասնավորապես նշեց. *«Հետո որ էդ գումարը տվեցին, ասեցի՝ էդ գումարը մեր տուն չբերեք, ես չտենամ էդ գումարը: Ու տեղում հենց որոշեցինք, որ պուրակ պետք ա սարքենք: Բայց դրանից կրկնակի անգամ շատ է ծախսվել»*[50]*:*

Մեր կողմից իրականացված բոլոր հարցազրույցներում զոհվածների ծնողները նշում էին, որ իրենք չեն ցանկացել վերցնել փոխհատուցումները՝ հստակեցնելով, որ իրենց *«զավակների կյանքը գին չունի»*, և որ միայն համաձայնվել են վերցնել գումարները՝ հուշարձաններ կառուցելու նպատակով: Բացի այդ, նկատել ենք, որ նման մոտեցումը կարծես այդ գումարների ծախսման ամենաընդունելի տարբերակն է զոհվածների ծնողների համար, իսկ այլ նպատակներով այդ փոխհատուցումների ծախսը հիմնականում մեկնաբանվում էր բացասական երանգավորմամբ:

«Կան, մարդիկ կան ավտո են առել էդ փողերով, իրանց վրա են ծախսել, իրանց գործն ա: Ես իմ տղու համար նենց հիշատակ պետք է թողնեմ, որ դարեր մնա: Ես պիտի եկեղեցի կառուցեմ՝ Արմենի անունով»,- նշեց մեզ հետ հարցազրույցում Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղի բնակիչը՝ խոսելով հուշարձանացման խնդիրների ու ֆինանսական ծախսերի մասին[51]: Մեր կողմից գրանցված դեպքերից միայն մեկում էր զոհվածի կինը փոխհատուցման գումարը ծախսել որդիների համար բնակարանի գնման նպատակով՝ այլ ոչ թե ամուսնու հիշատակին հուշարձան տեղադրելու: *«Էն մի երեխու համար բիսեղկա են կառուցել գյուղի ծայրամասում, իր հայրիկը: Ուրիշ ժառանգ չունեն, մի աղջիկ է ամուսնացած: Դե, գիտեք, որ պետությունը գումարը տրամադրում է, էդ գումարը ոչ մեկ ուրիշ ձև չի կարա օգտագործի: Իրանք նախընտրել են էդ տարբերակը, որ սենց թե նենց էդ գումարը չեն կարա իրանք ինչ-որ մի ձև ծախսեն, գոնե հուշ կմնա իրանց երեխուց: Բայց ես 2 տղա ունեմ, ու էդ գումարը տրամադրել եմ, որ հիպոթեքով տուն ձևակերպեմ»*,-հստակեց-

---

49 ԴԱՆ, Տավուշի մարզ, գ. Աչաջուր, 2022:

50 ԴԱՆ, Տավուշի մարզ, գ. Աճարկուտ, 2022:

51 ԴԱՆ, Սյունիքի մարզ, գ. Լեռնաձոր, 2022:

րեց Տավուշի մարզի Սևքար գյուղից պատերազմում զոհված՝ կինը մեզ հետ զրույցում[52]:

Պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման այլ շարժառիթներից են հանդիսանում նաև նրանց ծնողների կամ բարեկամների տեսած երազները կամ նրանց երեխաների՝ իրենց հայրենի բնակավայրում հուշարձան կամ եկեղեցի ունենալու ցանկությունները: Այսպիսով, հուշարձանի կառուցման նախաձեռնությունն առավել սակրալացվում է ծնողի ու զոհված զավակի միջև եղած միստիկ կապի միջոցով, ով էլ և իրականում «պահանջել» է հուշարձանի/եկեղեցու կառուցումը: Այս պրակտիկան շատ տարածված է նաև բարերարների կողմից եկեղեցաշինության ոլորտում[53]: Տավուշի մարզի Աչաջուր գյուղում զոհված՝ հիշատակին կառուցված մատուռի (նկար 4) մասին պատմելիս զոհված՝ մայրը մանրամասնեց. *«Ինքը սիրում էր, որ գյուղում եկեղեցի լինի, ասում էր, որ ես լավ մարդ դառնամ՝ կգամ, կվերանորոգեմ Սուրբ Հովհաննեսը, որպեսզի մարդիկ գյուղում գնան մոմ վառեն, Մակարավանք չբարձրանան: Ու աղջիկս ասեց՝ եթե Աստծո կամքը երեխուն ողջ գտնենք, ժամը կվերանորոգենք, ինչ ունենք-չունենք, կծախենք, ժամը կվերանորոգենք, ու Շիրակիս երազանքը կկատարվի: Միշտ ուզում էր գյուղում եկեղեցի լինի ու քաղաքում տուն ունենա: Իսկ եթե հանկարծ չգտնենք, մենք ինչ-որ փոքր մատուռ կկառուցենք»:*

Հետազոտության արդյունքների համաձայն, պատերազմի հուշարձանների որոշ մասը զոհված՝ հարազատները տեղադրում են տեղական իշխանությունների կողմից՝ օրենքով նախատեսված թույլտվության հիման վրա: Մյուս մասը տեղադրվում է առանց նախագծերի և թույլտվության, որը հետագայում տեղական ինքնակառավարման մարմինների համար հարուցում է որոշակի խնդիրներ: Նույնիսկ այդ դեպքերում, իշխանությունները, ելնելով խնդրի բարոյական կողմից, զոհված՝ների և նրանց ընտանիքների նկատմամբ ունեցած վերաբերմունքից և հանրային կարծիքից, չեն խոչընդոտում դրանց տեղադրման աշխատանքներին: Այդ առումով, օրինակ, Սյունիքի մարզի Սիսիանի քաղա-

52 ԴԱՆ, Տավուշի մարզ, գ. Սևքար, 2022:

53 Ю. Антонян. Социальная семиотика «мигрантских» церквей в Армении, Государство, религия, церковь в России и за рубежом. 2016, N2 (34), էջ 164:

քապետարանի պատասխանատուն նշեց հետևյալը. *«Ո՛չ շինթույլտվություն ենք կարողանում տալ, ո՛չ օրենք կա: Եթե հարմար տեղ է, բողոք չկա, հուշարձանը դնում են»:* Մեր կողմից տրված հարցին, թե *«Հուշարձանի տեղադրման համար դիմո՞ւմ են Ձեզ, թե՞ տեղադրելուց հետո եք տեղյակ լինում»,* նա արտահայտեց հետևյալ կարծիքը. *«Չէ, դիմում են, գալիս են, նախագիծը նայում ենք, ջրի համար «Վեոլիայից» թույլտվություն ենք խնդրում, որ անվճար լինի, ու տենց սարքում են, որ չխանգարի ոչ մեկին: Բայց, դե, չենք էլ կարում մերժենք»: Իսկ այն հարցին, թե «Եղե՞լ է դեպք, որ հուշարձանի տեսակը փոխեք»* նա նշեց հետևյալը *«Չէ, իրենք հիմնականում ցայտաղբյուր են դնում ու խաչ բազալտից, որովհետև Սիսիանում բազալտի հանք կա»*[54]*:* Ցայտաղբյուրների տեղադրման համար տեղական ինքնակառավարման մարմինները դիմում են «Վեոլիա ջուր» ընկերությանը և թույլտվություն են ստանում, որ ջուրը անվճար լինի: Տավուշի մարզի Աչաջուր համայնքում Շիրակ Գասպարյանի ծնողներն իրենց որդու և արցախյան պատերազմի բոլոր հերոսների հիշատակը հավերժացնող եկեղեցի են կառուցում: Տարածքը տրամադրել է նրանց համագյուղացին, իսկ մի մասը պատկանում է համայնքին: Ծնողների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախագիծը ներկայացրել են վարչական ղեկավարին և ավարտից հետո նոր դիմելու են համապատասխան մարմիններին՝ թույլտվություն ստանալու և ճանապարհ կառուցելու համար: Հուշարձանների մի մասը տեղադրում են առանց թույլտվության, բանավոր պայմանավորվածությունների հիման վրա, քանի որ դրանք գտնվում են զոհվածների ընտանիքների սեփական հողատարածքում կամ համայնքային հողերից դուրս: Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում պատերազմի զոհերից մեկի հիշատակին նվիրված հուշարձանը տեղադրվել է (2021թ.) նրա ընտանիքի սեփական միջոցներով և թույլտվության համար քաղաքապետարանին դիմելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ, ըստ զոհվածի մոր. *«Կաղասպրով մեր պարածքի մեջ ա եղել: Ուղղակի մենք որոշեցինք ոչ թե կարտոֆիլ կամ լոբի մշակել, այլ պղայիս անմահացնել՝ և՛ որպես հուշ, և՛ ներկա սերնդի համար»*[55]: Հուշարձանի բացմանը ներկա են եղել համայնքի բնակչությունը, զոհվա-

[54] ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, 2023:

[55] ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, 2023:

ծի զորամասի հրամանատարները, ծառայակից, մարտական ընկերները: Այդպիսի մի նախաձեռնությամբ է հանդես եկել նաև Տավուշի մարզի Դիլիջան համայնքի գործարարներից մեկը, ով իր ֆինանսական միջոցներով, սեփական հողատարածքի վրա հուշարձան է տեղադրել՝ դասընկերոջ և քաղաքի բոլոր զոհվածների համար: Դրա մասին նա ուղղակի տեղյակ է պահել տեղական իշխանություններին և ձեռք է բերել բանավոր պայմանավորվածություն: Տեղադրման ֆինանսավորողները երբեմն իրենք են հանդես գալիս նաև որպես հուշարձանի դիզայներ՝ նույնիսկ այն չքննարկելով զոհվածների ծնողներին հետ: Այդ մոտեցումը տարակարծությունների տեղիք է տալիս համայնքի բնակչության և զոհվածների հարազատների մոտ: Այդ կապակցությամբ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում զոհվածի մոր հետ հարցազրույցից պարզվեց, որ նրա տղայի և մյուս զոհվածների համար խաչքարի տեղադրման նախաձեռնող են եղել այդ փողոցի երիտասարդները: Հարցազրույցի ժամանակ նա նշեց, որ տեղի ընտրության հարցում նրանք տեղյակ չեն եղել և նախօրոք նրանց ցանկությունը և թույլտվությունը չեն ստացել: Հարցազրույցի ժամանակ նա նշեց հետևյալը. *«Չէ, դա իրանց ցանկությունն է: Մենք ոչնչով չենք օգնել, չենք միջամտել, դա իրանց ցանկությունն է: Ընդհանուր տեղյակ են պահել տեղադրելու ժամանակ միայն, որ տեղադրում են: Բացումը արել են, կանչել են: Մենք ուրիշ նպատակներ ունեինք՝ ուզում էինք հիշատակ կատարել, մենք առանձին դնեինք, բայց որ ջահելությունը հավաքվել է, էդ աշխատանքը կատարել է, մեզ մնում էր ինչ ասել՝ միայն շնորհակալություն՝ հիշատակը վառ պահելու համար: Դե, որ մարդիկ արդեն կատարել են, հո չես գա ինչ-որ բան ասես: Երեխաս այստեղ է ապրել, մենք երկար ժամանակ այս փողոցում ենք ապրել: Մարդիկ իրենց պարտքն են համարել, երևի»*[56]:

Հետազոտության արդյունքներով պատերազմի հուշարձանացման ոչ ֆորմալ դերակատարներ են հանդես գալիս նաև հասարակական կազմակերպությունները և միությունները: Հայաստանում 1993 թ. ստեղծված երկրապահների կամավորական միությանը հիմնականում անդամակցում են արցախյան պատերազմի մասնակիցներ: Նրանում գործում են նաև «երիտասարդ երկրապահ» և «պատանի երկրապահ» կառույց-

[56] ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, 2023:

ները, որոնց միջոցով նոր սերդի մոտ այն տարածում է հայրենիքի, պատերազմի հերոսականացման, հայրենասիրական դաստիարակության, ռազմական գործի և այլ թեմաներ: Սյունիքի մարզի Սիսիանի երկրապահ կամավորական միության նախաձեռնությամբ արցախյան պատերազմում զոհված երկրապահների համար տեղադրվել է խաչքար, որի ֆինանսավորմանը մասնակցել է նաև երկրապահ միության վարչությունը (նկար 5): Այն ունի նաև փառքի սրահ, որտեղ ցուցադրվում են նրանց նկարները, անձնական իրերը և նրանց մասին գրված գրքեր և հոդվածներ: Խաչքարի տեղադրումը համաձայնեցվել է տեղական ինքնակառավարման մարմինների հետ և ձեռք է բերվել թույլտվություն: Ըստ այդ միության աշխատակցի տրամադրած տեղեկատվության՝ այդ կառույցը սերտ համագործակցում է համայնքի, հատկապես դպրոցների հետ: Բացի երկրապահի զոհերի հիշատակը հավերժացնող այդ խաչքարից, առանձին հուշարձաններ են տեղադրված նաև նրանց ծննդավայրում, փողոցներում և բակերում, որոնք հիմնականում կառուցվել են հարազատների ֆինանսական միջոցներով:

Պատերազմի հուշարձանացման գործընթացը միանշանակորեն չի ընդունվում համայնքի բնակչության կողմից, մասնավորապես, երբ այն տեղադրվում է կետրոնական մասերում՝ զոհվածներին նվիրված խաչքարերի և այլ տիպի հուշարձանների տեսքով: Այդպիսի դեպքերում, օրինակ, իշխանությունները դրա կարգավորման համար հղում են անում գործող օրենքներին և ճարտարապետական պահանջներին, և խուսափում են թույլտվություններ տալուց: Մեզ հետ հարցազրույցում Սյունիք մարզի Կապան համայնքի ղեկավարներից մեկը նշեց հետևյալը. *«Տարբեր մոտեցումներ կան: Եթե գալիս են ու ուզում են մոտավորապես տապանաքարի տեսքով իրենց բակում դնել, դա գերեզմանի է նմանվելու: Նուրբ հարց է՝ թույլատրել, թե չէ: Այստեղ նաև տեսքի հետ է կապված: Զգում ենք այնպիսի տեսքի լինի, որ քաղաքի հետ համահունչ լինի: Եթե ցայտաղբյուր է, մենք բան չենք ասում, խաչքարը թող լինի, բայց նաև ձևը, տեսքը համապատասխանի տեղանքին, գերեզմանի չվերածվի: Պատկերացրեք քաղաքի կենտրոնական փողոցում մարդը գա, ասի, որ ուզում է մոտավորապես գերեզմանի նման տապանաքար լինի: Նուրբ հարց է: Տարբեր կարծիքներ կարող են լինել սրա հետ կապված: Բակերում, հանգստի գոտիներում կարող է լինել տաղավար, խնդիր*

չենք տեսնում»[57]*:* Հուշարձանացման գործընթացի բարոյահոգեբանական ազդեցությունը կրում են նաև տեղական իշխանության ներկայացուցիչները՝ չխոչընդոտելով դրանց տեղադրմանը: Տավուշի մարզպետարանի տեղական ինքնակառավարման մարմինների վարչության պատասխանատուն խոսելով մի շարք համայնքներում տեղադրված զոհվածների հիշատակին նվիրված խաչքարերի, տաղավարների, հանգստյան գոտիների, մատուռների մասին, նշեց հետևյալը. *«Որևէ մեկը, կոպիտ ասած, ոիսկ էլ չի անում որևէ բան ասի: Ես ճիշտ չեմ համարում, բայց չկա մի մարդ, որ գնա ասի՝ ինչո՞ւ ես սարքում»*[58]*:*

Բնակչության մի մասը համայնքի կենտրոնական մասերում խաչքարերի և այլ տիպի հուշարձանների տեղադրմանը նույնպես դեմ է, բայց, ելնելով զոհվածների նկատմամբ ունեցած էթիկական նորմերից, դրա մասին երբեմն չի բարձրաձայնում: Զոհվածների ծնողների որոշ մասն այն բացատրում են հուշարձանը ամենօրյա ռեժիմով տեսնելու ծանր հոգեբանական ապրումներով և վերհիշողությամբ: Սյունիք մարզի Քաջարան քաղաքում բնակվող զոհված զինվորի մայրը տղայի հիշատակին կառուցված ցայտաղբյուրի վայրի ընտրությունը բացատրեց իրենց տանը, զոհվածի մանկապարտեզին և դպրոցին մոտ լինելու հանգամանքով: Մեր այն հարցին, թե *«Իսկ բնակիչներից դեմ արտահայտվողներ եղե՞լ են»*, արտահայտեց հետևյալ կարծիքը. *«Ես երբ պատուհանից եմ նայում կամ տեսնում եմ, չգիտեմ, թե մխիթարանք է, թե սփոփանք է: Օրինակ, ես ի սկզբանե խաչքարին էդքան կողմ չեմ եղել, որ հատկապես էս տարածքում նման բան լինի: Մտածում էի՝ հանկարծ չծանրանան, անցնող-գնացողը ծանր սրտով չլինի, որոշեցի, որ ճիշտ կլինի՝ առայժմ միայն ցայտաղբյուր: Չէ, չէ, ինչի պիտի դեմ արտահայտվեն: Ես գիտեմ՝ որոշ տեղերում նման դեպքեր եղել են: Ես ինքս ի սկզբանե խաչքար չեմ ուզել, որովհետև էստեղից երեխաներ են անցնում-գնում, միգուցե խաչքարն ուրիշ տպավորություն կթողնի: Լինում է նկարով, անունները գրված: Եթե մի ուրիշ տեղում լիներ, քաղաքի մեջ չլիներ, դպրոցի, մանկապարտեզի ճանապարհին չլիներ, միգուցե, բայց ես էստեղ չեմ ուզել: Ես ուզել եմ, որ դպրոցից դուրս գան, գան էստեղ նստեն, հանգստանան: Չեմ գտնում, որ*

---

57 ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Կապան, 2022:

58 ԴԱՆ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 2022:

քաղաքի մեջ դա ճիշտ է: Ինձ համար կարևոր է, որ գալիս, ջուր են խմում, դա ինձ բավարար է»[59]: Զոհվածի հարազատների մի մասը իրենց տան մոտ կամ սեփական հողատարածքում հուշարձանների կառուցման տեղի ընտրությունը ոչ միայն պայմանավորում են իշխանությունների կողմից նոր հողատարածքի հատկացման դժվարությամբ, այլև իրենց ընտանիքում զոհվածին շարունակական «ապրեցնելու», «կենդանացելու» և մոռացության չտալու խնդրով: Սյունիքի մարզի Սիսիան համայնքում զոհված զինվորի համար նրա ապրած տան պատին տեղադրվել է նկար, բացվել է անկյուն և հուշարձան: Այդ կապակցությամբ զոհվածի մայրը պատմեց հետևյալը. «Ճիշտ ա, Սիսիանում էս նկարը շատ դժվար ընդունվեց: Բոլորն իմ մասին ավելի շատ էին մտածում, քան ես, ասում էին. *«Բա մայրը ո՞նց ա գանելու, էս նկարի հետ ո՞նց ա ապրելու: Բայց հավատացեք, առաջին ժպիտը, որ իմ վրա երևացել ա, առաջին հանգստությունը, որ իմ հարազատներն են տեսել, ոնց-որ Վահագը գոն եկավ էդ նկարով: Հիմա իմ համար ամենադժվարը գնից դուրս գալ ու գնալն ա: Որ նստում եմ մեքնան, որ Երևան գնամ, Երևանում ենք մնում, ոնց-որ գիտեմ թողնում եմ, ինքը նայում ա: Էդ դժվար պահ ա՝ իրա նկարից բաժանվել: Էդ միակ նկարն ա, որին կարում եմ նայեմ, ես նույնիսկ իրա քարին չեմ կպնում, որ պանթեոն ենք գնում: Որ էս փոքրիկ անկյունում նստում եմ, ոնց-որ իրա շունչը զգամ, առավել ևս որ տեսնում եմ և՛ Սիսիանի հասարակության, և՛ Սիսիանի հյուրերի, եկողների վերաբերմունքը: Նայում ես՝ փոքր երեխա, ծաղիկը շոյում ա սրեղ մնելուց, ու էդ ինձ մխիթարանք ա»*[60]:

Բարերարը որպես հուշարձանացման դերակատար

44-օրյա պատերազմի հուշարձանացման գործընթացին իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում նաև տեղի և սփյուռքի մեր հայրենակիցները, որոնք դրանց կառուցման համար կատարում են ֆինանսական ներդրումներ: Այդ ներդրողների մեծ մասը կամ բնակվում է զոհվածների հետ նույն բնակավայրում, կամ նրանց նախկին համագյուղացիներն են, որոնք հիմնականում 1990-ական թվականներից հետո բնակություն են

59 ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 2022:

60 ԴԱՆ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, 2023:

հաստատել արտերկրում: ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական նոր պայմաններում, հուշարձանների, եկեղեցիների ու հանրային այլ խորհրդանիշների կառուցման ծախսատար, բայց միևնույն ժամանակ շատ ակտիվ ոլորտում, սկսեց մեծանալ բարերարների դերը, ովքեր ակտիվ մասնակցություն սկսեցին ունենալ հետխորհրդային Հայաստանի հուշարձանային լանդշաֆտի ձևավորման գործընթացներում: Սփյուռքի և տեղի բարերարները ոչ միայն համայնքային իշխանությունների կողմից սկսեցին ներգրավվել նոր հուշարձանների տեղադրման ծրագրերում, այլև իրենք սկսեցին ակտիվորեն նախաձեռնել և տեղադրել հուշարձաններ՝ սեփական նախասիրություններին համապատասխան. նմանօրինակ պրակտիկա հանդիպում է նաև սփյուռք ունեցող այլ երկրներում[61]: Բարերարների ակտիվ մասնակցությամբ ՀՀ բազմաթիվ համայնքերում անկախության տարիներին տեղադրվել են Ցեղասպանության նահատակների, Արցախյան ազատամարտի, Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններ. հանդիպում են դեպքեր, երբ բոլոր այս հուշարձանները ժամանակի ընթացքում ավելացվում են բարերարի կողմից կառուցված կամ բարեկարգված եկեղեցու կամ այգու տարածքում՝ մեկ վայրում հավաքելով հետխորհրդային Հայաստանի հիշողության գլխավոր պատումները: Ուստի, զարմանալի չէ նաև, որ 44օրյա պատերազմի հուշարձանացման գործընթացում տեղի և դրսի բարերարները կրկին ակտիվ մասնակցություն սկսեցին ունենալ. պատերազմի հուշարձանացման գործում բարերարները պատերազմի ավարտից անմիջապես հետո սկսել են ակտիվ համագործակցել պետության, համայնքային իշխանությունների ու զոհվածների հարազատների հետ՝ զոհվածների հիշատակը հավերժացնող խմբային հուշարձանների տեղադրման նպատակով: Գրանցել ենք նաև դեպքեր, երբ բարերարները ֆինանսավորել են անհատական հուշարձանների տեղադրման նախագծեր, որոնք իրականացել են հուշարձանացման այլ դերակատարների կողմից: Պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաների կառուցման մեր գրանցած դեպքերի մեծ մասում այդ նախագծերի հեղինակներ են հանդիսացել հատկապես տեղադրման բնակավայրերում նախկինում

61 D. Karabegovic. Who chooses to remember? Diaspora participation in memorialization initiatives, Ethnic and Racial Studies, 2019, էջ 1-19:

բնակված բարերարները, ովքեր արդեն տևական ժամանակ է բնակվում են արտերկրում:

Ըստ հետազոտության արդյունքների, այդպիսի նախաձեռնություններով կառուցված հուշարձաններ շատ են հանդիպում Գեղարքունիքի մարզում, որը ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային շրջանում առանձնանում է բնակչության աշխատանքային միգրացիայի բարձր տեմպերով[62]: Արտերկրում գործարարությամբ զբաղվող միգրանտները համարվում են պատերազմի հուշարձանացման կարևոր ֆինանսական ներդրողները: Այդ առումով հետազոտության կարևոր խնդիրներից էր պարզել, թե այդ հուշարձանների կառուցման համար նրանք որքանո՞վ են համագործակցում տեղական ինքնակառավարման մարմինների և զոհվածների ընտանիքի հետ, ո՞ւմ կողմից է գալիս այդ նախաձեռնությունը, այդպիսի ներդրումներով ի՞նչ անձնական և սոցիալական դրդապատճառներ են հետապնդում բարեգործները համայնքում: Հետազոտության արդյունքներով հուշարձանների կառուցման համար այդ ներդրումները կատարվում են խմբային և անհատական միջոցներով: Որպես խմբային ֆինանսական ներդրողներ հանդես են գալիս արտերկրում բնակության հաստատած զոհվածի համագյուղացիները, որոնք այնտեղ իրականացնում են ֆինանսական հանգանակություն և այն ուղղում են հուշարձանների կառուցմանը: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքում պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանի կառուցման համար Ուկրաինայում բնակվող համագյուղացիները կատարել են շուրջ 30 մլն դրամի ներդրում: Ըստ համայնքի վարչական ղեկավարի, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով, ֆինանսական ներդրումների դադարեցման պատճառով հուշարձանի պուրակի որոշ աշխատանքներ մնացել են անավարտ: Հուշարձանի կառուցման նախաձեռնությունը եղել է վարչական ղեկավարինը, իսկ հուշարձանի ձևը, տարածքի ընտրությունը համաձայնեցվել է զոհվածների հարազատների և սփյուռքի «իրենց համայնքի» ներկայացուցիչների հետ: Նրանց ֆինանսական ներդրումներով կառուցվող հուշարձանների միջոցով միգրանտները ոչ միայն իրենց հարգանքի տուրքն են մատուցում

---

62 Մ. Գալստյան, Աշխատանքային միգրացիան և սոցիալ մշակութային գործընթացները Հայաստանում, ՀԱԻ հրատ., Եր., 2023, էջ 118:

զոհվածների հիշատակին, այլ դրանով շարունակում են ապահովել սոցիալական դերակատարությունը իրենց ծագման համայնքներում: Այդ համատեքստում կարևոր է նաև համայնքի վերաբերմունքը, որը վարչական ղեկավարի կարծիքով դրական է, և համագյուղացիներն իրենց մասնակցությունն են բերում այդ աշխատանքներին: Արտերկրում բնակվող իրենց համագյուղացի անհատ հովանավորների ֆինանսական միջոցներով, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքում կառուցվել է պատերազմի զոհերին նվիրված հուշարձան, որտեղ տեղադրված է Արցախյան առաջին և 44-օրյա պատերազմների զոհերի նկարները (Նկար 6): Առաջարկությունը կատարել են հովանավորողները և հուշարձանի կառուցման առաջարկը քննարկել և համաձայնեցրել են զոհվածների ծնողների հետ: Հուշարձանը պաշտոնապես տեղադրվելուց հետո անմիջապես դարձել է այդ համայնքի կարևոր վայրերից մեկը, քանի որ տարբեր առիթներով հուշարձանին հաճախակի ծաղկեդրումներ են կատարվում դպրոցի աշակերտների, մանկապարտեզի սաների և անհատների կողմից: Զոհվածներին նվիրված հուշարձանների կառուցման ֆինանսավորման համար իշխանություններն օգտագործում են արտերկրի հայ գործարանների հետ ունեցած անհատական կապերը և ազգակցական հարաբերությունները: Հուշարձանների կառուցման հովանավորներ են հանդես գալիս նաև արտերկրում բնակվող զոհվածների հարազատները, ընկերները և համայնքի այլ անդամներ: Այդպիսի ներդրումների միջոցով է բարեկարգվել Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում բացված զինվորական պանթեոնի և հուշարձանի տարածքը՝ նվիրված 2020թ. 44-օրյա պատերազմում զոհվածներին հիշատակին: Բացմանը ներկա է եղել մարզի ղեկավարությունը՝ մարզպետ Կարեն Սարգսյանի գլխավորությամբ, ով հանդես է եկել հիշատակի և ոգեկոչման խոսքով, շնորհակալություն հայտնել համայնքի ղեկավարին և բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց մասնակցությունն են ունեցել պանթեոնի կառուցմանը[63]: Հովանավորների այդպիսի ֆինանսական ներդրումները, առաջին հերթին, պայմանավորված է զոհվածների նկատմամբ ունեցած հարգանքի, հիշատակի հավերժացման, երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակման, գաղափարախոսական մոտիվներով: Ան-

[63] Վաղաշենում կայացավ զինվորական պանթեոնի և հուշարձանի բացումը, https://armenpress.am/arm/news/1064714 (15.05.2024):

շուշտ, բարեգործական այդպիսի նախաձեռնությունները համայնքներում հանգեցնում են հովանավորների նկատմամբ հարգանքի և հեղինակության բարձրացմանը, նոր կարգավիճակի ձեռբերմանը, իշխանության ծավալների մեծացմանը[64]: Հովանավորները երբեմն ներկա են լինում նաև հուշակոթողի բացման արարողությանը և իշխանությունների, համայնքի կողմից մեծարվում և արժանանում են շնորհակալագրերի: Գեղարքունիքի մարզի Գագարին բնակավայրում բացված Արցախյան վերջին պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող աղբյուր-հուշարձանի արարողությանը մասնակցել են մարզպետ Գնել Սանոսյանը, Սևանի քաղաքապետ Սարգիս Մուրադյանը, բարերար Հարություն Ավանեսյանը, զոհված հերոսների ծնողները, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգևոր հովիվը, ուժային կառույցի ներկայացուցիչներ և համայնքի անդամներ: Սևան քաղաքի համայնքապետարանի անունից հավաստագրեր ու շնորհակալագրեր են հանձնվել հերոսների ծնողներին, բարերարին և շինարարներին[65]:

Բարերարների կողմից պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի տեղադրման պրակտիկան կիրառվում է նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների շրջանում: Այսպես, Արարատի մարզի Արտաշատ քաղաքում Սուրբ Հովհաննես եկեղեցու հարևանությամբ գտնվող գլխավոր ճանապարհի հարակից տարածքում տեղադրված է Արցախյան հերոսամարտի, 2016 թ. 4-օրյա և 2020 թ. 44-օրյա պատերազմներում անմահացած եզդի քաջորդիների հիշատակը հավերժացնող հուշաքար: Հուշաքարը տեղադրվել և տարածքը բարեկարգվել է բելառուսաբնակ եզդի գործարարի միջոցներով[66]:

Հետազոտության արդյունքներով, որոշ դեպքերում հովանավորները հուշաձանի կառուցումը չեն համաձայնեցնում տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որը հետագայում առաջ է բերում որոշ

---

64 Ю. Антонян. Социальная семиотика «мигрантских» церквей в Армении, էջ 156-175.

65 Գագարինում բացվեց Արցախյան վերջին պատերազմի զոհերի աղբյուր-հուշարձանը, https://armenpress.am/arm/news/1054441 (15.05. 2024):

66 Արտաշատում բացվել է անմահացած եզդի քաջորդիների հիշատակը հավերժացնող հուշաքար, հասանելի է՝ https://armtimes.com/hy/article/247426 (15.05. 2024):

խնդիրներ: Տավուշի մարզի Հաղարծին գյուղում զոհվածների հիշատակին հուշարձանը տեղադրվել է 2021թ. Ռուսաստանում բնակվող նախկին համագյուղացու ֆինանսական օժանդակությամբ: Այն տեղադրվել է առանց շինարարական թույլատվության, չնայած, մեր հարցազրույցի մասնակցի կարծիքով, հովանավորը հուշարձանի տեղը համաձայնեցրել և խորհրդակցել է գյուղապետարանի հետ: Համայնքի բնակչությունը նույնպես ներգրավված է հուշարձանի կառուցման աշխատանքներին, սակայն հուշարձանի բացումը դեռևս տեղի չի ունեցել և ձգձգվում է: Ռուսաստանում բնակվող համագյուղացի բարերարի միջոցներով այդպիսի հուշարձան է բացվել նաև Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում, որը նվիրված է Արցախյան առաջին և երկրորդ պատերազմի զոհերի հիշատակին (նկար 7): Այն տեղադրվել է Հայրենական մեծ պատերազմի զոհերի հուշահամալիրի տարածքում և այդ ընտրությունը կատարվել է համայնքի կողմից: Հովանավորն ազգակցական կապ չունի համայնքից զոհվածների հետ: Բացմանը ներկա են գտնվել մարզպետարանի ներկայացուցիչներ և հյուրեր, որին հաջորդել է հյուրասիրությունը: Հարցման մասնակիցներից մեկի կարծիքով, թե՛ Հայրենական մեծ պատերազմի, և՛ թե Արցախյան պատերազմի զոհերի համար տոն օրերին հուշարձանին ծաղիկներ են դրվում: Բարերարի կողմից կառուցված այդ հուշարձանի նկատմամբ համայնքն ունի դրական վերաբերմունք և այն դարձել է նրա լանդշաֆտի կարևոր մասը: Հովանավորների մեծ մասը սերտորեն կապված է իրենց համայնքի հետ, հաճախ այցելում և ներկա է գտնվում համայնքում կազմակերպվող միջոցառումներին: Հովանավորների կողմից հուշարձանների ֆինանսավորումը համայնքներում նպաստում է նրանց սոցիալական և մշակութային կապիտալի մեծացմանը և իշխանությունների հետ կապերի ամրապնդմանը:

Հուշարձանների տեղադրման հովանավորներ են հաճախ հանդես գալիս զոհվածների համայնքակից գործարարներ, համայնքների նախկին ղեկավարներ ու նրանց ընտանիքի անդամներ: Նման բարերարները, ինչպես նաև «դրսի» հովանավորները պատերազմի ընթացքում նույնպես ֆինանսական միջոցներով, մեքենաների, սնունդի, դեղորայքի տրամադրման միջոցով փորձել են աջակցել պետությանն ու բանակին՝ դիմագրավել թշնամուն: Պատերազմից հետո զոհվածների հիշատակին նվիրված նախագծերի ֆինանսավորումն էլ նրանց մեծ մասը համարում

է այդ գործընթացի վերջնական ու կարևոր մասերից մեկը: Բացի այդ, բարերարների մեծ մասը անմիջական մասնակցություն չի ունեցել ռազմական գործողություններին, ուստի փորձում է պատերազմին մասնակից զինվորների հիշատակի հավերժացմանն ուղղված նախագծերի միջոցով ոչ միայն հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին, այլև որպես «շնորհակալության» ու «մեղքի զգացման» խորհրդանշանային արտահայտում է, քանզի նրանք մահացել են՝ համայնքի մյուս ներկայացուցիչների (այդ թվում և իրենց) ապրելու համար: Նման պրակտիկայի դեպք է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի փողոցներից մեկի վրա գտնվող շինանյութի խանութներից մեկի անկյունում կառուցված հուշարձանը՝ նվիրված պատերազմի բոլոր զոհերի հիշատակին: Հուշարձանի նախաձեռնության հեղինակ բարերարի հայրը մանրամասնեց. *«Տղայիս գարաձքն է, ինքն է կառուցել: Ինքը պատերազմի ժամանակ ռեզերվում է եղել, իր մեքենայով գնացել-եկել է սահման: Ինքը ամեն պատերազմին իր ներդրումն ունեցել է՝ իր խանութով, մթերքներով: Իր դասընկերը՝ դիմացի շենքից, մահացել է: Եվ մնացած բոլորին ճանաչում էր: Տղես ուզում էր մի բան արած լինի իր հաշվին, գոնե դրանով ծնողներին, հարազատներին միխթարի»:* Բարերարը մեզ հետ հարցազրույցի ժամանակ նույնպես մանրամասնեց հուշարձանի տեղադրման իր շարժառիթը՝ մասնավորապես նշելով. *«Ճիշտն ասած, ուզում էի ստեղ «ապտեկա» սարքել, բայց պատերազմը սկսվեց: Մի բան էլ ես ուզեցի անեմ տղերքի համար: Իրանց ծնողները գալիս են, նստում, իրանց երեխեքին հիշում: Հա, իմ դասընկերն էլ է մահացել, բայց սա բոլորին է նվիրված: Չորս շատ մոտ մարդ ունեմ զոհվածների մեջ, բայց, դե, սաղ էլ կռվել են, սաղ տղեք են:»*[67]:

[67] ԴԱՆ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, 2023:

ԳԼՈՒԽ III
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Հուշարձանի նախագծման, կառուցման ու տեղադրման գործընթացում առանցքային դեր է հատկացվում հատկապես նրա տեղադրության վայրի ընտրությանը. հուշարձանը կարող է կառուցել իր տեղադրության ֆիզիկական վայրի ու նրա շրջակա միջավայրի ընկալումը, իսկ տեղադրության վայրն, իր հերթին, կարող է ազդել, թե ինչպես է ընկալվում այդ հուշարձանը[68]: Խորհրդային տարիներին կոմունիստական գաղափարախոսության ուղերձները պարունակող հուշարձանները կանգնեցվում էին բնակավայրերի առավել մարդաշատ հատվածներում, քաղաքների կենտրոններում, հրապարակներում, այգիներում և պուրակներում, առանձնացված և բարձրադիր հատվածներում՝ քաղաքներում ստեղծելով ուժեղ նշաններ, որոնք հանրությանը անդադար պետք է հիշեցնեին իրենց հերոսների, կարևոր արժեքների և գաղափարների մասին: Հիշողության տարածքների ընտրությունը գտնվում էր պետության խիստ հսկողության տակ ու անհնար էր խորհրդային իշխանությունների համար անցանկալի հիշողության կամ խորհրդանիշների հայտնվելն այդ վայրերում[69]: Սպիտակի ավերիչ երկրաշարժի ու Արցախյան ազատամարտի հետևանքով զոհերի հիշատակի հավերժացմանն ուղղված հանրային ինքնաբուխ նախաձեռնությունների արդյունքում Հայաստանի համայնքների հանրային վայրերում հայտնվեցին բազմաթիվ հուշարձաններ. համայնքների երկրորդային փողոցները, բակերը, պուրակներն ու այգիները, խաղահրապարակները, որտեղ և տեղադրվում էին այս

68 J. Miller. Space is Place: Why the Placement of Sculpture Matters, էջ 3:

69 Գ. Աթանեսյան, Խորհրդային և հետխորհրդային հուշարձանները հայաստանյան հանրային դիսկուրսում, ատենախոսական աշխատանք, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 2018:

հուշարձանները, առանձնահատուկ նշանակություն ունեին այն տեղադրող անձանց կամ խմբերի համար և հիմնականում չէին համաձայնեցվում նորանկախ հանրապետության համայնքային իշխանությունների հետ: Հետագա տարիներին ՀՀ իշխանություններն իրավական կարգավորում են տալիս հուշարձանների համար տարածքների տրամադրման գործընթացին՝ հիմնականում կանխելով հանրային որոշ տարածքներում իրենց ոչ համապատասխան բովանդակություն կրող հուշարձանների տեղադրումը:

44-օրյա պատերազմից հետո ՀՀ իշխանություններն ու ՏԻՄ-երը պատերազմի հուշարձանացման տարածքի ընտրության հարցում նախընտրություն տվեցին նախկինում կիրառված ու ընդունելի պրակտիկաներին: Մինչդեռ, զոհվածների ծնողներն ու բարեկամները և հուշարձանացման գործընթացի մյուս դերակատարները կարևորում տվեցին իրենց համար զգայական կամ խորհրդանշանային կարևորություն ունեցող տարածքների ընտրությանը՝ հուշարձանների տեղադրման համար:

Աշխատության այս գլխում անդրադառնալու ենք 44-օրյա պատերազմի հուշարձանների տեղադրության վայրի փոխակերպումներին՝ ի համեմատ Արցախյան առաջին պատերազմի և քառօրյա/ապրիլյան պատերազմի հուշարձանների: Փորձելու ենք պարզել՝ նոր հուշարձանները տեղադրվում են առանձի՞ն, թե՞ արդեն կանգուն հուշարձանների կողքին՝ նրանց դնելով ընդհանուր հիշատակման լանդշաֆտում: Արդյո՞ք 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները տեսանելի և հասանելի են հանրային վայրերում, թե հանդիսանում են տեղադրողների բնակության վայրին մոտ տեղադրված անհատական վշտի դրսևորումներ, և տարածքի ընտրությունն ինչքանո՞վ է կարևոր նախաձեռնողների համար՝ նրանց կողմից հիշատակման միջոցառումներն իրականացնելիս:

Առաջադրված խնդիրների բացահայտման համար առաջին ենթագլխում անդրադարձ կկատարվի համայնքային՝ արդեն առկա և նոր կառուցված պանթեոններին: 2-րդ ենթագլխում կքննարկենք դպրոցի դերակատարությունը՝ որպես հուշարձանային տարածք: Վերջին ենթագլխում կդիտարկենք զոհվածների ընտանիքի, ընկերների, համայնքի և բարերարների կողմից տեղադրված հուշարձանների տարածքի ընտրության հարցը:

Համայնքային զինվորական պանթեոնները

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո Հայաստանում պատերազմի մասնակիցների, հերոսների ու զոհերի հիշատակը հավերժացնող հարյուրավոր հուշարձաններ կառուցվեցին: Հայրենականի զոհերի հիշատակն հավերժացնող մոնումենտալ հուշարձանները հիմնականում հայտնվում էին բնակավայրերի մուտքերի կամ ելքերի մոտ[70], առանձնացված ու բարձրադիր հատվածներում: Որոշ դեպքերում այդ հուշարձանները կանգնեցվել են քաղաքների կենտրոններում՝ քաղաքային այգիներում, նրանց մոտ, հրապարակներում: Պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներ, աղբյուր-հուշարձաններ են տեղադրվել Հայաստանի քաղաքների տարբեր հատվածներում՝ այգիներում, պուրակներում, հրապարակներում և նրանց հարակից տարածքներում: Հայրենական պատերազմի անհատ հերոսների պատվին հուշարձանները հայտնվում էին քաղաքային այգիներում, հերոսների անունը կրող հաստատությունների բակերում: Հայրենական պատերազմի հուշարձանացումը պետության կողմից վարած հստակ հիշողության քաղաքականության արդյունք էր հանդիսանում, որի հետևանքով Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում ստեղծվեցին պատերազմի ու դրա զոհերի հիշատակման ֆիզիկական ու նշանային լանդշաֆտներ, որոնք կաղապար հանդես եկան հետագա պատերազմների հիշատակման համար:

Արցախյան առաջին պատերազմից հետո Հայաստանի մի շարք բնակավայրերում ձևավորվեցին պատերազմի զոհերի աճյուններն ամփոփող զինվորական պանթեոններ: Պանթեոնների տարածքը գերազանցապես ընտրվում էր Հայրենական Մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանների վայրը, սակայն պանթեոնները հաճախ ներառում էին նաև Հայոց Ցեղասպանության, Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններն ու համայնքային հուշահամալիրները: Այդ ժամանակաշրջանում զոհերի հուղարկավորումը հուշարձանների տարածքում որոշակի տարածում գտած պրակտիկա էր, որը դրսևորվեց նաև Ծիծեռնակաբերդի և Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրների տարածքներում[71]:

---

70 Այն վայրերում, որտեղից ճանապարհում կամ դիմավորում էին զինվորներին:

71 Մարության Հ., Հուշարձանը՝ որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), էջ 180:

Ձևավորված այս պրակտիկան շարունակվեց նաև 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ զոհերը հուղարկավորվում էին արդեն իսկ ձևավորված պանթեոններում: Հիշատակման ընդհանուր լանդշաֆտում նոր հուշարձանների տեղադրման պրակտիկան կիրառվեց ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ սահմանամերձ մարզերի մի շարք քաղաքներում: Բացի սրանից, որոշ բնակավայրերում ձևավորվեցին նաև նոր զինվորական պանթեոններ: Գորիսի պանթեոնը դրանցից մեկն էր, որին կանդրադառնանք ներքևում:

Երևանում զինվորական հուշահամալիր-պանթեոնը **Եռաբլուր** պանթեոնն է, որտեղ ամփոփված են Արցախյան առաջին պատերազմում և պատերազմի զինադադարից հետո զոհված ազատամարտիկների, քառօրյա և 44-օրյա պատերազմների, ինչպես նաև դրանից հետո հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած մարտերում զոհված զինծառայողների աճյունները: Գերեզմանատան կարգավիճակը հաստատվել է 1992 թ. մայիսի 26-ի ՀՀ կառավարության կարգադրությամբ: Եռաբլուրի մուտքի ձախ մասում մատուռն է, դիմացը՝ Զոհված ազատամարտիկների թանգարանը (անավարտ), հարևանությամբ՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի 39 մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանը, ավելի խորքում՝ անհետ կորած ազատամարտիկների հուշաքար-կոթողը: Պանթեոնին հարող տարածքում 2023 թվականից սկսվել են 10 հա անտառպուրակի հիմնման աշխատանքները:

Եռաբլուր պանթեոնը գտնվում է ՀՀ Պաշտպանության նախարարության հոգածության ներքո, որը հանձն է առել միանման շիրմաքարեր տեղադրել 44-օրյա պատերազմում զոհված տղաների շիրիմներին: Սակայն, չնայած ընդհանուր քաղաքականությանը, երբեմն զոհվածների հարազատները գերադասում են իրենց նախընտրած ձևով տեղադրել շիրմաքարերը՝ այն կարևոր համարելով հիշատակման բովանդակության համատեքստում:

Շիրմաքարերի տեղադրման նույն մոտեցումն առկա է գրեթե բոլոր պանթեոնների դեպքում: Սյունիքի մարզի Կապան քաղաքն առաջիններից է, որտեղ պանթեոնը կառուցված էր դեռևս Արցախյան առաջին պատերազմի տարիներից: Այստեղ 90-ականների զոհերի կողքին ամփոփված են քառօրյա, ապա՝ 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմները (նկար 8): Պանթեոնը կոչվում է **Բաղաբուրջի հուշահամալիր,** որը

գտնվում է Կապան քաղաքից 200 մ. հարավ, Բաղաբուրջ տանող ճանապարհի ձախակողմյան բարձունքին: Կառուցվել է 1970-1990 թթ.: Առաջին հարթակում կանգնեցված է Մեծ եղեռնի և 1988 թ. Սումգայիթի ու Բաքվի զոհերին նվիրված հուշակոթող այուրը: Երկրորդ հարթակում Արցախյան ազատամարտում զոհված կապանցիների եղբայրական գերեզմանոցն է: Հուշահամալիրի երրորդ հարթակի վրա կանգնեցված է անհայտ զինվորի հիշատակին նվիրված խաչքարը: Չորրորդ հարթակում Երկրորդ աշխարհամարտի զոհերին նվիրված հուշարձանն է:

44-օրյա պատերազմի ավարտից հետո համայնքային իշխանություններն իրենց առջև նպատակ են դնում տեղադրել այստեղ հուղարկավորված զոհերի շիրմաքարերը՝ նման մինչև այս տեղադրված շիրմաքարերին: Նրանք այս մոտեցումը կարևոր են համարում հիշողության ընդհանուր լանդշաֆտի ձևավորման համար. «*Տրամաբանությունը եղել է այնպես, որ բոլորի շիրմաքարերը պետք է լինեն միատեսակ: Եթե պիտի փոխվի, պիտի փոխվի բոլորինը: Բայց նույն ձևով բոլորի գերեզմանները սարքած են: Հիմա մենք մտածում ենք հուշահամալիրի տարածքն ապագայում վերանորոգելու մասին: Գերեզմաններն ավարտված են 2021թ.: Մենք ինդիրն այդպես ենք դրել, որ տղաների տարին լրանալուց պետք է իրենց գերեզմանը պատրաստ լինի: Ու արեցինք*» (հարցազրույց Կապանի համայնքապետի տեղակալի հետ)[72]:

Քաջարան քաղաքի եղբայրական գերեզմանոցում ևս Արցախյան առաջին պատերազմի զոհերի աճյունների կողքին ամփոփված են 44-օրյա պատերազմի զոհերի շիրիմները (նկար 9): Համայնքի համար այս ընդհանրական հուշահամալիրում դեռևս 90-ականներից տեղադրված էր հուշաղբյուր և խաչքար: Այստեղ ևս քաղաքային իշխանությունների կողմից միանման շիրմաքարեր են տեղադրվել և 90-ականների զոհերի շիրմաքարերը փոխարինվել նորով՝ վիզուալ նույնացնելով բոլոր ժամանակների զոհերին:

Սիսիան քաղաքի գլխավոր եկեղեցուն (Սյունի վանքին) հարող տարածքում գտնվում է Արցախյան ազատամարտի զոհերի հուշահամալիրը (պանթեոնը): Քաղաքային իշխանություններն ու բնակիչներն այս տարածքն անվանում են պանթեոն, չնայած այն բանին, որ «*պանթեոնի*

72 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022 թ.:

կարգավիճակ չունի» (հարցազրույց Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի հետ)[73]: Տարածքում տեղադրված են նաև Ցեղասպանության զոհերին և Կոմիտասին նվիրված հուշարձաններ:

Սիսիանի քաղաքային պանթեոնում հուղարկավորված են Արցախյան առաջին պատերազմի, 2020 թ. տավուշյան մարտերի, ապրիլյան պատերազմի, 44-օրյա պատերազմի զոհերը (նկար 10): Տարիներ շարունակ պանթեոնում աշխատանքներ կատարել են անհատ անձինք և բարեգործական տարբեր կազմակերպություններ, սակայն ներկայումս պանթեոնի նորոգումը, պահպանությունը գտնվում է համայնքապետարանի հոգածության ներքո: 44-օրյա պատերազմի զոհերի մի խումբ ծնողներ համաձայն չեն եղել համայնքապետարանի առաջարկած շիրմաքարերի և շիրմաքարին կից դրվող լուսանկարների ձևին, մինչդեռ հիմնադրման ժամանակվանից՝ 1992 թ. սկսած, պանթեոնում դրվել են միանման շիրմաքարեր՝ նույն ոճի սև-սպիտակ լուսանկարներով: Փոքրիկ, քարե սալիկի վրա դաջված լուսանկարները, իբրև բարեգործություն, ուղարկվում են Կրասնոդարից: Այնտեղ ապրող սիսիանցի մի գործարար քարի մշակման արտադրամաս ունի, որը հանձն է առել նաև 44-օրյա պատերազմում զոհված հայրենակիցների լուսանկարները պատրաստելու գործը: Պանթեոնի շիրմաքարերը պատրաստվում են Սիսիանում՝ կրկին միանման[74]:

Համայնքային իշխանությունների որդեգրած այս սկզբունքային մոտեցումը չեն ընդունում որոշ ծնողներ՝ նախընտրելով ճերմակ շիրմաքար, ինչպիսին Եռաբլուրում հուղարկավորվածների գերեզմանների կառուցապատման համար է ընտրված: Ահա զոհվածներից մեկի ծնողի կարծիքն այդ մասին. «*Մեր ուզածն այնքան քիչ բան է: Գորշ, բազալտե քարեր չենք ուզում, դրանք մամոակալում են, իսկ լուսանկարներն անձրևի, ձյան օրերին թրջվում են, չեն երևում: Արդեն տեսնում ենք, որ Արցախյան առաջին պատերազմի շատ զոհերի շիրիմներ ինչ վատ վիճակում են: Այն ժամանակ այդ ձևն է ընդունված եղել, այդ ձևով են դրվել, բայց ժամանակները փոխվել են, այսօր ուրիշ շիրմաքարեր կան, լուսան-*

[73] ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023 թ.:

[74] Պանթեոնը հավասարություն պետք է խորհրդանշի, հասանելի է՝ https://www.aliqmedia.am/2021/08/21/26613/ (15.06.2024):

կարները կարող են գունավոր լինել: Մեզնից ոմանք օրեր են անցկացնում այնտեղ, պետք է այնպես լինի, որ գնանք, նստենք, զրուցենք մեր երեխաների հետ, չճնշվենք: Մեզնից հետո ընդհանրապես մաքրող, նայող չի լինելու, գոնե դիմացկուն քարեր դրվեն, նկարները չխամրեն...» (զոհվածի ծնող)[75]:

Սիսիանի պանթեոնի կառուցապատման շուրջ դեռևս 90-ականներից գոյություն ունեցող խնդրի մասին է խոսում նաև պանթեոնի հիմնադրման աշխատանքների մասնակիցներից մեկը. «*1992-1993-ին էլ տարբեր գերեզմանաքարեր դնելու քննարկումներ կային, բայց մենք բոլորին համոզում էինք, թե ազգի համար զոհվածներից ոչ մեկը մյուսից ոչ մի բանով ավել կամ պակաս չէ: Զինվորն էլ, հրամանատարն էլ նույն գործով են պատերազմի դաշտում: Բոլորը հավասար են այս ազգի ու պետականության համար, որևէ մեկին տուրք տալ, փառքի հասցնել չենք ուզում: Այդ սկզբունքով է հիմնվել Սիսիանի պանթեոնը: Դե պարզ է, որ բոլորն էլ ուզում են իրենց որդիներին հերոսացնել: Եթե թույլ տրվի՝ նկարները, քարերը իրենց ուզած ձևով արվեն, մեկը գրանիտ է դնելու, մյուսը հաչքար է դնելու, մյուսն ընդհանրապես հնարավորություն չի ունենալու որևէ բան դնելու...*» (սիսիանցի արվեստագետ, ազատամարտիկ)[76]:

Գորիսի հուշահամալիրը գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածներից մեկում: Հուշահամալիրի տարածքում, որտեղ դեռ խորհրդային տարիներին տեղադրվել էր Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը, անկախության տարիներին տեղադրվում է արցախյան շարժման կամավորների հիշատակին նվիրված հուշարձանը, ինչպես նաև Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշաքարը՝ ամբողջացնելով նահատակների հուշարձանային պանթեոնը:

44-օրյա պատերազմից հետո համայնքային իշխանությունների նախաձեռնությամբ որոշում է կայացվում քաղաքի հիշատակման այս ընդհանուր լանդշաֆտում կառուցել Գորիսի զինվորական պանթեոնը, որի նախագիծը հաստատվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից (նկար 11): Պանթեոնի մաս կազմող մատուռի կառուցման աշխատանքների

---

75 Նույն տեղում:

76 Նույն տեղում:

իրականացմանն աջակցություն է ցուցաբերում նաև նա[77]: Տարածքը գտնվում է համայնքապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում, որտեղ մշտապես միջոցառումներ են կազմակերպվում[78]: Պանթեոնը տեսանելի և հասանելի է հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքերի բնակիչների համար թե՛ պատուհաններից, թե՛ ամեն օր պանթեոնի կողքից անցնելիս: Այն գտնվում է Գորիս քաղաքի սկզբնամասում, և տեսանելի է քաղաքի յուրաքանչյուր այցելուի համար:

Զոհերին նվիրված հուշարձանների տարածքներում նոր պատերազմների կամ աղետի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրումը հիմնականում կապված է հուշարձանների գերեզմանային ամուր ընկալումների հետ[79]: Նմանատիպ պատկերացումների ամրապնդմանն է նպաստում նաև այդ տարածքներում կամ դրանց մոտակայքում եկեղեցիների կամ մատուռների կառուցումը, որը տարածված գերեզմանային պրակտիկա է[80]: Այս տրամաբանությամբ կառուցված հիշողության լանդշաֆտները բնորոշ են ոչ միայն սահմանամերձ Սյունիքի մարզի քաղաքներին, ինչպես տեսանք վերևում, այլ նաև քաղաքային և գյուղական մի շարք բնակավայրերի Հայաստանի տարբեր մարզերում:

Եղեգնաձորում քաղաքի գլխավոր եկեղեցուց մի փոքր վերև գտնվում է «Եռաբլուրը»՝ ըստ տեղացիների անվանակոչման, որի մուտքի մոտ հուշաղբյուր է տեղադրված: Դրանից վերև արցախյան առաջին պատերազմի ազատամարտիկների գերեզմաններն են: Ավելի բարձրադիր բլրի վրա Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար է կանգնեցված: Դեպի խաչքար տանող ճանապարհի սկզբում նաև անհայտ զինվորի հուշաքար է տեղադրված: Ընդհանուր հիշատակման այս լանդշաֆտում ամփոփվում են նաև 44-օրյա պատերազմի զոհերը (նկար 12): Ըստ նախագծի՝ տարածքում պետք է տեղադրվեն նստարաններ, կանգնեցվի դրոշ և կանաչապատվի տարածքը, ինչը դեռևս

77 Հաստատվել է Գորիսի զինվորական պանթեոնի նախագիծը, հասանելի է՝ https://hy.armradio.am/archives/341601 (15.06.2024):

78 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023 թ.:

79 А. Марутян. Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа, ЭО. № 3, 2008, էջ 122-123.

80 Նույն տեղում, էջ 124:

իրականացված չէր մեր դաշտային հետազոտական աշխատանքների ժամանակ: «*Այստեղ դրոշ է լինելու, փոքր նստատեղ, աստիճաններ, նաև եղևնի: Սա մեր Եռաբլուրն է: Համայնքի միջոցներով է արվելու*» (հարցազրույց Եղեգնաձորի համայնքապետարանի ճարտարապետի հետ)[81]:

Ջերմուկ քաղաքում 90-ականներից ձևավորված զինվորական պանթեոնը համալրվում է 44-օրյա պատերազմի զոհերի աճյուններով: Համայնքային իշխանությունները պանթեոնի վերակառուցման աշխատանքներն իրականացրել են սուբվենցիոն ծրագրով. «*Պանթեոն կա քաղաքում, որը սուբվենցիոն ծրագրով է արվել: Նախորդ պատերազմի զոհերի գերեզմանները բարեկարգվել են, իսկ նորերի համար՝ կառուցվել*» (հարցազրույց Ջերմուկի համայնքապետարանի աշխատակցի հետ)[82]:

Արտաշատ քաղաքում 44-օրյա պատերազմի զոհերն ամփոփված են Արտաշատի քաղաքային պանթեոնում: Տարածքում տեղադրված է զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող:

Դիլիջանում Արցախյան պատերազմի զոհերն ամփոփված են զինվորական պանթեոնում, որի տարածքում էլ ձևավորված է քաղաքի հուշարձանային լանդշաֆտը՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիրը, Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-աղբյուրը և այլն: 2021 թ. սեպտեմբերին հիշատակման այս ընդհանուր լանդշաֆտում տեղադրվում է նաև 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշաքար՝ «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ[83]: Մեր այն հարցին, թե ինչու է խաչքարի տեղադրման համար այդ տարածքն ընտրվել, համայնքապետարանից մեզ այսպես պատասխանեցին. «*Գերեզմանների շարքը էդտեղ է, դրա համար: Մենք հենց այդ տարածքում մի քանի հուշաքար էլ ունենք՝ Եղեռնի, երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված: Էլի ինչ-որ բարերար է տեղադրել: Արցախյան առաջին պատերազմի հուշարձան էլ կա, դա էլ ներքևի*

81 ԴԱՆ, Վայոց Ձորի մարզ, 2022 թ.:

82 Նույն տեղում:

83 28 անմահ անուն, որ կյանքը զոհեցին հանուն հայրենիքի. Դիլիջանի պանթեոնում հուշակոթող է կառուցվել, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=_ZiUuV0icr4 (15.06.2024):

հատվածում է: Որ բոլոր հուշաքարերը էդտեղ են, հենց դրա համար էլ ընտրվեց այդ տարածքը» (հարցազրույց Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի հետ)[84]: 2022 թ. վերանորոգվում է հուշահամալիրը, ամբողջությամբ վերականգնվում համալիրի հուշարձանները, իրականացվում հարակից տարածքների կանաչապատման և լուսավորության աշխատանքներ: Հուշահամալիրի վերականգնման և շրջակայքի բարեկարգման աշխատանքներն իրականացվել են բարեգործական հիմնադրամի աջակցությամբ և Դիլիջանի համայնքապետարանի ու բնակիչների համատեղ ջանքերով:

Գեղարքունիքի մարզի **Վաղաշեն** գյուղում պատերազմից մեկ տարի անց բացվում է համայնքի՝ նոր կառուցված զինվորական պանթեոնը, որը, վարչական ղեկավարի բնորոշմամբ, պետք է ծառայի ապագա սերունդների դաստիարակությանը. «*Այս նորակառույց պանթեոնը կարող է ծառայել որպես «Ուսումնադաստիարակչական կենտրոն» վաղաշենցի սերունդների համար, քանզի այստեղ այցելելով՝ նրանք կիմանան, թե ինչ սխրանք են գործել այս հերոս տղաները և հանուն ինչի է, որ իրենք ապրում են խաղաղ ու բարեկեցիկ երկրում»*[85]: Զոհվածների ծնողների նախաձեռնությամբ և աջակցությամբ պանթեոնի մուտքի մոտ կառուցվել է նաև հուշարձան: Պանթեոնի տարածքը բարեկարգվել է վաղաշենցի բարերարների միջոցներով (նկար 13):

Այսպիսով, 44-օրյա պատերազմից հետո ՀՀ սահմանամերձ մարզերի մի շարք բնակավայրերում համայնքային իշխանությունների նախաձեռնությամբ և գործուն մասնակցությամբ վերակառուցվեցին առկա զինվորական պանթեոններն ու հիշողության այդ լանդշաֆտներում արդեն կանգուն հուշարձանների կողքին տեղադրվեցին նոր հուշարձաններ. պատերազմի հուշարձանացման այս համայնքային քաղաքականությունները շարունակում էին Արցախյան ազատամարտից ու Ապրիլյան պատերազմից եկող լոկալ պրակտիկաները՝ համայնքային հիշողության լանդշաֆտին ավելացնելով համայնքի համար կարևոր նոր իրադարձության հիշողությունը: Որպես պատերազմի հիշատակման

---

84 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2023 թ.:

85 Վաղաշենում բացվեց պանթեոն՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված հայորդիների http://gegharkunik.mtad.am/news/item/2021/10/03/2/ (15.06.2024):

պաշտոնական խորհրդանիշ՝ ՀՀ որոշ բնակավայրերում կառուցվեցին նոր պանթեոններ և հուշահամալիրներ՝ ընդօրինակելով հարևան համայնքների փորձը: Փոքր համայնքներում ու գյուղերում հուշարձաններ տեղադրվեցին բնակավայրերի կենտրոնական հատվածներում՝ Հայրենական պատերազմի հուշարձանների տարածքներում, որտեղ հիմնականում տեղադրված են լինում նաև Ցեղասպանության, Սպիտակի երկրաշարժի ու Արցախյան ազատամարտի զոհերի հուշարձանները: Որոշ բնակավայրեր էլ (օրինակ, Մարտունին, Իջևանը) «ներկայացան» առանց 44-օրյա պատերազմի հիշատակման պաշտոնական խորհրդանիշի՝ քաղաքի հիշատակման լանդշաֆտի ձևավորման գործառույթը թողնելով անհատներին, բարերարներին կամ հուշարձանացման այլ դերակատարներին:

Դպրոցը՝ որպես հիշողության տարածք

Հիշողության ուսումնասիրության ոլորտը հակված է իր ուշադրությունը կենտրոնացնել գերազանցապես թանգարանների, հուշարձանների ու հուշահամալիրների վրա՝ որպես հիշողությունների կառուցման, հաղորդակցման և վիճարկման տարածքներ[86]: Այն հետազոտությունները, որտեղ կոլեկտիվ անցյալի ու պատմության ներկայացման և ազգային ինքնության կառուցման դերակատար է դիտարկվում կրթության համակարգը, հիմնականում կենտրոնանում են դասագրքերի (հատկապես պատմության դասագրքերի) կամ ուսումնական ծրագրերի վերլուծության վրա[87]: Մինչդեռ, կրթական հաստատությունների ու, մասնավորապես, հանրակրթական դպրոցների դերակատարումը պետության ապագա քաղաքացիների ինքնության կառուցման հարցում չի սահմանափակվում միայն կրթության բովանդակությամբ, այլ ներառում է նաև այլ դրսևորումներ ու պրակտիկաներ: Մասնավորապես, հանրակրթական դպրոցների տարածքում տեղադրվում կամ փակցվում են կոլեկտիվ անցյալի հերոսների ու առանցքային իրադարձությունների խորհրդանիշնե-

86 J. Paulson, N. Abiti, et al. Education as site of memory: developing a research agenda. International Studies in Sociology of Education, 29(4), 2020, էջ 429-451.

87 K. Korostelina. Shaping unpredictable past: National identity and history education in Ukraine. National Identities, 13(1), 2011, էջ 1–16.

ը, դպրոցներն անվանակոչվում են այդ հերոսների անուններով, աշակերտները տարեդարձային իրադարձությունների ու տոների ժամանակ իրականացնում են բեմականացումներ և հիշատակման այլ ծեսեր՝ վերարտադրելով ազգային ինքնության կարևոր պատումները:

Հետխորհրդային Հայաստանի հանրակրթական դպրոցներում ընդունված է շինության որևէ հատվածում (դպրոցի գլխավոր նախասրահում կամ, շատ հաճախ, Նախնական զինվորական պատրաստության դասընթացի անցկացման դասասենյակների շրջակա տարածքում կամ անմիջապես դասասենյակում) տեղադրել Ղարաբաղյան շարժման, Արցախյան ազատամարտի ղեկավարների ու հերոսների նկարներն ու նրանց հերոսական ուղու նկարագրերը: Գրեթե բոլոր դպրոցներում այս հերոսական անկյուններում պատկերվում են անկախ Հայաստանի կայացման այս առանցքային դեմքերը, նրանցից որոշների անուններով կան անվանակոչված դասասենյակներ ու լսարաններ, շատ հազվադեպ դեպքերում՝ նաև դպրոցներ:

Դպրոցը պատերազմի հիշատակման կարևոր դերակատարում ստանձնեց Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, երբ պատերազմի զոհերի հիշողության անկյուններ բացվեցին մի շարք դպրոցներում, դասասենյակներ անվանակոչվեցին նրանց պատվին, իսկ մի քանիսի բակերում տեղադրվեցին պատերազմի զոհերի հուշարձանները: Այս պրակտիկան առավել մեծ տարածում գտավ Արցախյան երկրորդ պատերազմի ավարտից հետո:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ 44-օրյա պատերազմում զոհվածների մի մեծ հատված պատերազմի մեկնարկից ամիսներ առաջ դեռևս դպրոցի աշակերտի կարգավիճակ ուներ, արագորեն տարածվեց նրանց հիշատակը հավերժացնող կոթողները դպրոցների բակերում տեղադրելու պրակտիկան: Դրանք տեղադրվեցին ոչ միայն իրենց դպրոցների ղեկավարության նախաձեռնությամբ, այլ նաև ծնողների/ընկերների, որոնք նպատակահարմար գտան նահատակված տղաների հուշարձանները տեղադրել դպրոցի բակում: Այս պրակտիկան տարածվեց ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում ու դարձավ պետության, դպրոցի ու նախաձեռնությունների անհատ հեղինակների համագործակցության ամենատարածված ու ընդունելի գործընթացներից. դպրոցների ղեկավարությունը և զոհվածների հարազատներն այդ դպրոցում դեռ ամիս-

ներ առաջ ուսանած զինվորականների հիշատակը վառ պահելու, նրանց հերոսացնելու (ճանաչելի դարձնելու) ու ապագա սերունդներին (աշակերտներին) հայրենասիրական ոգով դաստիարակելու նպատակով դպրոցն ընտրեցին որպես պատերազմի հուշարձանացման ընդունելի տարածք: Հերոսության, անձնվիրության, կյանքը հանուն հայրենիքի զոհաբերման գաղափարները աշակերտներին (ապագա զինվորներին) փոխանցելու այս ուժեղ խորհրդանշանային արտահայտման պրակտիկաները ողջունելի են նաև պետության կողմից:

Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի բակում 6 նորնորքցիների հիշատակին նվիրված հուշահամալիրը կառուցվել է ընկերների կողմից: Այն գտնվում է դպրոցի մուտքի մոտ՝ ճամփեզրին: Տեղադրված է հուշաքար, ցայտաղբյուր, հուշատախտակ՝ զոհվածների անուն-ազգանուններով և կենսագրություններով, առանձնացված է կանաչ գոտի, տեղադրված են նստարաններ: Հուշահամալիրի դիմացի մայթին գտնվում է Երևանի N3 զինվորական կոմիսարիատը: Տարածքի ընտրությունն ինքնանպատակ չէ. ոչ միայն այն, որ տղաներից երեքն այդ դպրոցում են սովորել և հարևանությամբ գտնվող զինվորական կոմիսարիատից մեկնել պատերազմ, այլև հուշահամալիրն իր իմաստով ապագա սերունդներին հայրենասիրական ոգով դաստիարակելու մեծ հնարավորություն է ընձեռում: Ահա հուշահամալիրի կառուցման նախաձեռնողներից մեկի խոսքերն այդ առիթով. «*Ընտրել ենք այս բակը, որովհետև մեր ընկերներից երեքը սովորել են այս դպրոցում և այս զինկոմիսարիատից գնացել են թե՛ ծառայության, թե՛ նաև կամավորագրվել են և այստեղից են մեկնել: Նշված վայրում կառուցելու մյուս պատճառը և նպատակն այն է, որ այստեղ սովորող մատաղ սերունդը ճանաչի իր ազգի և իր թաղամասի հերոսներին, կրթվի հայրենասիրական ոգով, ինչպես նաև՝ այդ ամենը տեսնեն այստեղից ծառայության մեկնող երիտասարդ նորակոչիկները*»[88]:

Դպրոցի զոհված շրջանավարտներին նվիրված հուշարձաններ են բացվում Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում: Շենգավիթ համայնքում գտնվող Երևանի Գրիգոր Զոհրապի անվան թիվ 97 ավագ դպրոցի բակում բացված հուշարձան-աղբյուրը նվիրված է դպրոցի ինը

88 Հերոսապատում, Սիրված էին, ակտիվ, ընկերասեր և հայրենասեր, հասանելի է՝ https://erablur.am/story/sirvats-ein-aktiv-ynkeraser-ev-hayrenaser-1 (15.05.2024):

շրջանավարտների հիշատակին[89]: Կենտրոն համայնքում գտնվող Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոցի բակում կառուցված է ցայտաղբյուր, տեղադրված՝ հուշարձան-խաչքար՝ 44-օրյա պատերազմին մասնակցած ու զոհված դպրոցի վեց շրջանավարտների հիշատակին[90]: Նմանատիպ հուշարձան-խաչքարեր են կանգնեցված նաև Երևանի թիվ 100 հիմնական դպրոցի բակում[91], Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի բակում՝ հանուն հայրենիքի նահատակված Ֆիզմաթ և Ուսում դպրոցների սաների հիշատակին[92] և այլուր:

Երևանից հեռանալով դեպի սահմանամերձ մարզեր՝ տեսնում ենք, որ դպրոցների բակերում հուշարձաններ կառուցելու պրակտիկան կիրառվում է նաև այստեղ: Օրինակ, Սյունիքի մարզի դիտարկված բնակավայրերում նման հուշարձանների հանդիպեցինք Գորիս և Կապան քաղաքներում: Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցի բակում կանգնեցված խաչքարը նվիրված է դպրոցի երեք շրջանավարտների հիշատակին: Կողքին տեղադրված է նաև ցայտաղբյուր՝ «Հերոս Էյներին, 2020» գրությամբ՝ նվիրված զոհվածներից մեկի հիշատակին, ում հայրն էլ հենց հուշարձանային այս լանդշաֆտի ձևավորման նախաձեռնողն ու իրականացնողն է եղել (Նկար 14): Կարող ենք արձանագրել, որ 44-օրյա պատերազմից հետո անհատների կողմից տեղադրված հուշարձանների տարածքները զոհերի բնակության թաղամասերից, փողոցից կամ բակից բացի դառնում են նաև նրանց դպրոցները, ինչին ականատես կլինենք աշխատության հաջորդ էջերում ևս:

Զոհվածի ծնողների և ընկերների կողմից հուշարձան է կառուցված նաև Գորիսի Ա. Բակունցի անվան թիվ մեկ ավագ դպրոցի բակում: Մեկ

---

89 «Կյանքս՝ կյանքիդ գնով», դպրոցի բակում 9 սաների հիշատակը հավերժացնող հուշարձան բացվեց, հասանելի է՝ https://factor.am/377116.html (15.05.2024):

90 «Դուք հավերժ կմնաք մեր սրտերում». Նար-Դոսի անվան դպրոցի բակում բացվեց 44-օրյա պատերազմում զոհված 6 շրջանավարտների հիշատակին նվիրված հուշարձան, հասանելի է՝ https://civic.am/news/13606--44- (15.05.2024):

91 Երևանի թիվ 100 դպրոցի բակում հուշաքար է տեղադրվել պատերազմում զոհվածների հիշատակին, հասանելի է՝ https://www.aravot.am/2021/08/13 /1209956/ (15.05.2024):

92 Հանուն հայրենիքի նահատակված Ֆիզմաթ և Ուսում դպրոցների սաների հիշատակի հուշարձան-խաչքարի բացումը, հասանելի է՝ https://physmath.am/page/3/ (15.05.2024):

դպրոցի տարածքում հուշարձանի երկու տեսակ և երկու տարբեր նախաձեռնություններ, որոնցից մեկն իրականացրել էին զոհվածի դասընկերները՝ տեղադրելով ցայտաղբյուր նույն դպրոցի շրջանավարտ իրենց ընկերոջ հիշատակին (Նկար 15): Հուշարձանի մյուս տեսակը խաչքար է, որը գտնվում է դպրոցի մուտքի աջ մասում՝ նվիրված պատերազմի բոլոր զոհերին: Վերջինիս տեղադրման նախաձեռնողն ու իրականացնողը զոհվածի հայրն էր, ով, դպրոցի ղեկավարությունից թույլտվություն ստանալով, նախընտրել էր Արցախյան պատերազմի բոլոր զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-խաչքարը կանգնեցնել իր որդու հաճախած դպրոցի բակում՝ ապագա սերունդներին ծանոթացնելու և հայրենասիրական դասեր տալու անթաքույց նպատակով: Նմանատիպ հուշաղբյուր-խաչքար տեղադրված է նաև Կապանի թիվ 13 դպրոցի բակում՝ դեպի մուտք տանող ճանապարհի ձախակողմյան հատվածում:

Ի տարբերություն Սյունիքի մարզի, Գեղարքունիքի մարզում հուշարձաններ կանգնեցված էին նաև մարզի գյուղական բնակավայրերի դպրոցներում: Լանջաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի բակում տեղադրված էր հուշաղբյուր՝ նվիրված Արցախյան ազատամարտի ժամանակ Լանջաղբյուր գյուղից երկու, 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում՝ մեկ զոհի հիշատակին: Այստեղ հուշարձանի տեղադրման դերակատարը փոխվել էր. Լանջաղբյուրում հուշարձանը կառուցվել էր համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և աջակցությամբ: Բացման արարողության ժամանակ հնչած խոսքում հուշարձանի տեղադրումը կարևորվում էր զոհվածների հիշատակի հավերժացման կոնտեքստում. «*Մենք կորցրել ենք մեր դպրոցի լավագույն աշակերտներին, ովքեր հայրենիքը պաշտպանել են իրենց կյանքի գնով: Նրանց սիրանքները երբեք չեն մոռացվի, իսկ ապրողներս կլինենք նրանց անունները հավերժացնող, մեր հայրենիքը շեն պահող մարդիկ*» (Լանջաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն)[93]:

Լանջաղբյուրի դպրոցի պատին նաև գրաֆիտի է արված: Արցախյան վերջին պատերազմում զոհվածի հարազատները, դպրոցի տնօրինությունից թույլտվություն ստանալով, իրագործել են իրենց նախաձեռ-

[93] Լանջաղբյուրում բացվեց և օրհնվեց Արցախյան պատերազմի զոհերի հուշաղբյուրը, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1064373 (15.05.2024):

նությունը և դպրոցի կողային պատին, որը տեսանելի է դպրոց մտնելիս, մեծամասշտաբ նկարել են զոհվածին՝ զինվորականի համազգեստով և «*Ինձ բացակա չդնեք*» գրությամբ (Նկար 16)։

Սարուխան գյուղի մշակույթի տան պատին ևս գրաֆիտի է արված՝ գյուղի վեց զոհվածների նկարներով՝ «*Մեր նշանավոր հայրենակիցները*» վերտառությամբ և «*Ձեր սխրանքն անմահ է*», «*Կյանքդ կյանքիս գնով*» գրություններով։ Նկարների հետնամասում պատկերված է ՀՀ դրոշը։ Հիշատակման նույն ձևով աչքի է ընկնում նաև Գավառ քաղաքի ավտոդպրոցը, որի պատին պատկերված են չորս տղաներ՝ իրենց զինվորական կոչմանը համապատասխան համազգեստով և «Հավերժ փառք» գրությամբ։

Մարտունու թիվ 1 դպրոցի բակում ևս խորհրդանշական հուշարձան կա տեղադրված՝ երկու բռունցք (ըստ տեղադրողների՝ խորհրդանշում են Հայաստանը և Արցախը), որոնք կրում են միևնույն զենքը։ Հուշարձանային լանդշաֆտի մաս են կազմում նաև հուշատախտակները՝ զոհվածների նկարներով, և ցայտաղբյուրը։ Այն կառուցվել է նույն դպրոցի ռազմագիտության ուսուցչի նախաձեռնությամբ, ով նաև 44-օրյա պատերազմի մասնակից էր և զոհվածներին հարգանքի տուրք մատուցելու լավագույն միջոցը գտնում էր հուշարձանի կառուցման մեջ (Նկար 17)։ Հուշարձանային տարածքը տեսանելի է դպրոցի ցանկապատից այն կողմ՝ փողոցի անցորդների համար. «*Մեր զինղեկը մասնակցել է 44-օրյա պատերազմին։ Եկել էր, ու թե՛ էդ պարտությունը Հայաստանի, թե՛ էդ հոգեվիճակը հանգիստ չէր տալիս։ Անընդհատ ասում էր՝ պիտի անկյուն սարքենք։ Ոնց որ ուզենար ինչ-որ տեղ իր ներդրումն ունենալ*» (հարցազրույց թիվ առաջին հիմնական դպրոցի տնօրենի հետ)[94]։

ՀՀ սահմանամերձ Տավուշի մարզում ևս դպրոցը՝ որպես հուշարձանային տարածք, ձևավորված էր քաղաքային բնակավայրերում (մեր դիտարկած գյուղական բնակավայրերում հուշարձանային տարածքը դպրոցից դուրս էր գտնվում)։ Դիլիջանի ավագ դպրոցի բակում տեղադրված հուշարձանը նվիրված է 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված վեց շրջանավարտների հիշատակին (Նկար 18)։ Դպրոցի բակում կանգնեցված հուշարձանը տեսանելի և հասանելի էր փողոցի անցորդների համար։

---

94 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.։

Տնօրենը, անդրադառնալով հուշարձանի կառուցման և տեղադրության հարցին, նշում է. «*Դասարանների անվանակոչությունից հետո ցանկություն առաջացավ, որպեսզի մի հատ էլ հուշարձան կառուցենք, բայց ոչ խաչքար կամ հուշակոթող: Մեր քաղաքի ավագանու անդամներից մեկն աջակցեց կազմակերպչական հարցերով, իսկ ֆինանսական աջակցություն, որպես այդպիսին, չի եղել: Ամենքն իրանց գործն են արել և անշահախնդիր: Արդյունքում ստացվել է: Առաջարկությունը դպրոցից է եղել, բայց համաքաղաքացիներն ամենքն իր ներդրումն ունեցել է: Տարածքը ես եմ ընտրել, որ տեսանելի լինի: Անկեղծ ասած, նաև ջրահեռացումն այդ տեղին մոտիկ էր: Հետագայում նախատեսվում է, որ այդտեղ ցայտաղբյուր դնենք*» (հարցազրույց Դիլիջանի ավագ դպրոցի տնօրենի հետ)[95]:

Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոց տանող աստիճանների մոտ՝ մայթեզրին, ևս տեղադրված է հուշարձան՝ ի հիշատակ դպրոցի շրջանավարտների՝ հուշաքարի վրա արձանագրելով նրանց անուն-ազգանունները: Այստեղ հուշարձանային լանդշաֆտի մաս են կազմում նաև ցայտաղբյուրը և ՀՀ դրոշը: Տարածքը կրկին ընտրվել է այն տրամաբանությամբ, որ հուշարձանը տեսանելի և հասանելի լինի նաև այդ փողոցով անցնող բնակիչների համար: Պատերազմի ավարտից ուղիղ մեկ տարի անց Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի բակում ևս կանգնեցվում է խաչքար՝ նվիրված 44-օրյա պատերազմին մասնակցած ու զոհված 8 շրջանավարտների հիշատակին[96]:

Կրթական հաստատությունների կողմից իրականացված այս բոլոր նախաձեռնությունները կարևոր խորհուրդ ունեն իրենց մեջ. հավերժացնելով իրենց աշակերտներին՝ գալիք սերունդների հիշողության մեջ թողնել հայրենիքի համար կյանքը զոհած տղաների հիշատակը, հայրենասիրություն սերմանել նրանց մեջ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ևս նմանատիպ նախաձեռնությամբ է հանդես գալիս՝ զոհված համալսարականներին նվիրված խաչքար տեղադրելու համալսարանի բակում, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով այն իրականություն չի դառնում: Դրա փոխարեն որոշում է

95 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.:

96 Մեզ բացակա չդնեք. անմահացած տղաներին նվիրված խաչքարի բացում Իջևանի թիվ 5 դպրոցի բակում, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=xEcmYHEwAQw (15.05.2024):

կայացվում քիչ ֆինանսական ռեսուրսներ պահանջող միջոցառում իրականացնել՝ հուշատախտակ պատրաստել և փակցնել համալսարանի շենքի արտաքին պատին, որը մեր ուսումնասիրության ժամանակահատվածում դեռևս չիրականացված ծրագիր էր մնում: Համալսարանում իրականացված միակ նախաձեռնությունը՝ զոհված տղաներից միայն մեկի անվան լսարանի անվանակոչումը, իրենց լավագույն ուսանողի առաջ պարտքը կատարելու, նրա հիշատակը հավերժացնելու խորհուրդն ուներ, որը համալսարանի ղեկավարության և ուսանողության համատեղ ծրագիրն էր. «*Բոլորի անունով չէինք կարող լսարան անվանակոչել. ինքը ՈՒԳԸ ղեկավարն էր, շատ լավ ուսանող էր, գրող, սրեղծագործող մարդ էր, իսկական համալսարանական էր, այսպես ասեմ*» (հարցազրույց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հետ)[97]:

Հիշողության լանդշաֆտները, դրանց անվանումներն անհատի կամ խմբերի մեջ ստեղծում են յուրահատուկ «ինքնության քարտեզներ» և խիստ կարևոր են ինքնության կառուցման հարցում[98]: Թերևս սրանով է պայմանավորված, որ պատերազմներից, մասնավորապես, 44-օրյա պատերազմից հետո հիշողության քաղաքականության գործուն միջոց դարձավ նաև անվանափոխությունը՝ մեծ ու փոքր տեղանքների, դպրոցների, դասասենյակների և այլն: Այդ քաղաքականությունը կիրառվեց ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

Դպրոցների անվանափոխության հարցը կարգավորվում է «Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության» կարգի համաձայն[99], ըստ որի՝ ուսումնական հաստատությունները, ի թիվս այլ անձանց, կարող են անվանակոչվել նաև «ուսումնական հաստատության շրջանավարտների անունով՝ ուսումնական հաստատության միջազգայնացման և վարկանիշը բարձրացնելու գործում ունեցած ավանդի, հայրենիքին մատուցած ծառայությունների համար»: Անվանակոչման

---

97 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022 թ.:

98 Հ. Մարության, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, տեսական հարցադրումներ, էջ 37:

99 Տե՛ս ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149449, (15.05.2024):

մասին որոշումները, սույն կարգի պահանջներին համապատասխան, ընդունում է ուսումնական հաստատության լիազոր մարմինը՝ ըստ ենթակայության: Անվանակոչման վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, համապատասխան ուսումնական հաստատությունը, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի 26.4 ենթակետից՝ դասասենյակների անվանակոչման հարցը ևս կարգավորվում է սույն կարգով՝ «ուսումնական հաստատության դասասենյակների, կաբինետների և դահլիճի անվանակոչման մասին որոշումներն ընդունում է ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը՝ ձայների մեծամասնությամբ»[100]:

Սահմանամերձ մարզերի դիտարկված բնակավայրերում դպրոցների անվանափոխության դեպքերի չհանդիպեցինք, սակայն դասասենյակների անվանակոչման օրինակները բազմաթիվ էին: Այսպես, Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի դասասենյակներից մեկը կրում է Արտաշես Մարտիրոսյանի անունը, որտեղ նա սովորել է առաջին դասարանում: Որպես կանոն, այս դասասենյակներում ստեղծվում են նաև հիշատակի անկյուններ, անհրաժեշտության դեպքում, նույնիսկ վերանորոգվում են նախաձեռնողների կողմից: Այս դեպքում զոհվածի ծնողների համար անվանակոչված դասասենյակը ոչ միայն լրացուցիչ սփոփանքի աղբյուր է, այլև ապագա սերունդների հայրենասիրական դաստիարակության կարևոր գրավական: Մեջբերենք զոհվածի մոր հետ հարցազրույցից մի հատված. «*Ի սկզբանե դասասենյակն ենք անվանակոչել, որտեղ ինքն առաջին դասարան է գնացել: Ճիշտն ասած, ես ինձ իրավունք չվերապահեցի, որ ռազմագիտության դասարանն անվանակոչվի: Մեր հերոսներից միայն Արտաշեսն է եղել, որ կոնկրետ էդ դասասենյակում է սովորել: Որոշեցինք, որ դա անվանակոչենք: Անկյունը ամբողջությամբ ես եմ որոշել, ինքս եմ ձևավորել, նյութերը ինքս եմ դրել: Ես Արտաշեսի հավաքածուների արխիվ ունեմ, էդ արխիվից էլ նյութեր եմ դրել՝ իր ձե-*

[100] Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին, հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/2819/about (15.05.2024):

ռազրերը, օրազրերը: Երեխաների համար դա օրինակ է: Ունենք երեխաներ, որ գրում-գրում են, հետո դնում-համեմատում են Արտաշեսի ձեռագրի հետ՝ վա՜յ նման ա, վա՜յ սիրուն ա» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[101]:

Գավառի թիվ 1 հիմնական դպրոցի շախմատի դասասենյակը կրում է նույն դպրոցի շրջանավարտներ՝ 2020 թ. արցախյան 44-օրյա պատերազմում զոհված 4 տղաների (Խաչատուր Ազիզյանի, Քերոբ Չատիկյանի, Մարատ Դաղոյանի և Աղասի Խունոյանի) անունները: Դասասենյակը բացվել է Հայոց բանակի կազմավորման 31-րդ տարեդարձի օրը: Հիմնանորոգվել է համայնքի բյուջեի միջոցներով:

Լանջաղբյուրի միջնակարգ դպրոցի ռազմագիտության սենյակը անվանակոչվել է՝ ի հիշատակ Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս Վաչիկ Ղարիբյանի: Այստեղ ևս առանձնացված է հիշատակի անկյուն՝ նրա նկարներով, փաստաթղթերով: Դասասենյակի պատին փակցված հուշատախտակին ներկայացված է ոչ միայն Վաչիկի, այլ նաև Արցախյան առաջին պատերազմի ժամանակ զոհված լանջաղբյուրցի երկու տղաների կյանքն ու կենսագրությունը:

Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցում ևս տեղի է ունեցել դասասենյակի անվանակոչում՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված Գուրգեն Այվազյանի և Տարոն Սարգսյանի: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո ևս այս գյուղում հիշատակման նման պրակտիկա է կիրառվել. Գանձակ գյուղի 1-ին միջնակարգ դպրոցում դասասենյակներից մեկը կրում է Արմեն Մարտիրոսյանի անունը:

Գանձակի մշակույթի տան սենյակներից մեկը ևս 44-օրյա պատերազմից հետո անվանակոչվել է՝ ի հիշատակ գյուղի զոհված տղաների: Այն իրականություն է դարձել ծնողների նախաձեռնության, համայնքի ղեկավարի գործուն մասնակցության և գյուղի ազգաբնակչության ֆինանսական ներդրումների շնորհիվ: Ըստ Գանձակ գյուղի երաժշտական դպրոցի տնօրենի՝ դասասենյակների անվանակոչումը հիշատակման կարևոր ձև է, որն ուղղված է ապագա սերունդների պատմական հիշողության ձևավորմանը: Ահա նրա հետ հարցազրույցից մի հատված. «*Գիտեք ինչ՝ մենք ամեն օր խոսում ենք իրանց մասին, քանի որ բոլորին ծանոթ ենք: Էդպիսի օր չկա, որ մենք իրանցից չխոսենք: Ոնց որ մեզանից եկողներին ասենք՝*

[101] ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022 թ.:

հիշե՛ք, չեք ճանաչում, չեք տեսել: Մենյակը չի, որ մեզ ստիպում է հիշել, խոսել: Մնայուն ինչ-որ բան է, որ հեպո հիշեն: Մենք հուշարձանի բացմանը էսպիսի խոսք ունեինք՝ մեզանից հետո սերունդները հիշեն» (հարցազրույց Գանձակ գյուղի երաժշտական դպրոցի տնօրենի հետ)[102]:

Տավուշի մարզում ևս տարածված է դասասենյակների անվանակոչման պրակտիկան: Նման օրինակներ հանդիպել են Դիլիջանի ավագ դպրոցում, Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցում:

Երևանում դասասենյակների անվանակոչման և փառքի անկյունների ստեղծման օրինակները բազմաթիվ են: Առանձին չանդրադառնալով դրանց՝ նշենք, որ Երևանում ունենք նաև դպրոցի անվանափոխության օրինակ: Պատերազմից մոտ երկու տարի անց Աջափնյակ համայնքում գտնվող «Երևանի թիվ 22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը անվանակոչվել է արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գևորգ Արշակյանի անվամբ՝ կոչվելով «Երևանի Գևորգ Արշակյանի անվան թիվ 22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ: Անվանակոչելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է դպրոցի տնօրինության կողմից, որոշումն ընդունվել է Երևանի ավագանու նիստում[103]: Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության՝ վերը նշված կարգի համաձայն՝ «նշանավոր որևէ անհատի անվամբ կարող է անվանակոչում կատարվել նրա մահվանից առնվազն 5 տարի հետո», սակայն, միևնույն ժամանակ, նշվում է, որ կարող են լինել բացառիկ դեպքեր:

Դասասենյակների անվանակոչմանը զուգահեռ, կյանքի են կոչվում նաև անվանակոչության այլ օրինակներ: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղում նորակառույց պուրակը նվիրվում է Արցախյան բոլոր պատերազմներում զոհված գանձակցիների հիշատակին: Դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում հանդիպել են նաև անվանակոչության՝ դեռևս չիրականացված նախաձեռնություններ: Օրինակ, Տավուշի մարզի Աճարկուտ բնակավայրում զոհվածի մայրը, ստանալով գյուղի ազգաբնակչության համաձայնությունը, նախատեսել է հանդես գալ գյուղի անվանափոխության վերաբերյալ իր առաջարկով՝

---

102 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.:

103 Երևանի 22 հիմնական դպրոցը կանվանակոչվի արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գևորգ Արշակյանի անվամբ, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1086545 (15.05.2024):

գյուղի անունը փոխելով «Դավիթաձոր»՝ ի հիշատակ իր որդու՝ Դավիթ Շահնազարյանի:

Այսպիսով, դպրոցը՝ որպես հիշողության տարածք օգտագործելը տարածված պրակտիկա դարձավ 44-օրյա պատերազմից հետո: Այն ձևավորում է հիշողության յուրօրինակ լանդշաֆտ, որը մեծապես ուղղված է ապագա սերունդների կրթմանն ու հայրենասիրական ոգով դաստիարակությանը: Երբեմն դպրոցների բակերում հուշարձաններ տեղադրելը զուգակցվում է դասասենյակների անվանակոչման հետ, սակայն հիշատակման այս երկու միջոցառումները կարող են և հանդիպում են նաև առանձին: Դպրոցի տարածքում հիշատակման լանդշաֆտի ձևավորման առանցքային դերակատարը շարունակում է մնալ դպրոցի տնօրինությունը՝ ինչպես նախաձեռնելու, այնպես էլ ծնողների/ընկերների և համայնքի նախաձեռնությունները կյանքի կոչելու տեսանկյունից:

Անհատական վիշտը հանրային տարածքում

Պատերազմի հուշարձանների դեպքում գործ ունենք նաև հանրային տարածքում մահվան խորհրդանշանային ներկայության հետ. մահվան վայրն ու տարածությունը խստորեն կառավարվում և կարգավորվում են ժամանակակից հասարակություններում՝ ստեղծելով հանրային համաձայնություն, որ մահը գերազանցապես բացակայելու է և անտեսանելի է լինելու հանրային միջավայրերում[104]: Սակայն, բնական աղետների, պատերազմների ու դժբախտ պատահարների հետևանքով հասարակությունները կարող են բախվել անսպասելի կորուստների՝ հանգեցնելով անհատական ու հանրային վշտի ինքնաբուխ արտահայտման, որը կարող է զոհերի հիշատակման պրակտիկաները գերեզմանային տարածքներից բերել հանրային վայրեր ու համայնքային առօրյա:

ՀՀ անկախության առաջին տարիներից սկսած տեղադրվեցին Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ, որոնք հայտնվեցին Հայաստանի շատ բնակավայրերում՝ երբեմն հաշվի չառնելով հուշարձանների տեղադրման տարածքների գործող կամ նախկին համատեքստերը: Այդ հուշարձանները հիմնակա-

[104] M. Gibson, Death and Grief in the Landscape: Private Memorials in Public Space, Cultural studies review, 17, 2011, էջ 146.

նում տեղադրվում էին այգիներում, պուրակներում, առանձին թաղամասերում, բազմաբնակարան շենքերի բակերում: Հանրության կողմից նմանատիպ հուշարձանների տեղադրումն ընթանում էր համայնքային իշխանություններից անկախ և հիմնականում առանց նրանց գիտության: Արցախյան շարժման փուլում տեղի իշխանությունները ոչ միայն չէին արգելում այդ կոթողների տեղադրումը, այլ նաև շատ դեպքերում լեգիտիմացնում էին դրանց տեղադրումը՝ մասնակցելով հուշարձանների բացման արարողություններին[105]:

44-օրյա պատերազմից հետո հուշարձանների տեղադրման տարածքներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով նաև բնակավայրերի երկրորդային փողոցները, բնակելի թաղամասերի բակերը, խաչմերուկները: Նմանատիպ տարածքների կիրառումը հուշարձանների կանգնեցման հարցում հիմնականում կապված էր անհատների, խմբերի կողմից պատերազմի զոհերի անհատական հուշարձանների տեղադրմամբ: Տեղադրման տարածքները այդ զոհերի բնակության վայրերն են, թաղամասերը, փողոցը կամ բակը:

Սույն ենթագլուխը նվիրված է 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրության հարցի մեկնությանը: Առաջին մասում կանդրադառնանք համայնքային իշխանությունների կողմից հուշարձանային լանդշաֆտի ձևավորման առանձնահատկություններին: Երկրորդ մասում քննության կառնվեն զոհվածի ընտանիքի/ընկերների կողմից հուշարձանների տեղադրության հարցերը:

44-օրյա պատերազմից հետո Գավառ համայնքում երկու մեծ հուշարձանային համալիր է կառուցվում քաղաքի տարբեր հատվածներում: Առաջին դեպքում ստեղծվում է ընդհանրական հուշարձանային տարածք՝ որպես պաշտոնական հիշատակման խորհրդանիշ: Այսպես, «Ժակի բուլվար» կոչվող այգու տարածքում Գավառի համայնքապետի նախաձեռնությամբ և բարերարի աջակցությամբ կառուցվում է հայրենիքի համար տարբեր ժամանակներում նահատակված հերոսների հիշատակին նվիրված հուշահամալիր: Հուշահամալիրում տեղադրվում է 4 հուշաքար, որոնցից մեկը նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի, երկ-

[105] Г. Атанесян. Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, էջ 31-36:

որորդը՝ 1918-1920 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների զոհերի, երրորդը՝ 1988 թ. երկրաշարժի զոհերի, չորրորդը՝ Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին: Այս չորս հուշակոթողները կերտվել ու տարբեր ժամանակներում տեղադրվել են Գավառի կենտրոնական հրապարակի տարբեր հատվածներում: Նոր նախագծով դրանք հավաքվել են մեկ վայրում՝ ամբողջացնելով հուշահամալիրի տեսքն ու ձևավորումը, ստեղծելով գրավիչ զբոսայգի (նկար 19), որտեղ առանձնակի տեղ կունենան պատմության մաս կազմող հուշարձանները[106]: Համայնքային իշխանությունները կառուցվող այս հուշահամալիրի համար նաև այլ նպատակներ են սահմանում. «*Հիմա մի հուշահամալիր-պանթեոն ենք ստեղծում, որ գնալուց բոլորը ծաղկեդրում անեն, որ միջոցառումները միանգամից էդտեղ անենք: Մեր քաղաքի ավագ դպրոցի մոտ է, երաժշտական քոլեջի դիմաց: Ժամանակին օգտագործվել է տարածքը, խորհրդային տարիներին 4 գործիչների հուշաքարեր են եղել այդտեղ, հիմա ամայի է: Ուզում ենք սարքել, դառնա սիրուն վայր*» (հարցազրույց Գավառ քաղաքի փոխքաղաքապետի հետ)[107]:

Երկրորդ հուշահամալիրը կառուցվում է Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում: Այստեղ չգործող մշակույթի տան շենքի դիմաց նախկինում տեղադրվել էր խաչքար՝ Արցախյան պատերազմներում զոհված տղաների հիշատակին: Նոր կառուցվող այս հուշահամալիրի նպատակն այն է, որ հիշատակի այդ խաչքարն անշուք տեղից տեղափոխվի ավելի տեսանելի և բարեկարգ տարածք: Հուշակոթողը կառուցվում է դեպի Գավառ-Մարտունի մայրուղի տանող ճանապարհի եզրին, որտեղ ստեղծվելու է նաև կանաչապատ գոտի, ցանկապատ (դիտարկման ընթացքում աշխատանքները դեռևս ընթացքի մեջ էին): Ըստ նախագծի ճարտարապետի՝ *«այն ունենալու է կամարներ, սրի, արծվի թևեր հիշեցնող պարկերաքանդակներ և անվանապահարակ, որի վրա գրվելու են արծվաքարցի հերոսների անունները: Հուշակոթողի տարածքում է տեղադրվելու նաև հերոսների հիշատակին քանդակված խաչքարը»*[108]:

---

106 Գավառ քաղաքում կառուցվում է հայրենիքի համար նահատակված հայորդիների հիշատակին նվիրված հուշահամալիր-պանթեոն, հասանելի է՝ https://www.1in.am/3174245.html (15.05.2024):

107 ԴՄՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.:

108 Գավառի Արծվաքար թաղամասում կառուցվում է Արցախյան պատերազմներում

Ի տարբերություն Գավառ քաղաքի, մարզի գյուղական բնակավայրերում ձևավորված հուշարձանային տարածքները գրեթե ավարտուն տեսք ունեին: Վերին Գետաշեն համայնքում համայնքապետի նախաձեռնությամբ կառուցվող Արցախյան երեք պատերազմների հերոսներին նվիրված զբոսայգին գտնվում է Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հետնամասում՝ զբաղեցնելով 4000 քմ տարածք: Զբոսայգում տեղադրվել է հուշարձան՝ երեք զինվորի անդրիներ, կառուցվել խաղահրապարակ, շատրվաններ և լուսավորության համակարգ, բեմական հատված, ստեղծվել ծառուղիներ և կանաչապատ գոտի: Սա միակ հուշահամալիրն էր, որտեղ տեղադրված էր նաև զինվորական տեխնիկա (նկար 20): Ըստ վարչական ղեկավարի՝ տեղանքն ընտրվել է մի քանի հանգամանքներից ելնելով: Ահա նրա հետ հարցազրույցից մի հատված. «*Ուղղակի գյուղում ուրիշ հարմար տարածք չունեինք՝ ո՛չ համայնքային հող ունեինք, ո՛չ՝ պետական սեփականության: Փոքր տարածք ունեինք, բայց ի սկզբանե դեմ եղանք դրան, որովհետև այնտեղ միայն լինելու էր հուշարձանի հատվածը: Շատրվանները ինչո՞ւ դրեցինք հիմքում, որ այցելուները շատ լինեն, ու ամեն մտնող մարդ մի հատ էս կողմ (հուշարձանի տարածք) թեքվի ու գնա իր խաղին, զբոսանքին: Գյուղամեջում տեղ ունեինք, կարող էինք արձանները դնել, բայց լինելու էր էնպես, որ առիթից առիթ էին գնալու*» (հարցազրույց Վերին Գետաշենի վարչական ղեկավարի հետ)[109]:

Կարմիրգյուղի հուշարձանը՝ կառուցված 2018 թ. արտերկրի բարերարների կողմից, գտնվում է գյուղի կենտրոնում, Սուրբ Վարվառա մատուռի հարևանությամբ՝ ի հիշատակ Արցախյան ազատամարտում զոհված կարմիրգյուղցիների[110]: Կառուցված հուշապատի վրա պատերազմից հետո արձանագրվում են նաև 44-օրյայի զոհերի անունները:

Սարուխան գյուղի վարչական շենքի դիմաց կանգնեցված խաչ-հուշաղբյուրը նվիրված է գյուղի երեք զոհերի հիշատակին: Սարուխանի նո-

---

զոհվածներին նվիրված հուշակոթող, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1110045 (15.05.2024):

109 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.:

110 Կարմիրգյուղում բացվեց Արցախյան ազատամարտի զոհերի և հայրենյաց պաշտպանների հուշարձանը, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/951363 (15.05.2024):

րակառույց եկեղեցու բակում ևս, որը գտնվում է գյուղի կենտրոնում՝ վարչական շենքի հարևանությամբ, հուշաքար-խաչքար է տեղադրված՝ «*յանուն հայրենիքի նահատակ քաջորդեաց*» գրությամբ:

Վայոց Ձորի մարզում ձևավորված հուշարձանային տարածքները համեմատաբար քիչ էին: Արին գյուղում հուշարձանային համալիրը՝ նվիրված Վայքի և Ջերմուկի տարածաշրջանի բոլոր զոհերի հիշատակին, կառուցվել է գյուղի՝ տվյալ ժամանակաշրջանի համայնքապետի որդիների նախաձեռնությամբ՝ ընտանեկան միջոցներով (նկար 21): Համայնքային նշանակության այդ հողատարածքը, որը գտնվում է գյուղի կենտրոնում՝ վարչական շենքի դիմացի մայթին, նախատեսված է եղել մանկական խաղահրապարակի կառուցման համար: Նախկին համայնքապետն իր խոսքում նշեց, որ ի սկզբանե քննարկվել է նաև հուշարձանը Վայք քաղաքում տեղադրելու տարբերակը, սակայն հետո նպատակահարմար են գտել գյուղում տեղադրելը. «*Սկզբում Վայքում էինք ուզում տեղադրել, հետո որոշեցինք գյուղում սարքել: Մեր մտահղացումն է եղել, ընտանիքով կառուցել ենք: Տեղը նախատեսված էր երեխաների խաղահրապարակի համար: Պատերազմը, որ եղավ, որոշեցինք հուշարձանը կառուցել*» (հարցազրույց նախկին համայնքապետի հետ)[111]:

Արենի գյուղի կենտրոնում՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին կառուցված հուշահամալիրի տարածքում, տեղադրվում է նաև Արցախյան երկու պատերազմների զոհերին նվիրված հուշարձան: Քիչ այն կողմ՝ կրկին կենտրոնական փողոցում, կառուցված է զրուցարան, որտեղ առկա է հուշաղբյուր՝ զոհվածներից մեկի հիշատակին նվիրված (նկար 22):

Ջերմուկ քաղաքում ձախափնյակից աջափնյակ տանող մայրուղու վրա դեռևս 90-ականներից տեղադրված էր Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Ձախափնյակում՝ Ջերմուկի Սուրբ Գայանե եկեղեցու բակում, 44-օրյա պատերազմից հետո տեղադրվում է ընդհանրական հուշարձան-խաչքար՝ «*Խոնարհումով արցախյան զոհերի հիշատակին, 2021 թ.*» գրությամբ (նկար 23):

Տավուշի մարզում ևս համայնքային իշխանությունների և բարերարների կողմից տեղադրված հուշարձանները գտնվում են գյուղի

[111] Անմահացած մեր հերոսներ, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=STTZZEAxhgQ (15.05.2024):

կենտրոնական հատվածներում կամ կառուցվում են արդեն կանգուն հուշարձանների կողքին: Սահմանամերձ Կիրանց գյուղում 44-օրյա պատերազմից հետո վերաձևավորվում է դեռևս Հայրենական Մեծ պատերազմից հետո ձևավորված հուշարձանային լանդշաֆտը, որտեղ նաև Արցախյան առաջին պատերազմից հետո տեղադրված հուշարձան կա: Վերջինիս մոտակայքում գտնվում է նաև եկեղեցին: Գյուղի վարչական ղեկավարի նախաձեռնությամբ տեղադրվում են 44-օրյա պատերազմում զոհված տղաների հուշաքարերը (նկար 24) և միջազգային կազմակերպության հովանավորությամբ կառուցվում մանկական խաղահրապարակ:

Սևքար գյուղում հուշարձանի տեղադրման վայրը կրկին գյուղի կենտրոնական մասում է, որի չորս կողմում հանրային նշանակության շենքեր են՝ մշակույթի տունը, երաժշտական դպրոցը, փոստատունը, գյուղի վարչական շենքը: Հաղարծին գյուղում ևս Արցախյան պատերազմների զոհերին նվիրված հուշարձան-խաչքարը կառուցվում է բարերարների՝ արտասահմանաբնակ հաղարծինցիների հովանավորությամբ: Այն կանգնեցվում է Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի տարածքում, որը գտնվում է գյուղի կենտրոնական փողոցում՝ վարչական շենքի հարևանությամբ, ճամփեզրին: Այստեղ կառուցվել է նաև մանկական խաղահրապարակ՝ հուշարձանի տարածք գյուղացիների մուտքն ապահովելու և նրանց ժամանցը կազմակերպելու նպատակով (նկար 25):

Աչաջուր գյուղում համայնքային իշխանությունները զոհված տղաների հիշատակը հավերժացնում են գյուղի կենտրոնական մասում նրանց դիմանկարները պատկերելով, որտեղ դեռևս 90-ականներից տեղադրված էր խաչքար՝ «*Ի հիշատակ Արցախյան պատերազմում ընկած հերոսների*» գրությամբ: Արարատի մարզի Արարատ գյուղում ևս համայնքային իշխանությունների նախաձեռնությամբ և բարերարների աջակցությամբ կառուցվում է հուշարձան-պուրակ՝ ի հիշատակ Արցախյան պատերազմում նահատակված, Արարատ գյուղում ծնված հերոսների: Հուշարձան-պուրակը գտնվում է գյուղի կենտրոնում՝ վարչական շենքի հարևանությամբ:

Արմաշ գյուղում համագյուղացիների և բարերարների ջանքերով բացված հուշահամալիրը գտնվում է գյուղի ծայրամասում՝ որպես Ար-

ցախյան բոլոր պատերազմների պաշտոնական հիշատակման խորհրդանիշ: Զոհերի հիշատակը հավերժացնող հուշապատին փակցված են գյուղի տասնմեկ զոհերի նկարները, որոնցից հինգն ընկել են 44-օրյա պատերազմում: Համալիրի կենտրոնական մասում տեղադրված է խաչքարը:

Սյունիքի մարզում համայնքային իշխանությունների կողմից տեղադրված հուշարձանները՝ որպես պաշտոնական հիշատակման խորհրդանիշ, գտնվում էին պանթեոնների տարածքում: Սյունիքի մարզի մեր դիտարկած բնակավայրերում պանթեոններից բացի մյուս տարածքներում տեղադրված հուշարձանները կանգնեցվել էին զոհվածների ընտանիքի, ընկերների կողմից: Անհատների կողմից հուշարձաններ տեղադրելու հարցի նկատմամբ մարզի քաղաքային իշխանություններն ունեին իրենց սահմանած քաղաքականությունը, որին աշխատում էին հետևել: Ահա Կապանի համայնքապետարանում արված հարցազրույցից մի հատված. «*…Դժվար է հիմա համապարած նմանատիպ հուշարձանների կառուցման թույլտվություններ տալ: Հիմնականում փորձում ենք թույլ տալ այնտեղ, որտեղ արդեն կա: Եթե իրենց բակում կա ցայտաղբյուր, կարող են անվանակոչել զոհվածի անունով: Եթե գալիս են ու ուզում են մոտավորապես տապանաքարի տեսքով իրենց բակում հուշարձան դնել, դա գերեզմանի է նմանվելու: Նորը հարց է՝ թույլատրե՞լ, թե՞ չէ: Այստեղ նաև քաղաքի ճարտարապետական տեսքն է կարևոր: Մարդ է եղել, որ սարքել է արդեն, հո՞ չենք գնալու ասենք՝ ինչո՞ւ եք սարքել, քանդե՛ք*» (հարցազրույց Կապանի փոխքաղաքապետի հետ)[112]:

Դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ որոշ բնակավայրերում անհատների (ընտանիքի, ընկերների կամ, պարզապես, համաքաղաքացիների) կողմից հիշատակման ձև էր ընտրվել գրաֆիտիները, որոնք արվել էին հասարակական և պետական նշանակության կամ բնակելի շենքերի պատերին: Այդպիսիք հանդիպեցին Իջևան, Եղեգնաձոր, Ջերմուկ, Սիսիան քաղաքներում, Տավուշի մարզի Աչաջուր, Սևքար, Հաղարծին գյուղերում: Անհատական մակարդակով իրականացված այս միջոցառումները հարազատի, ընկերոջ, համաքաղաքացու հիշատակն ինչոր ձևով հավերժացնելու խորհուրդ ունեին իրենց մեջ, անցորդներին պա-

[112] ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022 թ.:

տերազմի զոհերի մասին հիշեցնելու անթաքույց գործառույթ: Սակայն, հատկապես քաղաքային իշխանություններն ունեին նմանօրինակ հիշատակումը չընդունելու վերաբերյալ իրենց հիմնավորումները: Օրինակ, այս հարցի մասին Մարտունու համայնքապետարանում հետևյալ տեսակետն արտահայտեցին. «*Մի քանի մշակույթի տների պատերին կան նկարներ: Մարտունի քաղաքում՝ չէ, չկան: Զորագյուղում կա, Երանոսում: Խոշորացված համայնքի մեջ են մտնում այդ գյուղերը: Ճիշտն ասած, էլի ցանկություն հայտնել են, բայց մենք դեմ ենք եղել, որովհետև, ենթադրենք, որոշ ժամանակ հետո էդ շենքը վերանորոգվի, ու էդ հատվածը երեսպատեն: Էդ ժամանակ կգան և կասեն՝ չեն հարգում մեր զոհվածներին: Եղել են դեպքեր, որ մինչև խոշորացումը անհատապես արել են ծնողները: Խոշորացումից հետո քննարկեցինք, որոշեցինք, որ դա այնքան էլ ճիշտ չէ*» (հարցազրույց Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալի հետ)[113]:

Որպես օրինաչափություն կարող ենք արձանագրել, որ դիտարկված մի շարք բնակավայրերում համայնքային իշխանություններն իրենց պատասխանատվության ներքո են վերցրել անհատների կողմից կանգնեցված հուշարձանների տարածքը բարեկարգելու, կանաչապատելու, երբեմն նաև նստարաններ տեղադրելու աշխատանքները: Նմանատիպ դեպքերի հանդիպեցինք Կապանում, Եղեգնաձորում, Ջերմուկում և Արտաշատում: Այս բոլոր հուշարձանները կառուցվել էին ընտանիքի կողմից՝ զոհվածների շենքերի բակում: Այսպես, Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի շենքերից մեկի բակում տեղադրված էր ցայտաղբյուր, որի տարածքը բարեկարգվել էր համայնքապետարանի միջոցներով: Նույն Կապան քաղաքի Գ. Նժդեհ փողոցի շենքերից մեկի բակում տեղադրված էր խաչքար՝ նվիրված բակի 2 զոհվածների հիշատակին (զոհվածներից մեկի հոր նախաձեռնությամբ և միջոցներով): Տարածքի ցանկապատումը, ասֆալտապատումը կատարվել էր համայնքապետարանի միջոցներով: Եղեգնաձորում շենքերից մեկի բակում՝ համայնքային հողի վրա, կառուցված էր հուշաղբյուր: Համայնքապետարանի կողմից բարեկարգվել էր տարածքը և տեղադրվել նստարաններ: Ջերմուկ քաղաքում ևս կառուցված ցայտաղբյուրի շուրջ բարեկարգման աշխատանքները կատարվել էին համայնքապետարանի կողմից: Արտաշատցի զոհերից

[113] ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023 թ.:

մեկի հիշատակին նվիրված խաչքար-հուշակոթողը կանգնեցվել էր նրա հարազատ բակում՝ բնակիչների կողմից, իսկ համայնքի ավագանու ջանքերով բարեկարգվել տարածքը:

Սակայն, զոհվածների շենքերի բակերում տեղադրված հուշարձանները միայն վերը թվարկվածները չէին: Նմանատիպ հուշարձանային տարածքներ շատ հանդիպեցին հատկապես Սյունիքի մարզում՝ Սիսիան և Գորիս քաղաքներում: Օրինակ, Գորիսի Նոր Վանքի տափ թաղամասում՝ մի քանի շենքերի բակ հանդիսացող տարածքում, տեղադրված էր ցայտաղբյուր՝ խաչքարի տեսքով, և առանձին խաչքար: Հուշարձանի մաս էին կազմում նաև քարե սեղան-նստարանները: Հուշարձանային այս տարածքը տեսանելի չէր հիմնական փողոցից: Կարելի է ասել՝ դրա խորհուրդն ուղղված էր միայն բակի բնակիչներին: Նմանօրինակ երկու հուշարձաններ էլ գտնվում էին Սիսիան քաղաքի երկու տարբեր շենքերի բակում՝ մեկը նվիրված հրետանու սպա, հրամանատար Վարդան Դավթյանի հիշատակին, մյուսը՝ Հայկ Գրիգորյանի: Այս վերջին հուշարձանի կողքին գտնվում էր նաև մանկական խաղահրապարակ: Կրկին շենքերի բակում՝ տեսանելի միայն այդտեղի բնակիչների համար, մի փոքրիկ ցայտաղբյուր էլ տեղադրված էր Իջևան քաղաքում՝ նվիրված նույն շենքում ապրող զոհված ընկերոջ հիշատակին:

Երևանյան շենքերի բակում ևս 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված բազմաթիվ հուշարձաններ կան տեղադրված: Այդպիսիք հանդիպել են Երևանի տարբեր վարչական շրջաններում: Որպես օրինակ նշենք Դավթաշեն 1-ին թաղամասի 14 շենքի բակում զոհվածի հիշատակին նվիրված խաչքարը, որը տեղադրվել է ընկերների կողմից: Մալաթիա-Սեբաստիա համայնքի Սեբաստիա փողոցի 3/3 շենքի բակում կանգնեցված է խաչքար-հուշարձան: Աջափնյակում՝ Նազարբեկյան 31 շենքի բակում վեր խոյացած հուշաղբյուր-հուշարձանը կառուցվել է նույն բակի երկու զոհված տղաների հիշատակին: Այս և նմանատիպ շատ հուշարձաններ առաջին հերթին զոհվածների հիշատակը՝ իրենց հարազատ բակերում վառ պահելու խորհուրդն ունեն:

Դիտարկված բնակավայրերում հուշարձանները տեղադրվել են ոչ միայն շենքերի բակային, այլ նաև փողոցի կողմից տեսանելի տարածքներում: Օրինակ, Գորիս մտնող գլխավոր փողոցի վրա՝ շենքերից մեկի բակում, որի հարևանությամբ խանութ էր, արդեն առկա ցայտաղբյուրի

կողքին կանգնեցված է խաչքար: Հուշարձանային այս տարածքը տեսանելի է Գորիս մտնող յուրաքանչյուր այցելուի համար: Ավելին, տարածքում տեղադրված են նստարաններ, որտեղ իրենց ազատ ժամանակն են անցկացնում մեծահասակները: Հուշարձանի տեղադրման նախաձեռնողները և իրականացնողները այդ փողոցի տղաներն են, որոնք իրենց պարտքն են համարել նույն փողոցի երկու տղաների հիշատակին խաչքար կանգնեցնել (նկար 26):

Գորիսի կենտրոնական փողոցներից ևս մեկում՝ արդեն սեփական առանձնատան պարիսպների մեջ հուշաղբյուր է կառուցված: Հարևանությամբ գտնվում է նաև խանութ և դեղատուն, որը պատկանում է զոհվածի ընտանիքին (նկար 27): Փողոցում անցորդների պակաս չկա, իսկ հուշաղբյուրն ունենում է բազմաթիվ այցելուներ: Սիսիանում ևս՝ առանձնատների թաղամասում, մի քանի հուշարձանային տարածքներ մեր դիտարկման տիրույթում հայտնվեցին: Իրենց սեփական տան բակերում՝ փողոցի վրա, ցայտաղբյուրներ և հուշաքարեր կային տեղադրված Սիսիանի Իսրայելյան և Պարույր Սևակ փողոցներում:

Սիսիանում՝ դեպի պանթեոն տանող ճանապարհի խաչմերուկներից մեկում կառուցված է խորհրդանշական մի հուշահամալիր՝ արծվի տեսքով հուշաղբյուր, 44 թիվը խորհրդանշող փամփուշտներ, այուների վրա զոհվածի անունը, խաչեր և այլն (նկար 28): Այն կառուցվել է զոհվածի ընտանիքի և հարազատների կողմից՝ սեփական հողատարածքում: Զոհվածի հորեղբայրը մանրամասներ է պատմում կառուցման ընթացքից. «*Մեր հուշարձանը մենք ենք դրել, մեր փարածքն ա, սահման չենք հատել: Կարող ա հուշարձանը դնելիս պետք էր դիմել քաղաքապետարան, թղթով անել, բայց, մինչև դնելը, ես գնացել եմ համայնքապետարան, ներկայացրել՝ ինչ ենք ուզում անել մեր սահմանում: Ասեցին՝ «ոչ մի խնդիր չունեք»*» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[114]: Այս տարածքին մոտ դպրոց կա, և հուշարձանի կողքով անցնում են բազմաթիվ երեխաներ: Կառուցման նպատակների մասին էլ պատմում է զոհվածի մայրը. «*Ամենաառաջինը՝ որպես պատմության դաս՝ սերունդներին փոխանցվող, որ մեր հերոսները և նրանց արածները գնահատվեն, հիշվեն: Առաջին նպատակը դա ա եղել: Ավելի շատ՝ դա, ոչ թե՝ անձնավորելը, հերո-*

[114] ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023 թ.:

սացնելը: Ինքն էլ, քանի որ այս տանն էր ծնվել, մեծացել, որոշեցինք հենց տան առաջ տեղադրել» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[115]:

Սիսիանում մյուս խորհրդանշական հուշարձանը գտնվում է քաղաքի երկրորդային փողոցներից մեկում: Կրկին սեփական հողատարածքում՝ անմիջապես տան պատուհանների տակ, զոհվածի ընտանիքը ստեղծել է հուշարձանային տարածքը՝ տեղադրել նոնակի տեսքով հուշաղբյուր (զոհվել է նոնակից), «հրետանի», սեղան-նստարան, տնկել ծառ ու ծաղիկ (նկար 29): Տան ցանկապատին մեծամասշտաբ նկարված է նաև զոհվածի նկարը: Հուշարձանի կառուցման նպատակը նրա հիշատակը հավերժացնելն է, իսկ տարածքը, ըստ մոր պատմածի, պայմանավորված է հուշարձանի տեսակով. «*Աղբյուրը շատ պատահական ստացվեց: Նկարը, որ նկարեցինք պատին, ինքնաբուխ ստացվեց, որ պետք ա աղբյուրը լինի մի փոքրիկ հատվածում: Վահագնի պատմությունից հետո ես որոշել էի մատուռ կառուցել: Ես գիտեմ, որ զոհվածների համար մեր մոտ ընդունված ա «բեսեդկաներ» ու խաչքարեր դնել: Ես որոշել էի, որ «բեսեդկա» չեմ դնելու, մատուռ եմ կանգնեցնելու, որովհետև իր ծնված օրն էլ, մարմինը գտնելու օրն էլ սուրբ թվերի հետ են կապված: Բայց քահանան ինձ ասաց՝ մինչև հավատքի չգաս, քո կառուցած մատուռը իմաստ չունի*» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[116]:

Չնայած այս դեպքում զոհվածի մոր մտադրությունն իրականություն չի դառնում, սակայն դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում մենք հանդիպեցինք արդեն կառուցված երկու մատուռների, որոնք կանգնեցվել էին զոհվածների ընտանիքների կողմից՝ նրանց հիշատակը հավերժացնելու համար: Մատուռներից մեկը Սյունիքի մարզում էր՝ Քաջարանի շրջանի Լեռնաձոր գյուղում (նկար 30): Այն կառուցվել էր ընտանիքի կողմից՝ զոհվածի տան ճանապարհին: Մայրը պատմում է մատուռի կառուցման և տեղի ընտրության մանրամասները. «*Հայրը ասաց, — ես ընենց հիշատակ պետք է թողնեմ, որ դարեր մնա. ես պիտի եկեղեցի կառուցեմ՝ Արմենի անունով: Արմենից հետո իրեն արժանի հիշողությունը հայրը համարեց, որ պետք է եկեղեցին լինի: Երկար ժամանակ տեղ փնտրեցինք: Ուզում էինք գյուղում լինի: Ճիշտ է, Արմենն այստեղ չի ապրել, Քաջարանի տանն էր ապրում, բայց եկանք այստեղ:*

115 Նույն տեղում:

116 Նույն տեղում:

Մեր հարևանի հին գումն էր, վաղուց չէր օգտագործվում: Ասացի՝ հարևանին հարցնի, գուցե՞ կհամաձայնի քանդենք: Համ էլ մեր տանը մոտիկ կլինի: Հարևանն էլ ասաց, — ես վատառողջ եմ, չեմ կարող ձեզ մերժել: Քանդելը՝ ձեզնից, ինչ ուզում եք՝ արե՛ք, Արմենին ես ո՞նց կարամ մերժեմ» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[117]: Այս եկեղեցու բակում տեղադրված էր նաև խաչքար՝ նույն գյուղի մեկ այլ զոհված տղայի հիշատակին: Այն տեղադրվել էր վերջինիս ծնողների կողմից, և ինչպես մայրն է ասում՝ «*մեր հոգու հանգստության համար*»:

Մյուս եկեղեցին կառուցված էր Տավուշի մարզի Աչաջուր գյուղում: Միակ որդուն կորցրած ծնողներն իրենց վիշտը սփոփում են որդու երազանքը *(«միշտ ուզում էր գյուղում եկեղեցի լինի ու քաղաքում տուն ունենա»)* կատարելու միջոցով՝ գյուղի կենտրոնից դեպի զոհվածի տան ճանապարհի միջնամասում հենց պատերազմի հաջորդ տարին եկեղեցու կառուցման հիմքերը դնելով: Ինչպես նախորդ, այնպես էլ այս դեպքում տարածքի ընտրությունը պայմանավորված էր իրենց տանը մոտ լինելու հանգամանքով: Եկեղեցին տեսանելի էր նաև զոհվածի տան բակից, ինչը շատ կարևոր էր մոր համար. «*Ներքև եմ նայում՝ եկեղեցին եմ տեսնում, վերև եմ նայում՝ դրոշն է. գերեզմանի մոտ շատ մեծ դրոշ ենք դրել՝ լույսով: Էս տարածքը մեր գյուղի բժշկինն է եղել, նվիրել է մեզ: Մենք ուզեցինք առնել, ասեց՝ անհատույց կնվիրեմ: Կողքից մի քիչ էլ համայքինն է եղել: Կվերցնենք, փաստաթղթերը կսարքենք*» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[118]: Ծնողները եկեղեցին կառուցելով հավերժացնում են իրենց որդու հիշատակը, միաժամանակ կատարում նրա երազանքներից մեկը, դրանով մխիթարում իրենց և վերջում՝ սեփական նախաձեռնությամբ կառուցած եկեղեցին նվիրում Արցախյան պատերազմի բոլոր հերոսների հիշատակին: Ընտանիքը եկեղեցուն հարող տարածքը ևս մտադիր է օգտագործել՝ վերածելով անվանական այգու, որտեղ տնկվող ծառերը կխորհրդանշեն հայ ժողովրդի կյանքի շարունակությունը, ինչի համար իրենց որդին զոհել է իր կյանքը:

Հուշարձանը սեփական տան բակից ու պատուհաններից երևալու հանգամանքը կարևոր է եղել նաև հաջորդ երկու դեպքերում: Այսպես,

---

117 Նույն տեղում:

118 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022 թ.:

Տավուշի մարզի Աճարկուտ գյուղի հուշահամալիրը՝ նվիրված գյուղի միակ զոհին, կառուցված է զոհվածի տան մոտակայքում, այնպես, որ տան բակից ու պատուհաններից երևում է արդեն սրբություն դարձած տարածքը: Հուշարձանային համալիրում կարևոր դեր ունի զոհվածի կիսանդրին, որը, ըստ տեղադրողների և համագյուղացիների, խորհրդանշում է պատերազմի բոլոր զոհերին: Հուշարձանի կանգնեցմանը զուգահեռ բարեկարգվում է համալիրի տարածքը, վերածվում խաղահրապարակի և նվիրվում Աճարկուտ գյուղի երեխաներին՝ ի հիշատակ հերոս Դավիթ Շահնազարյանի (նկար 31):

Մյուս հուշարձանը՝ կարծես կրկին երեխաների համար կառուցված, գտնվում է Քաջարան քաղաքում: Զոհվածի շենքի դիմացի մայթին՝ այնպես, որ հուշարձանային տարածքը տեսանելի լինի պատուհանից, ծնողների կողմից տեղադրվում է ցայտաղբյուր, բարեկարգվում, կանաչապատվում է շրջակայքը և տեղադրվում են նստարաններ: Հուշարձանի մոտակայքում գտնվում են այն դպրոցն ու մանկապարտեզը, որտեղ հաճախել է տղան (նկար 32): Ահա զոհվածի մոր հետ հարցազրույցից մի հատված՝ հուշարձանի տարածքի և կառուցման հիմքում դրված իմաստի վերաբերյալ. «*Այստեղ հենց մեր տան պատուհաններից է երևում: Տեղն այնպիսին է, որ դպրոցի ու մանկապարտեզի ճանապարհ է: Մի կողմում Արտաշեսի մանկապարտեզն է, մյուս կողմում՝ դպրոցը: Հենց խորհուրդը դա է: Ու էս ճանապարհի վրա ցայտաղբյուր չկար իրականում: Եթե ավելի մեծ տարածք լիներ, ես կուզեի մանկական խաղահրապարակի նման մի բան լիներ: Բայց, միևնույնն է, երեխաները խաղում են, շատ են սիրում էս տեղը: Եթե դուք մի քիչ շուտ գայիք, ժամը 5-ին երեխաները դուրս են գալիս ճամբարից, ու էստեղ հերթ է հավաքվում: Երբ ես պատուհանից եմ նայում կամ տեսնում եմ, չգիտեմ, թե՛ մխիթարանք է, թե՛ սփոփանք է*» (հարցազրույց զոհվածի մոր հետ)[119]:

Անհատների կողմից հուշարձանի տեղադրման տարածքի յուրօրինակ դեպքեր են համարվում այս մասում ներկայացված վերջին երկու հուշարձանները: Դիլիջան քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում՝ խանութի հարևանությամբ, նույն խանութի սեփականատերը քաղաքի բոլոր զոհված տղաների հիշատակին (նրանց մի մասին անձամբ է ճա-

[119] ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022 թ.:

նաչում կամ ընկեր է) տեղադրում է խաչքար-ցայտաղբյուր և նստարան, բարեկարգում, տարածքը և տարբեր մասերում արձանագրում Արցախի տեղանունները (նկար 33)։ Հուշարձանի կառուցման նախաձեռնողն այսպես է մեկնաբանում տարածքի ընտրությունը. «*Մեկն ասում էր, թե փողոցի վրա է, մյուսն էլ, թե առանձին տեղ պիտի լինի։ Բայց, դե, իմ սեփական տարածքը սա է, «ակուրատնի» արել եմ» (հարցազրույց հուշարձանի տեղադրման նախաձեռնողի հետ)*[120]։

Եվ վերջին ու մեզ հանդիպած միակ օրինակը, որ զոհվածի այրին հուշարձան-խաչքարը տեղադրել էր ավելի հանրային վայրում՝ քաղաքային զբոսայգում, քան զոհվածների փողոցն ու բակն է։

Ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ համայնքային իշխանությունների և բարերարների կողմից հուշարձանները կառուցված էին գյուղերի և քաղաքների կենտրոնական հատվածներում կամ արդեն կանգուն հուշարձանների կողքին։ Այն բնակավայրերում, որտեղ բացակայում էին Արցախյան առաջին պատերազմին նվիրված հուշարձանները, նոր կառուցվածները դառնում էին Արցախյան բոլոր պատերազմների պաշտոնական հիշատակման խորհրդանիշ։ Անհատների կողմից տեղադրված հուշարձանները բազմաթիվ ու բազմատեսակ էին և ընդգրկում էին բնակավայրերի հիմնական և երկրորդային փողոցները, շենքերի բակերը, խաչմերուկները, նույնիսկ զբոսայգիները։ 44-օրյա պատերազմի հիշատակման յուրօրինակ ձև է դառնում նաև անհատների կողմից պատերին արված գրաֆիտիները։

[120] ԴԱՆ, Տավուշի մարզ, 2023 թ.։

ԳԼՈՒԽ IV
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Զոհերի հիշատակման պաշտոնական և ոչ պաշտոնական պրակտիկաները

Անցյալի հանրային հիշատակումն էապես ենթարկվում է «օրացուցային տրամաբանությանը», ինչը հատկապես արտահայտվում է տոնների և հիշատակման օրերի համատեքստում: Առավել նշանակալի պատմական իրադարձությունների կապակցությամբ յուրաքանչյուր տարի կազմակերպվում է հիշատակում: Հիշատակման ամենակայուն ձևերը ծեսերն են, որոնք սովորաբար սոցիալական ստանդարտացված, կրկնվող սիմվոլիկ գործողություններն են: Որպես կանոն, պատերազմի հիշատակման ծեսերն արտահայտվում են ծաղկեդրման, ջահերով երթերի, զոհվածների անունների ցուցակը կարդալու տեսքով[121]:

Պատերազմից հետո կառավարության նախաձեռնած առաջին հանրային միջոցառումներից մեկը 2020 թ. դեկտեմբերի 19-ին՝ 44-օրյա պատերազմին հետևած 40-րդ օրը Եռաբլուր այցն էր: Այդ օրվանից պատերազմի զոհերի հիշատակին եռօրյա սուգ հայտարարվեց Հայաստանում և Արցախում[122]: Հանրապետության վարչապետի ստորագրած որոշման մեջ մասնավորապես նշվում էր. «Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված ռազմական գործողությունների հետևան-

---

121 Օ. Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, էջ 20:

122 Լ. Խառատյան, Գ. Շագոյան, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, էջ 20:

քով Հայրենիքի պաշտպանության համար զոհված մեր նահատակների հիշատակը ոգեկոչելու նպատակով՝ 2020 թվականի դեկտեմբերի 19-21-ը ներառյալ, Հայաստանի Հանրապետությունում հայտարարել սուգ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին և առաջարկել համայնքների ղեկավարներին ապահովել «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների կատարումը»[123]:

Եռօրյա սգի առաջին օրը Հանրապետության Հրապարակից մեկնարկեց պատերազմում զոհվածների հիշատակի սգո երթը դեպի Եռաբլուր: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 20-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Հայաստանի եկեղեցիներում Սուրբ Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Արցախյան պատերազմում նահատակված հերոսների հոգիների խաղաղության համար[124]:

2021 թվականի սեպտեմբերի 27-ին՝ 44-օրյա պատերազմի առաջին տարելիցին «Եռաբլուր» զինվորական պանթեոն են այցելել և ծաղկեդրում կատարել բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ և դեսպաններ[125], մասնավորապես՝ ՀՀ վարչապետը[126], փոխվարչապետը[127], Ազգային ժողովի նախագահը[128], պաշտպանության նախարարը, արդարադատության նախարարը[129] և այլք:

Պաշտոնական լրահոսի վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտո-

---

123 Վարչապետը ստորագրել է Հայաստանում եռօրյա սուգ հայտարարելու որոշում, https://armenpress.am/hy/article/1037889, (20.06.2024):

124 ՀՀ-ում և Արցախի Հանրապետությունում եռօրյա սուգ է. ինչ է արգելվում սգո օրերին, https://hy.armradio.am/archives/309764, (20.06.2024):

125 ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները, դեսպաններն այցելում են Եռաբլուր, https://armtimes.com/hy/article/221717, (25.06.2024):

126 Վարչապետը հարգանքի տուրք է մատուցել 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հիշատակին (լուսանկարներ, տեսանյութ), https://armtimes.com/hy/article/221722, 25.06.2024:

127 Փոխվարչապետ Սուրեն Պապիկյանն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://www.gov.am/am/news/item/15125/, (25.06.2024):

128 Խնկարկում և հարգանքի տուրք՝ Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին, https://medialab.am/187754/, (25.06.2024):

129 «Եռաբլուր» զինվորական պանթեոն է այցելել Արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, https://armtimes.com/hy/article/221750, (25.06.2024):

նատար այրերի կողմից պատերազմի զոհերի հիշատակման միջոցառումները կատարվում են պետական նշանակություն ունեցող տոների առթիվ՝ Անկախության օր (սեպտեմբերի 21), ՀՀ ԶՈՒ օր (հունվարի 28), Հաղթանակի օր (մայիսի 9)[130] կամ պատերազմի սկզբի (սեպտեմբերի 27) և ավարտի (նոյեմբերի 9)[131] տարելիցներին: Որպես կանոն, հիշատակման պաշտոնական միջոցառումները տեղի են ունենում զինվորական պանթեոններում: Այսպես, օրինակ, 2021 թվականի հունվարի 28-ին՝ Բանակի օրվա առթիվ Եռաբլուր են այցելել վարչապետ Ն. Փաշինյանն ու ՀՀ բարձրագույն ղեկավարությունը՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի պաշտպանության համար նահատակվածների հիշատակին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմի ավարտից անցել էր ընդամենը մի քանի ամիս, Հայոց բանակի ստեղծման օրը նշվել է առանց ավանդական մեծ հանդիսությունների, տոնակատարությունների և համերգների[132]:

Վերլուծելով պաշտոնական լրահոսը և հոդվածներին կից տեղադրված լուսանկարները, կարող ենք փաստել, որ նախկինում ընդունված պաշտոնական արարողակարգից բացի, երբ պետական նշանակության տոների առթիվ ծաղկեդրում էր կատարվում Սպարապետ Վազգեն Սարգսյանի և Անդրանիկ Օզանյանի շիրիմներին, պատերազմից հետո ծաղիկներ են խոնարհվում նաև 44-օրյա պատերազմի զոհերի շիրիմներին: Օրինակ, ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության տարածած հաղորդագրության և լուսանկարների՝ 2021 թվականի սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության հռչակման 30-ամյակի կապակցությամբ ՀՀ վարչապետը, նախագահը և բարձրագույն ղեկավարությունը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հարգանքի տուրք են մատուցել Արցախյան 44-օրյա և քառօրյա պատերազմների հերոսների հիշատակին, ծաղիկներ դրել

---

130 Արարատ Միրզոյանն այցելել է «Եռաբլուր» պանթեոն, https://shabat.am/am/article/254469/Ararat-Mirzoyann-aycelel-e--YErablur-, (01.07.2024):

131 Վարչապետը լուսաբացին այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/11/09/Nikol-Pashinyan-visited-Erablur/, (25.06.2024):

132 Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու ՀՀ բարձրագույն ղեկավարությունն այցելել են Եռաբլուր, https://armtimes.com/hy/article/205353, (01.07.2024):

Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին և ծաղկեպսակ՝ հանուն Հայրենիքի կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին[133]:

Բացի պետական նշանակության տոներից, «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հիշատակման ծեսեր են իրականացվում նաև Նոր տարվա կապակցությամբ (դեկտեմբերի վերջին կամ տարեմուտին): Ինչպես, օրինակ, 2021 թվականի դեկտեմբերի 31-ին վարչապետը Եռաբլուրում հարգանքի տուրք է մատուցել Արցախյան պատերազմում Հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին[134], իսկ 2022 թվականի հունվարի 1-ին նահատակ քաջորդիների հոգիների հանգստության և խաղաղության համար աղոթք է բարձրացրել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:[135]

Հատկանշական է, որ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում պաշտոնական այցով հյուրընկալվող պատվիրակությունները, բացի Ծիծեռնակաբերդից, այցելում են նաև «Եռաբլուր» զինվորական պանթեոն: Օրինակ՝ 2023 թվականին Հայաստան այցելած Լիոնի քաղաքապետ Գրեգորի Դուսեն այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին և ծաղիկներ խոնարհել անմար կրակի մոտ, որից հետո Գրեգորի Դուսեն Եռաբլուրում ծաղիկներ է խոնարհել Արցախյան պատերազմների նահատակների հիշատակին[136]: Ավելի վաղ Եռաբլուրում ծաղկեդրում էր կատարել նաև Հայաստան այցելած ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը[137]:

---

133 Վարչապետը հարգանքի տուրք է մատուցել հանուն Հայրենիքի անկախության կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակին (տեսանյութ), https://armtimes.com/hy/article/221349, (01.07.2024):

134 Վարչապետն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն (տեսանյութ), https://armtimes.com/hy/article/228562, (01.07.2024):

135 Կաթողիկոսն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://www.shantnews.am/news/view/1048358.html, (01.07.2024):

136 Լիոնի քաղաքապետը ծաղիկներ է խոնարհել Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին (լուսանկարներ), https://armtimes.com/hy/article/257370, (01.07.2024):

137 ՀԱՊԿ գլխավոր քարտուղարն այցելել է «Եռաբլուր» պանթեոն (տեսանյութ), https://armtimes.com/hy/article/255575, (01.07.2024):

Պետական պաշտոնյաներից բացի, պատերազմի զոհերի հիշատակման արարողություններ է իրականացրել Հայ առաքելական եկեղեցին: 44-օրյա պատերազմից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից պատերազմին հաջորդած տարվա ընթացքում հոգեհանգստյան կարգ է կատարվել տաղավար տոներին[138] հաջորդող ննջեցյալների հիշատակության օրերին[139]:

Եկեղեցական տոներից բացի, կաթողիկոսի կողմից Եռաբլուրում հիշատակման արարողություններ են կատարվել նաև պետական նշանակության տոներին (Բանակի օր[140], Անկախության օր[141]):

Հարկ է նշել, որ հիշատակման պաշտոնական արարողություններն իրականացվում են ոչ միայն Եռաբլուրում, այլև սահմանամերձ բնակավայրերի պանթեոններում: Մասնավորապես, ընդունված պրակտիկա է դեպի պանթեոն քայլերթի կազմակերպումը: Օրինակ՝ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Անկախության 30-ամյակի առիթով Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի գլխավորությամբ տեղի ունեցավ երթ՝ դեպի քաղաքային պանթեոն[142]: 2023 թ. սեպտեմբերի 26-ին Քաջարանի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում տեղադրված հայտարարության մեջ նշվում է.

«ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

Հարգարժան հայրենակիցներ՝ սեպտեմբերի 27–ին՝ 44 օրյա պատերազմի 3–րդ տարելիցին, ժամը 13:00–ին՝ Քաջարան քաղաքի կենտրոնական պուրակից կմեկնարկենք երթ դեպի Քաջարանի Եղբայրա-

---

138 «Եռաբլուր» զինվորական պանթեոնում կատարվել է հոգեհանգստյան կարգ, https://www.shantnews.am/news/view/832527.html, (25.06.2024):

139 Կաթողիկոսն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://shabat.am/am/article/251940/Katoghikosn-aycelel-e--YErablur--zinvorakan, (25.06.2024):

140 Ամենայն հայոց կաթողիկոսը հոգևորականների ուղեկցությամբ այցելել է Եռաբլուր զինվորական պանթեոն, https://armtimes.com/hy/article/205384, (01.07.2024):

141 Կաթողիկոսն այցելել է Եռաբլուր, https://m.a1plus.am/hy/article/461920, (01.07.2024):

142 Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանի գլխավորությամբ տեղի ունեցավ երթ՝ դեպի քաղաքային պանթեոն, https://syuniacyerkir.am/sisian-hamaynqi-khekavari-pashtonakatar-armen-hakobjanyani-glkhavorutyamb-tekhi-unetsav-ert-depi-qakhaqayin-panteon, (01.07.2024):

կան պանթեոն՝ հարգանքի փուրք մատուցելու համուն հայրենիքի մարտիրոսված մեր հայորդիների շիրիմներին»[143]:

Ավելի բազմազան են անհատական հուշարձանների շուրջ ձևավորվող հիշատակման ոչ ֆորմալ պրակտիկաները: Այստեղ, մասնավորապես, կարևոր է ուշադրություն դարձնել հուշարձանների բացման արարողություններին, մասնակից հյուրերին և հնչող ելույթներին և ուղերձներին, հուշարձանի տեղադրումից հետո դրա տարածքում իրականացվող միջոցառումներին:

Թեև անհատական հուշարձանների նախաձեռնողները հաճախ լինում են զոհվածի հարազատները, ընկերները, դպրոցի տնօրենը կամ ուսուցիչները, խորին և փորձագիտական հարցազրույցները, համացանցային նյութի վերլուծությունը ցույց են տալիս, որ հուշարձանների բացման արարողությանը հիմնականում ներկա են լինում նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները (մարզպետ, համայնքապետ), ՋՈՒ ներկայացուցիչներ և հոգևորականներ:

Զոհվածների հուշարձանների բացման արարողությունները սովորաբար ունենում են կայուն կառուցվածք, պաշտոնական արարողակարգի սահմանված հաջորդականություն: Արարողության սկզբում ներկայացվում են զոհվածի կյանքը, ռազմական ուղին, հուշարձանի նախաձեռնողներին և հուշարձանի գաղափարը, որից հետո հուշարձանի նախաձեռնողները կամ զոհվածի հարազատները բացում են հուշարձանը: Հուշարձանի բացումից հետո այն օծվում է հոգևորականի կողմից, ինչին հաջորդում է ոչ պաշտոնական մասը՝ հայրենասիրական երգեր, զոհվածի մասին հիշողությունների ներկայացում: Ոչ պաշտոնական մասի ակտիվ մասնակիցներ են լինում նաև համայնքի դպրոցի կամ մշակույթի կենտրոնի սաները, ովքեր հանդես են գալիս ռազմահայրենասիրական երգերի կատարումներով, ասմունքով, ազգային պարերով, իսկ վերջում իրականացնում են ծաղկեդրում հուշարձանի մոտ:

Միջոցառման իրականացման տարածքը և մասնակիցները երբեմն նույնպես դառնում են հիշողության վիզուալ արտահայտման կրողներ:

---

143 Գրառումը՝ Քաջարանի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջից, 26.09.2023, https://www.facebook.com/profile/100064574356609/search/?q=%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A9%D5%A5%D5%B8%D5%B6&locale=hy_AM, (01.07.2024):

Այսպես, օրինակ, տարածքում կարող են փակցված լինել պատերազմի զոհերի լուսանկարները, ներկաները կարող են կրել շապիկներ կամ կրծքազարդեր՝ զոհվածների նկարներով:

Հիշատակման պրակտիկաները հետազոտելիս ուշադրություն են գրավում հիշատակման (*commemorative*) ելույթները: Այս իմաստով հատկանշական է, որ հուշարձանի բացման արարողությունը ոչ թե սգի արտահայտում է, այլ հայրենիքի համար պայքարի, վերածննդի արժեքների փոխանցում, ինչն արտահայտվում է հուշարձանի բացման արարողության ելույթներում:

Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքում հուշարձանի բացման արարողությանը հրավիրված պաշտոնյան նշում է. «*Պիտի դադարենք սգի մեջ ապրել և պիտի մտածենք՝ ինչպես անել, որ արյունով գծված սահմանները կարողանանք պահել քրտինքով: Հիմա պիտի կարողանանք հզորանալ, պիտի կարողանանք ուժեղ լինել, որպեսզի կարողանանք ապահովել մեր և մեր սերունդների անվտանգությունը, ապահովությունը*»:[144]

Նման գաղափարի արտահայտում ենք տեսնում նաև Երևանում տեղադրված հուշարձանի բացման արարողության ելույթներում. «*Այս բառերը, որ, եթե չլիներ պայքար, սուգը հավերժ կլիներ, շատ լավ են գիտակցել մեր տղաները, որ հիմա անմահացել են*»,[145] «*Թշնամին շատ հաճախ մեզ պարտադրում է պատերազմ: Եվ մենք էլ քաջաբար գնում ենք այդ պատերազմի՝ հիշելով, որ պիտի գնանք և պիտի հաղթենք: Այս փոքրիկ պարտությունը մի դիտեք որպես պարտություն, հաղթանակներն առջևում են: Մենք հաղթանակի գիտակցությամբ պիտի ապրենք*»:[146]

Հուշարձանների բացման արարողության հիմքում հաճախ հանուն խաղաղության պայքարի գաղափարն է, ինչն արտահայտվում է ինչպես

---

144 Սարուխանում կանգնեցվել է հուշակոթող՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերին, https://www.youtube.com/watch?v=T4Sr5T4JB2I, (02.07.2024):

145 Նազարբեկյան 31շ. բակում, բացվեց պատերազմում լեգենդ դարձած Միերի և Էրիկի անվամբ հուշաղբյուր-հուշարձան, https://www.youtube.com/watch?v=rkaYU6MgBJg&t=2418s, (02.07.2024):

146 Նազարբեկյան 31շ. բակում, բացվեց պատերազմում լեգենդ դարձած Միերի և Էրիկի անվամբ հուշաղբյուր-հուշարձան, https://www.youtube.com/watch?v=rkaYU6MgBJg&t=2418s, (02.07.2024):

ելույթներում, այնպես էլ ընտրված սիմվոլներում՝ հրեշտակների հանդերձանքով երեխաներ, աղավնիներ, սպիտակ փուչիկներ:

Մյուս կողմից, հուշարձաններն ուղերձ են հայրենակիցներին, համայնքի բնակիչներին՝ հիշելու պատերազմում նահատակվածներին, լինելու միասնական և շարունակելու նրանց գործը: Սյունիքի մարզի Կապան քաղաքում հուշարձանի բացման ելույթում զոհվածի հարազատը նշում է. «*Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է*»[147]:

Սարուխանում պատերազմի տարելիցին զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացմանը Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահը կարևորում է համայնքի համերաշխությունը. «*Մեր ցանկությունն է ու մաղթանքը, որ այն միասնականությունը, այն հարգանքը, այն սերը, համերաշխությունը որ մենք դրսևորել ենք 1 տարի առաջ պատերազմյան օրերին, այդ նույնը դրսևորենք նաև այս օրերին, որովհետև այս օրերը մեզ համար ևս մարտահրավեր են և հարգանքի տուրք են նահատակ հայորդիների առջև, թե մենք որքանով պետք է համերաշխ լինենք, որքանով մեկս մյուսի հանդեպ հարգալից լինենք՝ միասնականորեն վերստին ոտքի կանգնելու և կերտելու մեր լուսավոր ազգի օրերը*»[148]:

Հայրենիքի նկատմամբ ողջերի մոտ պատասխանատվության զգացումի ձևավորման անհրաժեշտության մասին ելույթներում խոսում են նաև հուշարձանն օծող հոգևորականները: Ճամբարակում զոհվածի հիշատակը հավերժացնող հուշարձանի բացման արարողության ընթացքում Գեղարքունյաց թեմի՝ Ճամբարակի տարածաշրջանի հոգևոր հովիվը նշում է. «*Այսօր մենք ամեն մեկս 1 կյանք ենք պարտք իրենց, որովհետև կյանքը Աստծու կողմից մարդկությանը տրված ամենամեծ պարգևն է: Այն հայրենիքի սահմանները, որ ներկված են մեր հերոս տղաների արյամբ, չի կարող մեզ համար զուտ հողակտոր լինել: Այդ հողակտորը, այսպես ասած, մեզ համար պետք է լինի հայրենիք, սրբազան հայրենիք,*

---

147 44 օրյա պատերազմի նահատակներին նվիրված հուշահամալիրի հանդիսավոր բացման արարողությունը Կապանում, https://www.youtube.com/watch?v=M-F9JUgWJbEo&t=59s, (02.07.2024):

148 Սարուխանում կանգնեցվել է հուշակոթող՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերին, https://www.youtube.com/watch?v=T4Sr5T4JB2I, (02.07.2024):

որի վրա 1000-ավոր երիտասարդներ իրենց ջահել կյանքն են թողել[149]»:

Այսպիսով, վերը նշված օրինակներով կարող ենք առանձնացնել զոհվածի հուշարձանի բացման արարողության ժամանակ հնչող ելույթների հիմնական գաղափարները՝ համայնքի միասնություն, պայքար հանուն հայրենիքի և խաղաղության, զոհվածներին հիշելու և նրանց կյանքի գնով հայրենիքն արժևորելու պարտավորվածություն: Պատերազմի զոհերի հուշարձանները համայնքի կողմից ընկալվում են ոչ թե սգի արտահայտման միջավայր, այլ վերածննդի, հուսալի ապագայի կերտման խորհրդանիշ, որը ճգնաժամային իրավիճակում պետք է սերունդներին փոխանցի հայրենիքի արժևորման գաղափարը:

Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ հուշարձանների դերը համայնքի հիշողության պրակտիկաների ձևավորման մեջ չի ավարտվում հուշարձանի բացման արարողությամբ: Հետազոտության նյութը ցույց է տալիս, որ համայնքի կարևոր միջոցառումների, հիշատակի և տոն օրերի անբաժան մաս են կազմում զոհվածների հուշարձանները, որոնց շուրջ էլ կառուցվում է ոչ պաշտոնական հիշատակումը: Եթե պաշտոնատար անձինք զոհերի հիշատակումն իրականացնում են պանթեոններում, ապա զոհվածի հարազատները, ընկերները, ուսուցիչները, համայնքի ներկայացուցիչները, բացի զոհվածի գերեզման այցելելուց և այնտեղ ծաղկեդրում կատարելուց, որպես հիշատակման վայր են ընտրում զոհվածի հուշարձանը:

Զոհվածի հուշարձանի մոտ ծաղիկներ են խոնարհում ինչպես զոհվածի ընտանիքի համար նշանակալի օրերին՝ զոհվածի ծննդյան օրը, մահվան տարելիցը («*Բացումն արել ենք մայիսին: Դրանից հետո արել ենք ծննդյան առիթը, հետո հիշատակի առիթը*»[150]), այնպես էլ պետական նշանակության տոներին, դպրոցական միջոցառումների շրջանակներում: Օրինակ՝ Սյունիքի մարզի դպրոցներից մեկի տնօրենը պատմում է հուշարձանի շուրջ տեղի ունեցած միջոցառումների մասին. «*Այստեղ մենք միջոցառում արել ենք հունվարի 28-ին՝ Բանակի օրվան նվիրված:*

---

149 Ճամբարակում բացվեց հերոս Սարգիս Ղազարյանի հիշատակը հավերժացնող արձանը, https://www.youtube.com/watch?v=Ur46AduKuis&t=43s, (02.07.2024):

150 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

Միջոցառում՝ ոչ թե լացուկոծով, այլ հարգանքի»:[151] Սյունքի մարզի մեկ այլ դպրոցի մոտ տեղադրված հուշարձանի մասին պատմում են. «*Անհայտ կորած զինվորների հիշատակին, մայիսի 9-ին 44-օրյային զոհված տղաների նկարներով մենք քայլերթ ենք կազմակերպել 1-ին դպրոցի հուշարձանից պանթեոն*»:[152]

Պատերազմի զոհերի մասին ոչ ֆորմալ հիշողություն է ձևավորվում նաև գրաֆիտիների միջոցով: Գրաֆիտիներն արտացոլում են հանրային արժեքներն ու մոտեցումները, վերաբերմունքը որոշակի իրադարձությունների նկատմամբ: 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում և ավարտից հետո սկսվեց և լայն տարածում ստացավ զոհված զինծառայողների նկարները տարբեր նշանակության շինությունների պատերին նկարելու գործընթացը[153]:

Ջոհված ի ընկերների, հարազատների, համայնքապետարանի նախաձեռնությամբ զոհվածների նկարները պատկերվում են համայնքապետարանի, մշակույթի տան, զոհվածի դպրոցի, բնակության շենքի պատին[154]: Բացի անհատական նախաձեռնությունից, դրանք երբեմն դառնում են սոցիալական խնդիրներ փոխանցող պատկերներ: Երևանում իրականացված հետազոտության ընթացքում մի շարք բակերում, գետնանցումներում զոհվածների պատկերներին կից հանդիպեցինք «Հիշենք մեր հերոսներին ու ապրենք մաքուր Հայաստանում» գրությունը: Նման նախաձեռնության հանդիպել ենք նաև Ապրիլյան 4-օրյա պատերազմից հետո, երբ ԵՊՀ տարբեր մասնաշենքերի պատերին պատկերվեցին Ռոբերտ Աբաջյանի, Արմենակ Ուրֆանյանի, Բենիամին Եղոյանի նկարները՝ ուսանողներին և անցորդներին ուղղված հայրենասիրական կոչերով. «Նա մինչև վերջին պահը դիրքը չլքեց, մի՛ լքիր հայրենիքդ», «Նրա առաքելությունն էր պաշտպանել, քո առաքելությունն է՝ սովորել», «Նրա զեն-

151 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

152 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

153 Հայաստանի պատմության թանգարան, Հավերժի ճամփորդները՝ մաս III, https://historymuseum.am/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%AA%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%D5%9D-%D5%B4%D5%A1%D5%BD-iii/, (02.07.2024):

154 Երևանում, օրինակ, գրաֆիտին երբեմն պատկերում են ոչ թե անմիջապես զոհվածի տան պատին, այլ կենտրոնական փողոցի շենքերից մեկի վրա՝ պատկերի ավելի տեսանելի լինելու նպատակով:

քը տանկն էր, քո զենքը գիտելիքն է»:[155] Ինչպես նշում են նախաձեռնողները, յուրաքանչյուր նկար ունի նաև հասարակությանն ուղղված հաղորդագրություն՝ հայրենիքը չլքելու և գիտելիքը զենք դարձնելու մասին: Ըստ ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի նախագահի. «*Եթե նկարների կողքով անցնող ամեն մարդ 10 վայրկյան մտածի գրված կոչերի մասին, կարծում եմ՝ մեր երկրի համար շահեկան եզրահանգման կգա: Թեկուզ այդ 10 վայրկյանների համար արժեր իրականացնել այս ծրագիրը, որպեսզի մարդիկ գիտակցեն հայրենիքն ավելի լավը տեսնելու անհրաժեշտությունը, ավելի լավ հայրենիք ունենալու կարևորությունը*»[156]:

44-օրյա պատերազմի զոհերին պատկերող գրաֆիտիները երբեմն ուղեկցվում են նաև զոհվածին կամ նրա գաղափարները, հանուն հայրենիքի արդար պայքարը ներկայացնող գրություններով, ինչպես, օրինակ, «Եվ որքան կուզեք աղավնիներ բաց թողեք, միևնույն է խաղաղություն բերում են արծիվները», «Հերոսները ծնկի չեն գալիս», «Մահ կամ ազատություն», «Քաջերի հարությունն է մահը»[157]:

Այնուամենայնիվ, գրաֆիտիների պատկերման վերաբերյալ վերաբերմունքը միանշանակ չէ, ինչպես հարցված փորձագետների, այնպես էլ, ըստ համացանցային նյութի դիտարկումների, քաղաքացիների շրջանում[158]:

Գեղարքունիքի մարզի բնակավայրերից մեկում փորձագետը գրաֆիտիների վերաբերյալ նշում է. «*Ճիշտն ասած, էլի ցանկություն հայտնել են, բայց մենք դեմ ենք եղել: Ենթադրենք, որոշ ժամանակ հետո էդ շենքը վերանորոգվի ու էդ հատվածը երեսպատեն: Էդ ժամանակ կգան և կա-*

---

155 Սա հորդոր է ուսանողներին ու անցորդներին. գրաֆիտի՝ քառօրյա պատերազմում զոհված հերոսների դիմանկարներով, https://www.1in.am/2019015.html, (18.06.2024):

156 Ապրիլյան պատերազմի հերոսների դիմանկարները՝ ԵՊՀ պատերին, http://www.old.ysu.am/newspaper/hy/1479362589, (10.06.2024):

157 Հայաստանի պատմության թանգարան, Հավերժի ճամփորդները՝ մաս III, https://historymuseum.am/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%AA%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%D5%9D-%D5%B4%D5%A1%D5%BD-iii/, (02.07.2024):

158 ՏԵՍԱՆՅՈՒԹ. Անհավասարությունը պետք է վերացվի. ինչու ոչ բոլոր զինծառայողների նկարներով գրաֆիտներ կան, https://armlur.am/1293678/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR3fV3s-ZiRNzj8z2LJhOZ1VDKa8u68Dfq-JT4b-Yhul4doRn8NMpnAJfrPo_aem_lOYBNLsptwZCPzcJM3GLFw, (02.07.2024):

սեն՝ չեն հարգում մեր զոհվածներին: Եղել են դեպքեր, որ մինչև խոշորացումը անհապաղ անեն ծնողները: Խոշորացումից հետո քննարկեցինք, որոշեցինք, որ դա այնքան էլ ճիշտ չի՝ նկարները պատերին: Ճիշտն ասած, ունենք ծրագիր, որ մշակույթի տները վերանորոգման տակ են դրած»:[159]

Էլեկտրոնային մամուլում առկա նյութերից մեկի համաձայն՝ պատերազմի զոհերի գրաֆիտիները երբեմն չեն ընդունվում նաև Երևանի որոշ բնակիչների կողմից: Վերջիններիս մտահոգությունը կապված է զոհերի հիշատակման անհավասար պայմանների հետ, այսինքն՝ ըստ նրանց, որոշ զոհվածներ արժանանում են մեծ ուշադրության, մյուսները՝ մոռացության մատնվում: Նման մոտեցումից խուսափելու համար մտահոգություն հայտնող քաղաքացիներն առաջարկում են պետական վերահսկողություն սահմանել, և հիշատակել «կա՛մ բոլորին, կա՛մ ոչ մեկին»: Խնդրի շուրջ Երևանի քաղաքապետարանը պարզաբանել է, որ չկա օրենսդրական հստակ կարգավորում մայրաքաղաքի շենքերի վրա զոհվածների նկարներով գրաֆիտիների պատկերման վերաբերյալ, քանի որ «զինվորների պարագայում այլ է, որևէ մեկը մերժողական դիրքորոշում ունենալ չի կարող»[160]:

Պատերազմը և վիրտուալ սուգը

Վիշտն անհատի անձնական արձագանքն է կորստին, որն ունի զգացմունքային, ֆիզիկական, վարքային, ճանաչողական, սոցիալական և հոգևոր չափումներ:[161]

Թվային կամ առցանց սուգ բնորոշումը ներկայացնում է մեդիա հարթակներում տեղի ունեցող սգո պրակտիկաները: Սոցիալական մեդիա տեխնոլոգիաները փոխել են սգո և զգացմունքային արտահայտ-

---

159 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

160 ՏԵՍԱՆՅՈՒԹ. Անհավասարությունը պետք է վերացվի. ինչու ոչ բոլոր զինծառայողների նկարներով գրաֆիտներ կան, https://armlur.am/1293678/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR3fV3s-ZiRNzj8z2LJhOZ1VDKa8u68Dfq-JT4b-Yhul4doRn8NMpnAJfrPo_aem_lOYBNLsptwZCPzcJM3GLFw, (02.07.2024):

161 J. Moore, S. Magee, E. Gamreklidze, J. Kowalewski, Social Media Mourning: Using Grounded Theory to Explore How People Grieve on Social Networking Sites, OMEGA—Journal of Death and Dying, 0(0), 2017, DOI: 10.1177/0030222817709691, էջ 2:

ման ավանդական նորմերը՝ դառնալով հանրային սգի արտահայտման նոր վայրեր[162]:

Ի տարբերություն մոդեռնիզմի շրջանի, երբ սգին մոտենում էին շատ ռացիոնալ, պոստմոդեռն ժամանակաշրջանում երկարաժամետ վիշտը խրախուսվում է, իսկ սոցիալական մեդիան դառնում է այս ամենի մասին տեղեկությամբ կիսվելու, նոր պրակտիկաներ իրականացնելու և իմաստներ ստեղծելու միջոց[163]: Սոցիալական ցանցերը, լինելով տեղեկատվության փոխանցման ակտիվ միջավայր, հնարավորություն են տալիս ընդլայնել հանրային սուգը՝ ժամանակային, տարածական և սոցիալական առումներով[164]:

Բավականին կարճ ժամանակում սոցիալական ցանցերը թափանցել են դրանց օգտատերերի առօրյան՝ դառնալով տարածք, որում կարելի է ոչ միայն ստեղծել անձնական պրոֆիլ և հաղորդակցվել այլ օգտատերերի հետ, այլև կիսվել կյանքի մանրամասներով՝ սկսած առօրյա գործողություններից, մինչև կարևոր իրադարձություններ[165]: Թվային մեդիան, ինչպիսին է, օրինակ, Facebook-ը, հնարավորություն է տալիս ինտերակտիվ հաղորդակցության և միմյանց օգնության ձեռք մեկնելու: Ավելին, վիշտն արտահայտելը և այն ուրիշների հետ կիսելը սոցիալական ցանցերում թույլ է տալիս կապ հաստատել նման իրավիճակում գտնվող մարդկանց հետ[166]: Սոցիալական ցանցերն օգնում են սգավորին կիսել իր վիշտը վիրտուալ համայնքի հետ, ոչ թե ապրել այն մեկուսացված[167]:

---

162 D. Babis. Digital mourning on Facebook: the case of Filipino migrant worker live-in caregivers in Israel, Media Culture & Society, 43(3), 2020, էջ 398:

163 Ս. Հակոբյան, Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդական, մոդեռն թե՞ պոստմոդեռն սուգ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 5, Եր., ՀԱԻ, 2023, էջ 111:

164 J. R. Brubaker, G.R. Hayes, P. Dourish. Beyond the Grave: Facebook as a Site for the Expansion of Death and Mourning, The Information Society: An International Journal, 29(3), 2013, էջ 152-154:

165 Նշվ. աշխ, էջ 152:

166 D. Babis. Digital mourning on Facebook: the case of Filipino migrant worker live-in caregivers in Israel, էջ 399:

167 J. Moore, S. Magee, E. Gamreklidze, J. Kowalewski. Social Media Mourning: Using Grounded Theory to Explore How People Grieve on Social Networking Sites, OMEGA—Journal of Death and Dying, 0(0), 2017, էջ 2:

Մեր կողմից դիտարկված սոցիալական ցանցերից հատկապես Facebook-ը, որն աչքի է ընկնում իր գործառույթների, գործողությունների կատարման հնարավորությունների բազմազանությամբ, մեծ թվով օգտատերերով, անձնական էջերում գրառումներով կիսվելու հնարավորությամբ, դարձել է հարթակ, որում սկսել են տեղ գտնել վշտի և սգո արտահայտումները, հիշատակման պրակտիկաները: Facebook-ը ոչ միայն փոխել է մարդկանց հաղորդակցման ձևը, այլև մարդկանց սգալու և իրենց վիշտն արտահայտելու ձևը:

Այսպիսով, ինչպես նշում է Ջ. Բրուբեյքերը, Facebook-ը ստեղծում է հանրային վշտի միջավայր՝ առօրյա կյանքում շարունակական ինտեգրմամբ: Այն մահվան շուրջ սոցիալական ներգրավվածության հարթակ է ստեղծում՝ թույլ տալով ինչպես հայտնել հարազատի մահվան լուրը, այնպես էլ շարունակական հիշատակի պրակտիկաներ իրականացնել:

Վշտի առցանց արտայատման շրջանակներում առաջին նկատելի գործառույթը և առանձնահատկությունը, որ Facebook-ը սկսեց կրել՝ մահվան լուրը տարածելն է սոցիալական ցանցի միջոցով: Սոցիալական ցանցերում մահվան մասին տեղեկատվության փոխանցումը փոխարինելու եկավ նախկինում ընդունված միջոցներին՝ թերթեր, հեռախոսազանգեր, մահախոսականներ[168]:

44-օրյա պատերազմի առաջին օրվանից Պաշտպանության բանակի, Արցախի տեղեկատվական շտաբի էջերում, էլեկտրոնային մամուլում հրապարակվում էին պատերազմի ընթացքում զոհվածների անունները, ինչին հաջորդում էին տարբեր լրատվականների, ֆեյսբուքյան օգտատերերի առանձին գրառումները զոհվածների մասին:

Պատերազմի զոհերի մահվան լուրը սոցիալական ցանցերում սկսեցին հայտնել ոչ միայն պետական պաշտոնական կայքերը, զոհվածի ընտանիքի անդամները, այլև ընկերները, գործընկերները, բուհերի պաշտոնական էջերը.

«*Ցավով տեղեկացնում ենք, որ Արցախի Հանրապետության համար մղվող պատերազմում հերոսաբար զոհվել է Հանրային հեռուստաընկերության աշխատակից Արտյոմ Քոլանջյանը*»[169]:

---

168 Ս. Հակոբյան, Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդական, մոդեռն թե՞ պոստմոդեռն սուգ, էջ 111:

169 Առաջին ալիքի ֆեյսբուքյան էջ, https://www.facebook.com/photo/?fbid=35613697

«Խորը ցավով հայտնում ենք, որ արցախա-ադրբեջանական պատերազմում հերոսաբար զոհվել է ՀՊՏՀ ուսանող Հայկ Արամի Արշակյանը»[170]*:*

Որոշ գրառումներով ֆեյսբուքյան օգտատերերը տեղեկացնում էին զոհվածի հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունների վայրի և ժամի մասին.

«…Հարազատները, ընկերները մոտ 5 ամիս հույսով սպասում էին Վաչագանի վերադարձին, բայց, ցավոք, եղավ կորստյան բոթը: … Վաչագան Սարգսյանի հոգեհանգիստը կլինի փետրվարի 20-ին, ժամը՝ 18.00-ից, իսկ հուղարկավորությունը տեղի կունենա փետրվարի 21-ին, ժամը՝ 13.00-ին, Թորոսգյուղում»[171]*:*

«Ցավով հայտնում ենք, որ Արցախի Հանրապետության համար մղվող պատերազմում զոհվել է Յունիբանկի աշխատակից, մեր գործընկեր Տիգրան Վիրաբյանը: …Հ.Գ. Հոգեհանգիստը տեղի կունենա նոյեմբերի 1-ին, ժամը 18:00-ին, Էգրաս Հասարաթյան փող., 9/1 շենք («Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի» հարևանությամբ) հասցեում գտնվող սգո սրահում»[172]*:*

Այնուամենայնիվ, բացի վերը ներկայացված գրառումներից, սոցիալական ցանցերում զոհերի մասին գրառումներ են կատարվում նաև պատերազմի ավարտից տարիներ անց, քանի որ վիրտուալ տիրույթը հնարավորություն է տալիս վշտի ավելի երկարատև արտահայտման, սգո և հիշատակման պրակտիկաների ավելի հանրային իրականացման համար:

Սոցիալական ցանցերում շարունակում են պահպանվել պատերազմի զոհերի անձնական էջերը: Ձանգվածային լրատվամիջոցներում, էլեկտրոնային մամուլում զոհվածի մասին հրապարակումը մեծ հետաքրքրություն է առաջացնում վերջինիս անձնական էջի նկատ-

---

80637129&set=a.285856124855194 (02.07.2024):

170 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարնի ֆեյսբուքյան էջ, https://www.facebook.com/www.asue.am (02.07.2024):

171 Պետական եկամուտների կոմիտեի ֆեյսբուքյան էջ, https://www.facebook.com/photo/?fbid=3617490158347677&set=a.2065512513545457 (02.07.2024):

172 «Յունիբանկի» ֆեյսբուքյան էջ, https://www.facebook.com/photo/?fbid=3530061350381451&set=a.207487552638864 (02.07.2024):

մամբ անգամ այն մարդկանց շրջանում, ովքեր նախկինում չեն ճանաչել նրան[173]: Արդյունքում զոհվածի նկատմամբ շատերի մոտ առաջանում է հարազատության զգացում, զոհվածի հարազատների վիշտը կիսելու ցանկություն: Վիրտուալ սուգը սկսում է ընդգրկել սոցիալական ավելի լայն միջավայր:

Սոցիալական ցանցերը սգավորներին թույլ են տալիս հաղորդակցվել հանգուցյալի հետ[174]: Այսպիսի պատկեր ենք տեսնում նաև պատերազմի զոհերի հարազատների շրջանում, երբ վերջիններս իրենց անձնական էջերում գրառումներ են կատարում՝ ուղղակի դիմելով իրենց զոհված որդուն, եղբորը, ընկերոջը: Այսպիսի գրառումներում սգացողը, դիմելով անմիջապես զոհված հարազատին, շարունակում է հաղորդակցության ծեսը, որպեսզի պահպանի հարաբերությունների իրականությունը և կապը զոհվածի հետ[175]:

Նման գրառումների կարող ենք հանդիպել ինչպես զոհվածի ծննդյան օրվա առթիվ, այնպես էլ զոհվելու տարելիցի, բանակ զորակոչվելու, այդպես էլ տեղի չունեցած զորացրման օրվա կամ վերջինիս կյանքի ընթացքում նշանակալի որևէ այլ օրվա կապակցությամբ:

«*Ինչքա՞ն ու ինչքա՞ն ենք սպասել ու պատկերացրել քո զորացրվելուն, իմ Հայկս… Ամեն տարի այս օրը միշտ սպասելու ենք…*»[176]:

«*Նոյեմբերի 9-ին Հայկի անմահանալու օրն է: Ժամը 19:00-ին այցելելու ենք Եռաբլուր, աղոթք բարձրացնելու ի հիշատակ մեր հայրենքի համար իր կյանքը նվիրած Հայկի ու բոլոր անմահացած զինվորների համար*»[177]:

Զոհվածի ծննդյան օրվա առիթով արված գրառումներում հարազատները հիմնականում շնորհավորում են զոհվածին, ներկայացնում

---

173 Ա. Шинкова. Трансформация отношения к конечности бытия-в-мире под воздействием цифровых вызовов, 2020, https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-otnosheniya-k-konechnosti-bytiya-v-mire-pod-vozdeystviem-tsifrovyh-vyzovov, (10.05.2024).

174 S. H. Church. Digital Gravescapes: Digital Memorializing on Facebook, The Information Society, 29(3), 2013, էջ 185-186:

175 Ս. Հակոբյան, Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդակա՞ն, մոդե՞ռն թե՞ պոստմոդեռն սուգ, էջ 113:

176 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

177 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

հիշողություններ զոհվածի ծննդյան տարբեր տարեդարձներից, պատմում չիրականացած երազանքների և սպասումների մասին.

«*Իմ անապի երջանկություն ու անսահման մորմոք, իմ համեստ հպարտություն ու տանջող կարոտ... Շնորհավոր տարեդարձդ, 22-ամյա իմ դյուցազուն... Ողջ գիշեր մտածում էի, թե տեսնես ինչ են զգում երկրի վրա 22 տարեկան տղամարդ զավակ ունեցողները... Ես էլ երբեք չեմ իմանա... Եվ ոնց է մարդու սիրտը դիմանում իրար այդքան հակասող զգացումներին... Քո ծննդյան օրն ինձ բերում է միաժամանակ և ամենամեծ բերկրանքը, և ամենահոր վիշտը, Դավիիիթ...*»:

«*Շնորհավոր 45-ամյակդ, պարոն հրամանատար: Աշխարհին գոռալ ու պատմել, որ հզոր ես, իմն ես, բոլորինն ես, օրինակ ես՝ քիչ է... Սիրանքներիցդ շարունակ խոսելը՝ քիչ է... Մեծությունիցդ խոսելը՝ քիչ է... Հաճախ թվում է՝ բոլորը քո մասին ինձնից շատ գիտեն, որովհետև դու ազգինն ես*»:

«*Այսօր մեր հավերժ 19, բայց արդեն 23 տարեկան Լյովի ծննդյան օրն է: Բարով ես ծնվել, Լյով ջան... քեզ միշտ էներգիայով, հավատով, սիրով, երազանքով լեցուն եմ հիշելու... ու միշտ ժպիտդ դեմքիդ եմ հիշելու...*»[178]*:*

Սոցիալական ցանցերը ստեղծում են միջավայր, որը, ի տարբերություն իրական կյանքի, սգավորներին թույլ է տալիս ավելի ազատ արտահայտելու իրենց հույզերն ու ներկայացնելու վշտի ապրման փուլերը: Թեև գրառումները հիմնականում ուղղված են զոհվածին, ինչն արտահայտվում է ինչպես բուն գրառման տեքստում, այնպես էլ զոհվածի էջը հաճախ գրառումներում նշելով, այնուամենայնիվ, գրառումները (այսինքն՝ վշտի արտահայտումը) հասանելի են բոլոր օգտատերերին.

«*Այսօր այդ անիծյալ 27-ն է. ամենացավոտ օրը կյանքիս: Պիտի գամ արև առած սառը ժպիտդ գրկեմ, որ իբր թեթևանամ: Այդ օրը ամեն ամսվա ես նորից մեռնում եմ, որովհետև գիտակցությունս, որքան էլ բանական, չի ընդունում չլինելդ*»[179]:

«*2021 թվականի հունվարի 14 ես պարտվեցի: Պարտվեցի իմ աղոթքների ուժին, պարտվեցի 85 օր հավատքով արթնացած ու տեսած ամեն*

[178] Գրառումը՝ զոհվածի ազգականի ֆեյսբուքյան էջից:

[179] Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

մի երազին, ուր դու հույս էիր ներշնչում, թե չես կորել ու դեռ ժամանակը չէ փոուն գալու: Ասեմ՝ ես պարտվեցի, բայց դու հաղթեցիր»:[180]

«*Երեք տարի առաջ այս օրը՝ ողջ կյանքիս ամենացավոտ օրը, երբ ասեցին որ...նոյեմբերի յոթից մինչև այս օրը սպասում էի, որ մի լավ լուր կստանամ, սին հույսերով ապրում էի մինչ այն պահը, երբ իմացա, որ... Ու սկսվեց դաժան օրերի շարանը*»[181]:

Հարազատների գրառումներում հաճախ ներկայացվում են հիշողություններ, առօրյա պատմություններ զոհվածի կյանքի և սովորությունների մասին՝ զուգահեռ հրապարակելով նաև զոհվածի լուսանկարները.

«*Մինչև հիմա պահել եմ երիցուկներիդ վերջին փունջը: Քեզ հետ ապրած ամեն վայրկյան փոն էր իրավ: Քո հավեսը սուրճ խմելիս, հաց ուտելիս, գործ անելիս: Քրտնած ճակատը սրբելիս ու արածով գոհանալիս:*

Եկել էիր մեր կուռքը դառնալու, հենքն ու սյուն դառնալու: Եկել էիր ասելու, որ հանձնվել չկա, որ մեռնելը ավելի պատվաբեր է, քան գլխահակ ապրելը»[182]:

2023 թվականի սեպտեմբերին Արցախում ադրբեջանական լայնամասշտաբ ռազմական ագրեսիայի հետևանքով Արցախի Հանրապետության անկումը և հայաթափումը նույնպես արտահայտվեցին զոհվածների հարազատների գրառումներում.

«*Կորցրեցի քեզ հանուն Արցախի...Արցախն էլ հիմա կորցրեցինք... Ու իմաստազրկվեց ամեն ինչ...Ապրենք հուշերով*»[183]:

«*Քեզ համար մի օր ... Հիմա ոչ դու կաս փղես, ոչ կյանքիդ գնով պահած Արցախը*»:[184]

«*Եռաբլուրը լցրեցիք հանուն ոչնչի փաստորեն: Չներեք, փղերք, չներեք*»[185]*:*

---

180 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

181 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

182 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

183 Գրառումը՝ զոհվածի քրոջ ֆեյսբուքյան էջից:

184 Գրառումը՝ զոհվածի մոր ֆեյսբուքյան էջից:

185 Գրառումը՝ զոհվածի հոր ֆեյսբուքյան էջից:

Անձնական պրոֆիլներից բացի, 44-օրյա պատերազմից հետո սոցիալական ցանցերում ստեղծվեցին էջեր և խմբեր, որոնցում տեղադրվում են զոհված տղաների լուսանկարները, ներկայացվում են նրանց կյանքի պատմությունները: Նմանատիպ էջերը և խմբերը հնարավորություն տվեցին ավելի հրապարակային և հանրային դարձնել պատերազմի զոհերի պատմությունները:

Facebook-ում գործող «Արցախյան 44-օրյա պատերազմ»[186] էջի նկարագրության բաժնում գրված է. «*Էջ, որտեղ ներկայացվում է մեր Հզոր Հայրենիքը և նրա փառապանծ Ջինված ուժերը*»: Էջում պարբերաբար տեղադրվում են 44-օրյա պատերազմում զոհված տղաների լուսանկարները՝ հաճախ «*Միշտ հիշեք մեր տղերքին, ովքեր այլևս մեզ հետ չեն: 44-օրյա պատերազմի ժամանակ անմահացած հերոս տղերքը, ովքեր իրենց կյանքը չխնայեցին հանուն Հայրենիքի*», «*Հավերժ ներկա*», «*Ճանաչենք հերոսներին*» և նման այլ գրություններով: Youtube-ում գործող համանուն ալիքում հրապարակվում են պատերազմին և պատերազմի զոհերին առնչվող տեսանյութեր:

Facebook-ում ակտիվ գործում է նաև «6-րդ Պաշտպանական շրջան 33651-զորամաս Մատաղիս»[187] խումբը: Հարթակը հնարավորություն է տվել միևնույն զորամասում ծառայած և պատերազմում զոհված տղաների հարազատներին ծանոթանալ միմյանց հետ, կիսվել պատմություններով, փոխանակվել ծառայության և պատերազմի ընթացքում արված լուսանկարներով և տեսանյութերով:

Հետազոտության իրականացման ընթացքում դիտարկել ենք նաև Youtube կայքը: Այստեղ տեղադրվող նյութերը կարող ենք թեմատիկ առումով բաժանել մի քանի խմբերի.

- տեսաֆիլմեր, որոնցում զոհվածի ընտանիքի անդամները, ընկերները ներկայացնում են հիշողություններ հերոսի մասին,
- զոհվածին նվիրված հուշարձանի բացման, հիշատակի այլ արարողությունները ներկայացնող տեսանյութ,

---

186 Արցախյան 44-օրյա պատերազմ, https://www.facebook.com/44oryapaterazm (15.05.2024):

187 6-րդ Պաշտպանական շրջան 33651-զորամաս Մատաղիս, https://www.facebook.com/groups/235256848720833 (15.05.2024):

- զոհվածի լուսանկարներով պատրաստված տեսասահիկներ,
- հեռուստալիքների կամ էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից պատրաստված հաղորդաշարեր («Ձեզ բացակա չենք դնի», «Նվիրյալները», «Հայրենիք փրկած անմահները» և այլն):

Սոցիալական ցանցերից բացի, վիրտուալ տիրույթում ստեղծվեցին նաև կայքեր, որոնց առանձնահատկությունը զոհվածների մասին տեղեկատվության ավելի համակարգված փոխանցումն է: Այդպիսի կայքերից է «Erablur.am»-ը:

«Erablur.am»-ում ներկայացված են պատերազմի զոհերի կյանքի պատմությունները, որոնք հրապարակված են եղել էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների կայքերում, նրանց մասնակցությամբ կամ նրանց մասին պատմող տեսանյութեր:

Կայքի «Հերոսներ» բաժինը հնարավորություն է տալիս փնտրելու տեղեկատվություն զոհվածի մասին՝ նշելով վերջինիս անունը, համայնքը, մարտական գործողությունների մասնակցությունը կամ այլ տվյալներ:

Կայքի «Գլխավոր» բաժնի «Այսօր ծնվել են» հատվածում ամեն օր ներկայացվում են այն տղաների լուսանկարները և համառոտ կենսագրությունը, ում ծննդյան օրն է: Կայքից բացի, յուրաքանչյուր օր թարմացում է կատարվում նաև ֆեյսբուքյան և ինստագրամյան համանուն էջերում: Էջերի ամենօրյա թարմացումը թույլ է տալիս հետևորդների շրջանում մշտապես պահպանել էջերի տեսանելիությունը:

Instagram և Facebook սոցիալական ցանցերի «Եռաբլուր.am» էջերի նկարագրության բաժնում վերջիններս ներկայացվում են որպես «Եռաբլուր» հերոսապատումի վիրտուալ թանգարան:

Սոցիալական ցանցերից բացի, մահը վիրտուալ դաշտ տեղափոխելու հնարավորություն են տալիս նաև գերեզմանաքարերին կամ դրանց հարակից տարածքում QR կոդերի պատկերումը[188]: Վերջիններով անցնելիս կարելի է ինչպես անցում կատարել զոհվածի անձնական էջ, այնպես էլ ծանոթանալ համացանցում նրա մասին առկա նյութերին, պատմություններին: Այսպես, օրինակ, զոհվածի քույրը նշում է. «*Հիմա Եռաբլուրում շատերն են QR կոդեր տեղադրում: Մենք էլ ենք իր (եղբոր) հու-*

[188] Т. Рунаев. Виртуальные кладбища как коммеморативные практики: Разновидности и векторы развития, «Вестник АГУ». Выпуск 3 (244) 2019, էջ 113:

շարձանի մոտ ստենդ դնել՝ իր կենսագրությամբ ու QR-ով, որ մարդիկ, օրինակ, իմանան, թե Եռաբլուրում որ շարքում ու որ տեղում ա իր գերեզմանը, իրա մասին կարողանան իմանալ»:[189] Այսինքն՝ զոհվածների հարազատները փորձում են ստեղծել վիրտուալ միջավայր, որը թույլ կտա ավելի շատ մարդկանց ներգրավել հիշատակման պրակտիկաներում՝ սրանով նաև պահպանելով զոհվածին հանրային հիշողությունում:

Պատերազմի զոհերի պատմությունների առցանց ներկայացման փորձ է կատարել նաև Հայաստանի պատմության թանգարանը: Դեռևս 2020 թվականի նոյեմբերին՝ պատերազմի ավարտից օրեր անց թանգարանը սկսեց հավաքել պատերազմի զոհերի անձնական որոշ իրեր և կենսագրությունները: Այսօր Հայատանի պատմության թանգարանում հասանելի է առցանց ցուցադրություն՝ «Հավերժի ճամփորդները. անուններ, պատմություններ և երազանքներ, որոնք մեզ հետ են» խորագրով: Ցուցադրությունը բաղկացած է 3 բաժիններից՝

- Արցախի հիմնահարցի համառոտ պատմություն,
- Հավերժի ճամփորդներ ... անկատար երազանքներ,
- Հիշողություն և կյանքի շարունակականություն[190]:

Ցուցադրության նպատակն է «ներկայացնել 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդներին, նրանց մասին պատմությունները՝ իրենց հերոսություններով, հարազատների նկարագրություններով, կյանքի ու մահվան ընկալումներով, իրենց արձագանքներով, կյանքում իրենց ունեցած երազանքներով, գրառումներով և պատերազմից հետո իրենց պատկերացումների իրագործումով»:

Ցուցադրության «Հավերժի ճամփորդներ ... անկատար երազանքներ»[191] մասում ներկայացված է 169 զոհվածի լուսանկար: Լուսանկարնե-

---

189 ԴԱՆ, Երևան, 2024:

190 Հայաստանի պատմության թանգարան, Առցանց ցուցադրություն. հավերժի ճամփորդները, Հավերժի ճամփորդները. անուններ, պատմություններ և երազանքներ, որոնք մեզ հետ են, ttps://historymuseum.am/%D5%A1%D5%BC%D6%81%D5%A1%D5%B6%D6%81-%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BD%E2%80%A4-%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%AA%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%80%D5%A4/, (20.05.2024):

191 Հայաստանի պատմության թանգարան, Հավերժի ճամփորդները՝ մաս II, Հավերժի ճամփորդներ … Անկատար երազանքներ, https://historymuseum.am/

րին սեղմելով կայքի այցելուն հնարավորություն է ստանում ծանոթանալու զոհերի կենսագրությանը, պատերազմի ընթացքում իրականացրած ռազմական գործողություններին, զոհվելու հանգամանքներին:

Այսպիսով, սոցիալական մեդիա տարածքները փոխել են վշտի լանդշաֆտը՝ խրախուսելով սգավորներին ստեղծել առցանց համայնքներ, հրապարակել կորստի մասին տեղեկատվություն և պահպանել զոհվածի հետ շարունակական կապերը[192]:

Առցանց տիրույթում վշտի արտահայտումը շրջանցում է տարածական և ժամանակային սահմանափակումները՝ սգո պրակտիկաներում ընդգրկելով հասարակության ավելի լայն շրջանակների, քան դա հնարավոր է անել իրական կյանքում: Զոհվածների մասին հուշերի շարունակական ներկայացումը, բացի անձնական հույզերի արտահայտումից, թույլ է տալիս հանրայնացնել նրանց հերոսական պատմությունները և առօրյա տեղեկատվության բազմազանության մեջ մոռացությունից «փրկել» դրանք:

Հիշողության լանդշաֆտը հետպատերազմական առօրյայում

Առօրյայում էթնիկ կամ ազգային ինքնության կառուցման քաղաքականությունը կազմակերպվում է ինքնության խորհրդանշանների, պատկերագրությունների տարածման միջոցով, որոնք արտահայտում են այնպիսի մետապատմություններ, ինչպիսիք են «տարածք-հայրենիք», «հերոսի սրբազնացում», «նոր տարածքի վերաձևավորում», «տուն և համայնք»[193]: Կոնսոլիդացվող յուրաքանչյուր խումբ ձգտում է ստեղծել այնպիսի վայրեր, որոնք ոչ միայն համատեղ գործունեության հարթակ կդառնան, այլև ինքնության խորհրդանիշներ, հիշողության հենակետեր[194]:

%d5%b0%d5%a1%d5%be%d5%a5%d6%80%d5%aa%d5%ab-%d5%b3%d5%a1%d5%b4%d6%83%d5%b8%d6%80%d5%a4%d5%b6%d5%a5%d6%80%d5%a8%d5%9d-%d5%b4%d5%a1%d5%bd-ii/#1702852066303-f4ca1ba2-1fd1, (20.05.2024):

192 N. Cesare, J. Branstad. Mourning and memory in the twittersphere, Mortality, 2017, էջ 1:

193 Հ. Մելքումյան, Հիշողությունից ազգայնականությունը. խորհրդային և հետխորհրդային հուշարձանները, էջ 43:

194 Я. Ассман. Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, Москва, 2004, Языки славянской культуры, էջ 40:

Պարտությունն Արցախյան երկրորդ պատերազմում, կորսված տարածքներն ու բազմաթիվ զոհերն ու տեղահանվածները, և ճգնաժամային իրավիճակը, որում հայտնվել է ՀՀ-ը ու դրանցով պայմանավորված ապագայի անորոշությունը կասկածի տակ են դրել մինչպատերազմական շրջանում գործող ռազմաքաղաքական, սոցիալ-մշակութային արժեքները, գաղափարները, ձևավորված պատմական առաջնային պատումները: Այսպիսի անորոշության պայմաններում 44-օրյա պատերազմից հետո համայնքը հանդես եկավ որպես հետպատերազմական հիշողության լանդշաֆտի ստեղծման հիմնական դերակատար: Եթե ՀՀ իշխանությունների պետական քաղաքականությունն ուղղվեց պատերազմի զոհերի կոլեկտիվ հիշատակմանը՝ ֆինանսավորելով պանթեոնների ստեղծումը, գերեզմանների բարեկարգումն ու զոհերի գերեզմանաքարերի տեղադրումը, Երևանի բուսաբանական այգում «Կյանքի պուրակի» ստեղծումը, ապա զոհերի հարազատները՝ ընտանիքի անդամները, ընկերները, հարևանները, ուսուցիչները, կարևորեցին անհատական հիշատակումը, նախաձեռնեցին հուշարձանների տեղադրում՝ բերելով իրենց կորուստը հանրային միջավայր, համայնքի առօրյա:

Ի թիվս ծեսերի, ավանդույթների, առասպելների՝ էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց[195]: Այսպիսի հիշողություն սկսեցին ձևավորել հանրային տարածքներում տեղադրվող հուշարձանները, որոնց շուրջ ստեղծվեցին հիշատակման նոր պրակտիկաներ և կրկնվող ծեսեր (ծաղկեդրում պատերազմի տարելիցին, քայլերթ հուշարձանից դեպի պանթեոն, դպրոցական հայրենասիրական միջոցառման կազմակերպում և այլն)՝ ներգրավելով համայնքի բնակիչներին և դառնալով համայնքի առօրյայի կազմակերպման կարևոր օղակ:

Ներգրավելով անհատներին կոլեկտիվ գործողություններում՝ ծեսերը կարող են ունենալ հուզական ազդեցություն: Ստանդարտացման և կրկնվող բնույթ ունենալու շնորհիվ վերջիններս հանդես են գալիս որպես սոցիալականացման գործիքներ[196]:

---

195 Հ. Մարության, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, 2006, «Նորավանք» ԳԿՀ, էջ 9:

196 Օ. Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, էջ 20:

Հուշարձանների նախաձեռնողների համար կարևորվում է դրանց տեղադրումը հանրային վայրերում և բանուկ փողոցներին կից՝ հուշարձանի հետ հանրության հաղորդակցման անընդհատության և անխախտության ապահովման նպատակով: Օրինակ՝ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքում զոհերի հիշատակի հուշարձանը տեղադրվել է նորակառույց զբոսայգու մուտքի մոտ՝ նպատակ ունենալով հուշարձանը դարձնել զբոսայգու այցելուների առօրյայի անբաժան մաս: Ջբոսայգում հուշարձանի տեղադրման վերաբերյալ համայնքի ղեկավարը նշում է. «*Շատրվանները ինչու դրեցինք հիմքում, որ այցելուները շատ լինեն, ու ամեն մտնող մի հատ էս կողմ թեքվի ու գնա իր խաղին, զբոսանքին: Գյուղամեջում տեղ ունեինք, կարայինք կիսանդրիները դնել, բայց լինելու էր էնպես, որ առիթից առիթ էին գնալու*»[197]:

Հուշարձանի շուրջ համայնքի համախմբումը սկսվում է դեռ հուշարձանի տեղադրման աշխատանքներից: Վայոց ձորի Արին համայնքի հուշարձանի նախաձեռնության հեղինակը նշում է. «*Երիտասարդները ֆիզիկապես են մասնակցել՝ հիմքը լցնել, քանդել: Գյուղի տղաները եկել են*»[198]: Տավուշի մարզի Դիլիջան համայնքում հուշարձանի նախաձեռնողը ևս առանձնացրել է համայնքի մասնակցությունը. «*Ամենքը իր կողմից մի բան արել է, ոչ սարքելու, ոչ բերելու համար փող չեն վերցրել: Ամենքն իրանց գործն են արել և անշահախնդիր: Արդյունքում ստացվել է*»[199]:

Պատերազմի մասին պատմական հիշողության ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն այն սոցիալ-մշակութային արժեքների, իդեալների մասին պատկերացումները, որոնք պաշտպանվել են պատերազմի ընթացքում, պատերազմի զոհերի ճանաչումը և դրա հետևանքների գիտակցումը[200]: Հուշարձանների միջոցով նախաձեռնողները փորձում են առօրյա բերել ոչ միայն զոհվածի մասին հիշողությունը, այլև սիմվոլների կիրառությամբ փոխանցել պատերազմի և խաղաղության, հայրենիքի պաշտպանության գաղափարները, զոհվածի համար կարևոր արժեքները:

---

197 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

198 ԴԱՆ, Վայոց ձոր, 2022:

199 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2023:

200 Поршнева О. Феномен исторической памяти о войне, 2005, https://elar.urfu.ru/bitstream/10995/4751/2/uvmi4-2005-16.pdf, с. 3, (15.05.2024):

Այսպես, օրինակ, Սիսիանում տեղադրված հուշարձանը ներկայացնելիս զոհվածի հարազատն անդրադառնում է դրա նշաններին. «*Փամփուշտները սահմանագիծն ա, փամփուշտից առաջ կյանքն ա, փամփուշտից հետո՝ խորհրդանշական արձանը, կյանքի ու մահվան սահմանագիծն ա: Արծվի մոտ երկու կրակված փամփուշտ կա, մեջը՝ ծաղիկներ: Այսինքն՝ չկրակենք, այլ ծաղիկներ ապրեցնենք, մի՛ անցեք կյանքի սահմանագիծը: ... Արծիվը Լեռնահայաստանի խորհրդանիշն ա: Բացի դրանից, ունենք խաչը, հետո Հովո անունը, հետո՝ արծիվը: Արծիվը նաև մենք ենք՝ ժողովուրդը, մարդիկ: Հովոն մեր հերոսն ա, բայց ինքը Աստված չի: Ինքը ամենաբարձրը չի, վերևում խաչն ա: Հովհաննեսը մեզ համար սրբացել ա, բայց ինքը Աստված չի: Այսինքն՝ ինքը մեզանից վերև ա, բայց խաչից ներքև*»[201]:

Մարտունու թիվ 1 դպրոցի դիմաց տեղադրված հուշարձանի կենտրոնական մասում ձեռքի երկու բազուկ է՝ զենքով, որը փոխանցում էր այն գաղափարը, որ «*հասպ բազուկը Հայաստանն է, բարակը Արցախն է, ու ցավոք, դեռ մեզ զենքն է կապում, միասին չենք*»[202]: Սիսիանում տեղադրված մեկ այլ հուշարձան ներկայացնում է զոհվածի անցած մարտական ուղին: Տան պատին զոհվածի նկարն է (գրաֆիտին)՝ զինվորական համազգեստով, դիմացը փոքրիկ պուրակ է՝ ծաղկանոցով, նոնակի տեսքով ցայտաղբյուրով և փոքրիկ հրետանիով: Ընտրված բոլոր տարրերն ունեն իրենց խորհուրդը, փոխանցում են զոհվածի պատմությունը. «*Ինքը նոնակով ա անմահացել: ... Հրետանավոր էր, մահանալուց հետո առաջին ծննդյան տարելիցը, որ անում էինք, հրետանին իրա վերջին նվերը արեցինք*»[203]:

Զոհերի հուշարձանացման պրակտիկայում խորհրդանշական են ոչ միայն հուշարձանում կիրառվող տարրերը, այլև հուշարձանի տեղադրման վայրը: Տավուշի մարզի Բերդ համայնքի Պառավաքար բնակավայրում զոհվածի հիշատակին նվիրված մատուռի օծման արարողությանը Տավուշի թեմի առաջնորդը ներկայացնում է մատուռի կառուցման խորհրդանշական դերը, նշելով. «*Հիմա մուտք ենք գործում Շամշադին*

---

201 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

202 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

203 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

աշխարհ, և մեզ դիմավորում է մեր սիրելի զավակի հիշատակին ընծայված Սբ Կարապետ մատուռը՝ դարձյալ սահմանին նայող, դարձյալ խաչը հառած և բոլոր կողմերը հսկող և իրենց հիշատակով ամրացած: … Բերդի համայնք, Բերդի տարածաշրջան մուտքն է, դուռը, դարպասը: Պառավաքար գյուղն էլ առաջին հանգրվանն է այդ իմաստով, և կարծես նրա այցեքարտը լինի: Ովքեր այցելելու են, մուտք են գործելու այստեղ, տեսնելու են մեր բարձրագույն խորհրդանիշները՝ մեր սուրբ խաչն ու մատուռը, տեսնելու են մեր դրոշը»:

Հետազոտության ընթացքում իրականացված խորին և փորձագիտական հարցումները ցույց են տալիս, որ հուշարձանների տեղադրման հիմնական գործառույթը երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելն ու կրթելն է: Այսինքն՝ հանրային վայրերում հուշարձանների տեղադրման նպատակը եկող սերունդների կողմից պատերազմի զոհերի և նրանց սխրանքների ճանաչումն է: Այս առումով հատկապես կարևոր են մանկական խաղահրապարակներում, դպրոցներին և մանկապարտեզներին կից տեղադրված հուշարձանները: Օրինակ՝ Տավուշի մարզի սահմանամերձ Կիրանց համայնքում պատերազմի զոհերի հուշարձանը համայնքի ամենաակտիվ տարածքում է՝ գյուղի եկեղեցու և մանկական խաղահրապարակի տարածքում: Ինչպես նշում է համայնքի ղեկավարը, հուշարձանի տեղադրման վայրն ընտրվել է այնպես, «*որ երեխաներն անընդհատ շփվեն հերոսների հետ*»[204]: Հարևան Աճարկուտ համայնքում ևս հուշարձանը տեղադրված է մանկական խաղահրապարակում: Տեղի ընտրության նպատակն այն է, որ «*երեխաները խաղան, շփվեն, ուրախանան, Նոր տարի անեն էստեղ*»[205]: Հուշարձանի տարածքում զոհվածի ընտանիքը երեխաների համար կազմակերպում է միջոցառումներ՝ հրավիրելով մուլտհերոսների, բաժանելով նվերներ: Այսինքն՝ նախաձեռնողները, զոհվածների հարազատները հուշարձանները դիտարկում են ոչ միայն որպես հիշողություն զոհվածի մասին, այլև կյանքի շարունակականության խորհրդանիշ, որի շուրջ համախմբվելով՝ համայնքը պահպանելու է ինքությունն ու կառուցելու է ապագան:

Հուշարձանների միջոցով սերունդների կրթումը սկսվում է դեռ երե-

---

[204] ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

[205] ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

խաների վաղ տարիքից, ինչի մասին, բացի խաղահրապարակների հուշարձաններից, խոսում են նաև մանկապարտեզների տարածքում տեղադրված հուշարձանները: Օրինակ՝ Երևանի «Հեքիաթ» մանկական զարգացման կենտրոնի պատի հուշատախտակին գրված է. «*Այս պարտեզում աշխատել և արարել է Արցախյան 44-օրյա պատերազմի «Արիության» մեդալակիր Սիմոն Իսրայելյանը*»:

Սյունիքի մարզի Քաջարան բնակավայրում մեկ այլ հուշարձան տեղադրված է զոհվածի մանկապարտեզի և դպրոցի ճանապարհին. «*Տեղն այնպիսին է, որ դպրոցի ու մանկապարտեզի ճանապարհ է: Մի կողմում Արտաշեսի մանկապարտեզն է, մյուս կողմում՝ դպրոցը: Հենց խորհուրդը դա է*»[206]:

Դպրոցների տարածքում կամ դպրոցների ճանապարհին տեղադրված հուշարձանների կրթադաստիարակչական դերի մասին են խոսում ինչպես զոհվածների հարազատները, այնպես էլ կրթական հաստատությունների ղեկավարները, մանկավարժները: Գեղարքունիքի մարզի Գանձակ բնակավայրի երաժտական դպրոցի ղեկավարը, խոսելով դպրոցում բացված զոհերին նվիրված հուշասենյակի դերի մասին, առանձնացնում է հետագա սերունդներին զոհերի մասին մնայուն հիշողություն ձևավորելու կարևորությունը. «*Սենյակը չի, որ մեզ ստիպում է հիշենք, խոսենք: Մնայուն ինչ-որ մի բան է, որ հետո հիշեն: Մենք հուշատախտակի բացմանը խոսք ունեինք՝ մեզանից հետո սերունդները հիշեն*»[207]:

Հուշարձաններից բացի, սովորողների հայրենասիրական դաստիարակությանն են ուղղված նաև զոհերի անունները կրող դասարանները: Տավուշի մարզի դպրոցներից մեկի տնօրենն այդ հարցի շուրջ նշում է. «*Անվանակոչելով սերունդներին ուզում ենք հիշեցնենք, որ մենք ապրում ենք նրանց կյանքի գնով, և կյանքը պետք է ապրենք այնպիսին, որպեսզի նաև նրանց փոխարեն ինչ-որ ասելիք ու անելիք ունենանք մեր երկրի համար*»[208]:

---

206 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022:

207 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

208 44-օրյա պատերազմում զոհված Կարեն Մարգարյանի հիշատակին Պառավաքարում կիսանդրի և մատուռ են կառուցել, https://www.youtube.com/watch?v=qcEpNcOhm8o, (09.07.2024):

Հուշարձանի շուրջ համայնքի բնակիչները ձևավորում են նոր սովորույթներ, զոհերի հիշատակման և համայնքի բնակիչների համախմբման նոր պրակտիկաներ, ինչպես, օրինակ, համայնքում տոների կամ հիշատակման արարողությունների ժամանակ նոր ծեսերը, համայնքային նոր տոները և այլն: Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում բնակիչները պատմում են հուշարձանի շուրջ ձևավորված ավանդույթի մասին. «*Գալիս են, ծաղիկ են դնում: Ամեն բանակ ճանապարհելիս գալիս են էստեղ՝ սոկով, խմիչքով, հացով, ոնց որ կարգն է: Ընենց որ հարգում ենք ու պիտի հարգենք՝ 41 թ.-ից մինչև հիմա*»[209]:

Գանձակի երաժշտական դպրոցի դիմաց զոհերի հիշատակին նվիրված պուրակի բացման օրը համայնքի համար 2021 թվականից դարձել է խորհրդանշական օր, և, ինչպես դպրոցի տնօրենն է նշում. «*ազգաբնակչության հետ որոշեցինք, որ այդ օրը Գանձակի փոնն է ու պետք է ամեն տարի նշենք*»[210]:

Համայնքի առօրյայում կարևոր նշանակություն ունեն նաև անտառներում զոհերի հիշատակին նվիրված տաղավարները, որոնք ժամանակի ընթացքում դարձել են համայնքի բնակիչների, զոհվածի հարազատների և ընկերների կյանքի կարևոր իրադարձությունների, տոնական միջոցառումների անցկացման վայր՝ փորձելով ապահովել զոհվածի ներկայությունը համայնքի կյանքում: Տավուշի մարզում զոհվածի ծնողը պատմում է անգամ բնակավայրի անունը՝ ի պատիվ զոհվածի փոխելու համայնքի առաջարկի մասին. «*Անտառում, որ ինքը Վարդավառ է արել, էդտեղ շատ մեծ տաղավար ենք սարքել: Ու ես հանկարծակի որոշեցի, որ պետք ա կոչվի Դավիթաձոր: Սկզբից գյուղում մարդիկ կային, ասեցին՝ գյուղի անունը փոխենք Դավիթաձոր, տենց էլ մնաց*»:[211]

Այնուամենայնիվ, պատերազմի զոհերի անհատական հուշարձանների տեղադրման վայրի կամ ձևի ընտրության վերաբերյալ քննարկումները հակասական են ինչպես ծնողների, այնպես էլ համայնքի բնակիչների և ղեկավարների շրջանում: Ինչ վերաբերում է զոհերի անհատա-

---

209 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

210 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

211 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

կան հիշատակմանը, ապա այն մի կողմից դիտարկվում է որպես «*ցավ, ճնշող*»[212], մյուս կողմից՝ որպես սփոփանք:

Ընդ որում, հակասական են ոչ միայն հանրային վայրում հուշարձանի տեղադրման նպատակահարմարության, այլև ձևի ընտրության վերաբերյալ կարծիքները: Եթե մի դեպքում զոհվածի տան դիմաց հարազատների նախաձեռնությամբ տեղադրված կիսանդրու վերաբերյալ զոհվածի մայրը պատմում է. «*Ինձ համար ավելի հանգիստ կլիներ, որ, թեկուզ, մի հատ խաչ տեղադրվեր, կամ, չգիտեմ, սենց չլիներ: Սենց շատ դժվար է, երբ քար ես տեսնում: Շատ դժվար է, շատ ծանր է: Սկզբից ինձ թվում էր՝ չեմ ապրի էստեղ*»[213], ապա մեկ այլ դեպքում ծնողը հայտնում է իր անհամաձայնությունը հուշարձանը խաչքարի տեսքով տեղադրելուն. «*Ես ինքս ի սկզբանե խաչքար չեմ ուզել, որովհետև էստեղից երեխաներ են անցնում-գնում, միգուցե խաչքարն ուրիշ տպավորություն կթողնի*»[214]:

Մյուս խնդիրը, որը վերաբերում է պատերազմի զոհերի անհատական հուշարձաններին և դրանց ներգրավմանը համայնքի առօրյայում, կապված է Հայաստանի անվտանգային խնդիրների և հնարավոր նոր պատերազմի հետ՝ հաշվի առնելով 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից իրականացրած ռազմական ագրեսիան Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ, և դրա արդյունքում հայկական կողմի ունեցած մարդկային նոր կորուստները[215]: Այս մասին մասնավորապես խոսում էին համայնքների ղեկավարները. «*Ես կողմ եմ ընդհանրական հուշարձաններին, ոչ թե՝ անհատական: ... Որ ինչ-որ մեկի անունով ենք կառուցում, կարծում եմ, ճիշտ չի: Հիմա էնպիսի իրավիճակում ենք, լավ չի, որ ասում ենք, բայց էլի կունենանք զոհեր*»[216]:

Այսպիսով, տեղադրված լինելով հանրային վայրերում՝ պատերազմի հուշարձանները դարձել են համայնքի առօրյայի կարևոր ուղեկից, որի շուրջ շարունակվում են ձևավորվել նոր սովորույթներ, համայնքնա-

---

212 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022:

213 ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

214 ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022:

215 Այս խնդիրն ավելի մանրամասն ներկայացրել ենք դեռևս չտպագրված «44-օրյա պատերազմի հուշարձանները ՀՀ սահմանամերձ բնակավայրերի առօրյայում» հոդվածում:

216 ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

յին ավանդույթներ և ծեսեր: Հուշարձանների տեղադրման նախաձեռնողները հիմնականում փորձում են հուշարձանների միջոցով փոխանցել պատերազմի զոհերի համար կարևոր արժեքները՝ ներկայացնելով դրանք սիմվոլների տեսքով: Դրան զուգահեռ, հուշարձաններն առանձնահատուկ կարևորություն են ստանում՝ դառնալով ոչ միայն զոհվածին նվիրված հիշատակ, այլև առօրյայում ոչ ֆորմալ եղանակով կրթադաստիարակչական գործառույթ իրականացնող կոթողներ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գիրքը քննարկում է 44-օրյա պատերազմի հանրային և պաշտոնական հիշման գործընթացները՝ պատերազմի հուշարձանացման ու զոհերի հիշատակման պրակտիկաների օրինակներով: Հիմնախնդրի վերլուծության հիմքում 2022-2024 թթ. ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի ու Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքներում ու մարզկենտրոններում պատերազմից հետո տեղադրված հուշարձանների նախաձեռնությունների հեղինակների հետ իրականացված խորացված հարցազրույցների միջոցով հավաքված տեղեկատվությունն է: Մենագրության համար կարևոր տեղեկատվական աղբյուր են հանդիսացել նաև այդ հիմախնդիրներով զբաղվող օրենսդիր, գործադիր համակարգի ներկայացուցիչների, մարզպետարանների ու ՏԻՄ պատասխանատուների, ոլորտների մասնագետների հետ իրականացված փորձագիտական հարցազրույցների արդյունքները: Վերջինս զուգակցվել է նաև հուշարձանների տեղադրման, բացման արարողությունների ու նրանց տարածքներում իրականացված միջոցառումների, այդ արարողությունների ժամանակ հնչեցված ելույթների և համացանցում պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններին վերաբերող նյութերի վերլուծության արդյունքների հետ:

44-օրյա պատերազմի դեռ ընթացքում և հիմնականում պատերազմից կարճ ժամանակ անց, ՀՀ գրեթե բոլոր համայնքներում իրականացվեցին պատերազմի զոհերի հիշատակի հավերժացմանն ուղղված նախաձեռնություններ. պատերազմի զոհերի հիշատակման առաջնային ու հիմնական նախաձեռնություններ հանդիսացան փողոցների անվանակոչումներն ու վերանվանումները, դպրոցներում «հիշատակի անկյունների» ստեղծումն ու հուշարձանների տեղադրումն ու տարբեր շինությունների վրա զոհվածների նկարներով գրաֆիտիների պատկերումը: Այնուհանդերձ, մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների համաձայն, 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակման ամե-

նաընդունելի, տարածված ու կիրառված արտահայտումն են դարձել հատկապես հուշարձանները:

Պատերազմի հուշարձանացման գործընթացը հետպատերազմական Հայաստանում հիշողության քաղաքականության հիմնական դերակատարներ հանդիսացող իշխող քաղաքական ուժի ու ՀՀ ՏԻՄ-երի, ինչպես նաև բարերարների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հուշարձանների տեղադրման անհատական ու նեղ խմբային նախաձեռնությունների հեղինակ հանդիսացող զոհվածների ծնողների, բարեկամների, ընկերների ու հարևանների միջև իրականացված փոխհարաբերությունների ու բանակցությունների արդյունքն է: Տեսնում ենք, որ տարբերվում են նաև հուշարձանացման մեխանիկ այս դերակատարների շարժառիթներն ու նպատակները, ինչպես նաև պատերազմի ու նրա զոհերի հիշատակման խորհրդանշանային արտահայտման ձևի, վայրի, արտահայտող իմաստների ու հիշատակման պրակտիկաների վերաբերյալ պատկերացումները:

Պատերազմի հուշարձանացումը հիմնականում արտահայտվեց համայնքային հուշահամալիրներում ու զինվորական պանթեոններում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրմամբ կամ հների բարեկարգմամբ ու նոր պատերազմի զոհերի շիրիմների ավելացմամբ, ինչպես նաև որոշ համայնքներում ամբողջովին նոր զինվորական պանթեոնների կառուցմամբ: Բացի այդ, ՀՀ համայնքների մեծ մասի հանրային վայրերում սկսեցին տեղադրվել զոհվածներին նվիրված անհատական հուշարձաններ, որոնք հանդիսանում են նրանց ծնողների, բարեկամների, ընկերների ու հարևանների անհատական կամ նեղ խմբային վշտի ու սգո խորհրդանշանային արտահայտումը:

Հետազոտության արդյունքներով՝ 44-օրյա պատերազմի հիշման գործընթացն իր հուշարձանացման պրակտիկաներով հանդիսանում են հիշատակման պաշտոնական ու ոչ պաշտոնական դերակատարների գործունեության, համագործակցության, բանակցման ու անհամաձայնությունների արդյունք՝ իրականանալով և՛ վերընթաց, և՛ վարընթաց նախաձեռնությունների միջոցով. դեռևս պատերազմի ընթացքում հիշատակման պաշտոնական ընդունելի արտահայտում դարձան զինվորական կոլեկտիվ պանթեոնները: Սգո պաշտոնական քաղաքականության խորհրդանիշ դարձած Եռաբլուր պանթեոնը ՀՀ իշխանությունների կող-

մից ընդունվեց որպես զոհվածների հուղարկավորման ու հիշատակման հիմնական օրինակ և ընկավ սուբվենցիոն ծրագրի հիմքում՝ նպատակ ունենալով ֆինանսավորել պատերազմում զոհ ունեցող բոլոր համայնքներում արդեն գործող կամ նոր կառուցվող զինվորական պանթեոններում զոհերի հուղարկավորման, գերեզմանների կառուցման ու տարածքների բարեկարգման աշխատանքները: ՀՀ Կառավարության ու գործող իշխանությունների ներկայացուցիչները՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հանդես գալով պատերազմի ու զոհերի հիշատակման հուշարձանային դրսևորման դեմ՝ պատերազմի ու նրա զոհերի հիշատակման նպատակով հանդես եկան Կյանքի պուրակի կառուցման նախագծով. պատերազմի հիշատակման պաշտոնական քաղաքականությունը դեմ հանդիսանալով պատերազմի հիշատակման նախկինում ընդունված ու կիրառելի պրակտիկաներին՝ պուրակի խորհրդանիշ է տեսնում Կենաց ծառը՝ հուշարձանի փոխարեն:

Չնայած պետության կողմից պատերազմի հիշատակման պաշտոնական մոտեցումներին ու դրանց իրականացման գործընթացներին, մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 44-օրյա պատերազմի հուշարձանացումը ստացել է լոկալ համայնքային դրսևորումներ. ՀՀ-ում հուշարձանացման քաղաքականության պաշտոնական դերակատար հանդիսացող ՏԻՄ-երը լուրջ խնդիրների բախվեցին պատերազմի նման բարդ հիշողության հիշատակման լոկալ գործընթացների ժամանակ: Մի կողմից լոկալ հիշողության քաղաքականությունը հարմարեցվեց համապետականին, մյուս կողմից՝ վերարտադրեց լոկալ ավանդույթներն ու պրակտիկաները՝ միևնույն ժամանակ բանակցությունների մեջ մտնելով հուշարձանացման այլ դերակատարների հետ, հատկապես զոհվածների ծնողների ու բարեկամների՝ խմբային ու անձնական սուգի խորհրդանշանային արտահայտման հարցում հանրային ու պաշտոնական ընդունելի կոնսենսուսի գալու համար: Տեսնում ենք, որ ՀՀ համայնքային իշխանությունները համագործակցում են հիշատակման այլ դերակատարների հետ հուշահամալիրներում ու զինվորական պանթեոններում զոհվածների շիրիմների կառուցման, հուշարձանների տեղադրման հարցում, փողոցների, պուրակների ու այգիների անվանակոչությունների հարցում, դպրոցներ, մանկապարտեզների տարածքներում «հիշատակի անկյունների» ու հուշարձանների տեղադրման հարցում և որոշ

դեպքերում նաև անհատական հուշարձանների, մատուռների ու այլ կառույցների տեղադրման հարցում: Սակայն, ինչպես տեսանք մեր հետազոտության արդյունքում, շատ դեպքերում անհատական այս նախագծերը իրականացվում են կամ առանց լոկալ իշխանությունների հետ նախապես պայմանավորվածության, կամ բանավոր համաձայնության շնորհիվ՝ հիմնականում լեգիտիմացնելով այդ կառույցների տեղադրումը բացման արարողությունների ժամանակ՝ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներին այդ իրադարձությանը հրավիրելու միջոցով:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ պետությունից ու ՏԻՄ-երից զատ Արցախյան 44-օրյա պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման դերակատարներ են հանդես եկել նաև զոհվածների ծնողները, բարեկամները, նրանց հարևանները, ընկերները, համայնքի բնակչությունը և տեղի ու սփյուռքի բարերարները. այդ նախաձեռնությունները արդյունքում զոհվածների շենքերի բակերում, փողոցներում և այլ տեղանքներում բացվել են զոհվածներին նվիրված հուշաքարեր, ցայտաղբյուրներ, մատուռներ, տաղավարներ, բնակելի ու վարչական շենքերի պատերին արվել են գրաֆիտիներ: Տեսնում ենք, որ զոհվածների ընտանիքի անդամները, հարազատները, ի տարբերություն պետական մոտեցման, որտեղ նախապատվությունը տրվում է պատմական տարբեր իրադարձությունների ժամանակ զոհվածների միասնական հուշարձանների տեղադրմանը, նպատակ են ունեցել անհատականացնել իրենց զոհվածների հիշատակումը, ընդգծել նրանց հերոսացումը, հոգեպես և ֆիզիկապես մատչելի դարձնել նրանց հուշարձանների հետ հաղորդակցումը: Զոհվածի հարազատները տեղադրված այդ հուշարձանների միջոցով ցանկանում են լուծել համայնքում նրանց շարունակական «ապրեցնելու» և մոռացության չմատնելու խնդիրը: Զոհվածներին նվիրված անհատական հուշարձանների տեղադրման շարժառիթներից են նաև զոհերի մեծ մասի երիտասարդ տարիքը և զոհվածների ընտանիքներին պետության կողմից հատկացված փոխհատուցումները, որոնք ընտանիքների կողմից ընդունվում ու ծախսվում են գերազանցապես հուշարձանների տեղադրման նպատակով: Տեսնում ենք նաև, որ պատերազմի հուշարձանացման ակտիվ դերակատարն են հանդիսանում նաև տեղի ու արտասահմանի բարերարները, ովքեր իրենց ներկա կամ նախկին համայնքներում, ավանդույթի ուժով, ֆինանսավո-

րում են հուշարձանների տեղադրման նախաձեռնություններ՝ այս դեպքում փորձելով նաև որևէ մասնակցություն ունենալ պատերազմի հիշատակման գործընթացին:

Հետազոտության արդյունքները փաստում են այն մասին, որ պատերազմի հուշարձանացման դերակատարների համար առանձնահատուկ կարևորություն է ստացել այդ կառույցների տեղադրության վայրի ընտրության խնդիրը: 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրության վայրերը գործառութային, խորհրդանշանային, անհատական-զգայական, նեղ խմբային-խորհրդանշանային կարևորում են ստացել այդ նախաձեռնությունների հեղինակների համար: Տեսնում ենք, որ պատերազմի հուշարձանացման պաշտոնական դերակատարները գերազանցապես նախընտրություն են տալիս հուշարձանների՝ համայնքների առանձնացված պանթեոնների կամ հուշահամալիրների տարածքներում տեղադրությանը, որոնք պատերազմի ու նրա զոհերի հիշատակը կենտրոնացնում են մեկ վայրում: Առաձին դեպքերում գրանցվել են դեպքեր, երբ համայնքային իշխանությունները նախաձեռնում են հուշարձանների տեղադրումը համայնքի կենտրոնական, վարչական տարածքների մոտակա վայրերում, որոնք արդեն կրում են համայնքի համար այլ կարևոր իրադարձության խորհրդանշանային արտահայտումը:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ 44-օրյա պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանների տեղադրության հաջորդ ամենատարածված վայրը դարձան հանրակրթական դպրոցներների տարածքները. զոհերի մի զգալի հատված պատերազմի մեկնարկից ամիսներ առաջ դեռևս դպրոցի աշակերտի կարգավիճակ ունեին, ուստի արագորեն տարածվեց նրանց հիշատակը հավերժացնող կոթողները դպրոցների բակերում տեղադրելու պրակտիկան: Դրանք տեղադրվեցին ոչ միայն իրենց դպրոցների ղեկավարության նախաձեռնությամբ, այլ նաև ծնողների, ընկերների, որոնք նպատակահարմար գտան նահատակված տղաների հուշարձանները տեղադրել դպրոցի բակում: Այս պրակտիկան տարածվեց ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում ու դարձավ պետությունը, դպրոց ու նախաձեռնությունների անհատ հեղինակների համագործակցության ամենատարածված ու ընդունելի գործընթացներից:

Տեսնում ենք, որ համայնքային իշխանությունների և բարերարների

կողմից հուշարձանները տեղադրվել են գյուղերի և քաղաքների կենտրոնական հատվածներում կամ արդեն կանգուն հուշարձանների կողքին: Այն բնակավայրերում, որտեղ բացակայում էին Արցախյան առաջին պատերազմին նվիրված հուշարձանները, նոր կառուցվածները դարձել են Արցախյան բոլոր պատերազմների պաշտոնական հիշատակման խորհրդանիշ: Արցախյան ազատամարտի հետ համեմատ, 44-օրյա պատերազմից հետո հուշարձանների տեղադրման տարածքներն ընդլայնվել են՝ ընդգրկելով նաև բնակավայրերի երկրորդային փողոցները, բնակելի թաղամասերի բակերը, խաչմերուկները: Նմանատիպ տարածքների կիրառումը հուշարձանների կանգնեցման հարցում հիմնականում կապված էր անհատների, խմբերի կողմից պատերազմի զոհերի անհատական հուշարձանների տեղադրմամբ: Տեղադրման տարածքները այդ զոհերի բնակության վայրերն են, թաղամասերը, փողոցը կամ բակը:

Պետության կամ համայնքի համար կարևոր հիշողության կառուցման, վերարտադրման կամ տարածման համար առանցքային նշանակություն ունեն այն հիշատակելու տարեդարձային օրերը, արարողություններն ու ծեսերը. պաշտոնական մակարդակում գրանցել ենք հիշատակման արարողակարգային պրակտիկաների պահպանում ու վերարտադրում, սակայն, միևնույն ժամանակ, հետազոտությունը ցույց է տվել, որ տոնացույցի իրադարձությունները այլևս նույն ցնծությամբ չեն նշվում (հատկապես Բանակի օրը, Հաղթանակի տոնը) ու անպայման լրացվում են 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի հարգմամբ: Դեռ ավելին, վերջին պատերազմից հետո մինչ օրս պետական ու լոկալ նշանակության յուրաքանչյուր իրադարձություն ուղեկցվում է 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի հարգմամբ: Ավելի բազմազան են անհատական հուշարձանների շուրջ ձևավորվող հիշատակման ոչ ֆորմալ պրակտիկաները: Այստեղ, մասնավորապես, կարևոր է ուշադրություն դարձնել հուշարձանների բացման արարողություններին, մասնակից հյուրերին և հնչող ելույթներին և ուղերձներին, հուշարձանի տեղադրումից հետո դրա տարածքում իրականացվող միջոցառումներին: Թեև անհատական հուշարձանների նախաձեռնողները հաճախ լինում են զոհվածի հարազատները, ընկերները, դպրոցի տնօրենը կամ ուսուցիչները, խորին և փորձագիտական հարցազրույցները, համացանցային նյութի վերլուծությունը

ցույց են տալիս, որ հուշարձանների բացման արարողությանը հիմնականում ներկա են լինում նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները (մարզպետ, համայնքապետ), ՋՈՒ ներկայացուցիչներ և հոգևորականներ: Զոհվածների հուշարձանների բացման արարողությունները սովորաբար ունենում են կայուն կառուցվածք, պաշտոնական արարողակարգի սահմանված հաջորդականություն:

Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տեղադրված լինելով հանրային վայրերում՝ պատերազմի հուշարձանները դարձել են համայնքի առօրյայի կարևոր ուղեկից, որի շուրջ շարունակվում են ձևավորվել նոր սովորույթներ, համայնքային ավանդույթներ և ծեսեր: Հուշարձանների տեղադրման նախաձեռնողները հիմնականում փորձում են հուշարձանների միջոցով փոխանցել պատերազմի զոհերի համար կարևոր արժեքները՝ ներկայացնելով դրանք սիմվոլների տեսքով: Դրան զուգահեռ, հուշարձաններն առանձնահատուկ կարևորություն են ստանում՝ դառնալով ոչ միայն զոհվածին նվիրված հիշատակ, այլև առօրյայում ոչ ֆորմալ եղանակով կրթադաստիարակչական գործառույթ իրականացնող կոթողներ:

Մեր հետազոտության կարևոր առանձնահատկությունը դարձավ պատերազմի հիշատակման վիրտուալ պրակտիկաների ուսումնասիրությունը, որը և տարբերում է 44-օրյա պատերազմի հիշատակումը արցախյան նախորդ պատերազմներից՝ առաջ բերելով սգո նոր քաղաքականություն, պրակտիկաներ ու վերաբերմունք: Այսպիսով, սոցիալական մեդիա տարածքները փոխել են վշտի լանդշաֆտը՝ խրախուսելով սգավորներին ստեղծել առցանց համայնքներ, հրապարակել կորստի մասին տեղեկատվություն և պահպանել զոհվածի հետ շարունակական կապերը: Առցանց տիրույթում վշտի արտահայտումը շրջանցում է տարածական և ժամանակային սահմանափակումները՝ սգո պրակտիկաներում ընդգրկելով հասարակության ավելի լայն շրջանակների, քան դա հնարավոր է անել իրական կյանքում: Զոհվածների մասին հուշերի շարունակական ներկայացումը, բացի անձնական հույզերի արտահայտումից, թույլ է տալիս հանրայնացնել նրանց հերոսական պատմությունները և առօրյա տեղեկատվության բազմազանության մեջ մոռացությունից «փրկել» դրանք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենագրությունը քննարկում է 44-օրյա պատերազմի հանրային և պաշտոնական հիշման գործընթացները՝ պատերազմի հուշարձանացման ու զոհերի հիշատակման պրակտիկաների օրինակներով: Հիմնախնդրի վերլուծության հիմքում 2022-2024 թթ. ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի ու Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքներում ու մարզկենտրոններում պատերազմից հետո տեղադրված հուշարձանների նախաձեռնությունների հեղինակների հետ իրականացված խորացված հարցազրույցներն են, ինչպես նաև ՀՀ օրենսդիր, գործադիր համակարգի, մարզպետարանների ու ՏԻՄ պատասխանատուների, ոլորտների մասնագետների հետ իրականացված փորձագիտական հարցազրույցների ու հուշարձաններին առնչվող հնարավոր բոլոր նյութերի վերլուծության արդյունքները:

44-օրյա պատերազմի հուշարձանացման գործընթացը հետպատերազմական Հայաստանում իշխող քաղաքական ուժի ու ՀՀ ՏԻՄ-երի, ինչպես նաև բարերարների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հուշարձանների տեղադրման անհատական ու նեղ խմբային նախաձեռնությունների հեղինակ հանդիսացող զոհվածների ծնողների, բարեկամների, ընկերների ու հարևանների միջև իրականացված փոխհարաբերությունների ու բանակցությունների արդյունքն է: Տարբերվում են նաև հուշարձանացման մնեմոնիկ այս դերակատարների շարժառիթներն ու նպատակները, ինչպես նաև պատերազմի ու նրա զոհերի հիշատակման խորհրդանշանային արտահայտման ձևի, վայրի, արտահայտող իմաստների ու հիշատակման պրակտիկաների վերաբերյալ պատկերացումները:

Հուշարձանացման դերակատարների կողմից առաջնային կարևորվել է այդ կոթողների տեղադրության վայրի ընտրությունը: 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրության վայրերը գործառութային, խորհրդանշանային, անհատական-զգա-

յական, նեղ խմբային-խորհրդանշանային կարևորում են ստացել այդ նախաձեռնությունների հեղինակների համար. հուշարձանացման պաշտոնական դերակատարները գերազանցապես նախընտրություն են տալիս հուշարձանների՝ համայնքների առանձնացված պանթեոնների կամ հուշահամալիրների տարածքներում տեղադրությանը, մինչդեռ զոհվածների ծնողներն ու հարազատները, ընկերներն ու հարևանները նախընտրում են առավել հանրային ու տեսանելի վայրերը, դպրոցների տարածքները, որտեղ ոչ վաղ անցյալում ուսանում էին զոհերի մի զգալի հատվածը՝ սեփական անհատական կամ լոկալ խմբային վիշտը բերելով հանրային տարածք:

Որոշակի փոփոխությունների են ենթարկվել նաև պատերազմի հիշատակման պրակտիկաները. պաշտոնական մակարդակում հիշատակման արարողակարգային պրակտիկաների պահպանման ու վերարտադրմանը զուգահեռ, տոնացուցային իրադարձություններն այլևս նույն ցնծությամբ չեն նշվում (հատկապես Բանակի օրը, Հաղթանակի տոնը) ու անպայման լրացվում են 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի հարգմամբ, իսկ անհատական հուշարձանների շուրջ ձևավորվող հիշատակման ոչ ֆորմալ պրակտիկաներն առավել բազմազան են ու նպաստում են հիշատակման նոր պրակտիկաների ձևավորմանը: Տեղադրված լինելով հանրային վայրերում՝ պատերազմի հուշարձանները դարձել են համայնքի առօրյայի կարևոր ուղեկից, որի շուրջ շարունակվում են ձևավորվել նոր սովորույթներ, համայնքային ավանդույթներ և ծեսեր:

Հետազոտության կարևոր առանձնահատկությունը դարձավ պատերազմի հիշատակման վիրտուալ պրակտիկաների ուսումնասիրությունը, որը և տարբերում է 44-օրյա պատերազմի հիշատակումը արցախյան նախորդ պատերազմներից՝ առաջ բերելով սգո նոր քաղաքականություն, պրակտիկաներ ու վերաբերմունք: Այսպիսով, սոցիալական մեդիա տարածքները փոխել են վշտի լանդշաֆտը՝ խրախուսելով սգավորներին ստեղծել առցանց համայնքներ, հրապարակել կորստի մասին տեղեկատվություն և պահպանել զոհվածի հետ շարունակական կապերը:

SUMMARY

This research analyzes the processes of official and public remembrance of the 44-day war, by observing memorialization and commemoration practices initiated by state and other mnemonic actors. The research is based on fieldwork over a three-year period (2022–2024), primarily in the borderland regions of Tavush, Gegharkunik, Vayots dzor, Ararat and Syunik. It was qualitative research based on methods of participant observation and semistructured interviews conducted among mnemonic actors who initiated the war memorials, as well as expert interviews with officials connected with war memorialization and commemoration processes. We also employed content analysis of news and social media.

On September 27, 2020, Azerbaijan launched an offensive aimed at retaking the territories it had lost in the first war with Armenia in the 1990s. In the 44 days of fighting that followed, an estimated 3781 soldiers and civilians were killed and, as of now, the whereabouts of 231 service members and 22 civilians are unknown. Shortly after the end of the war, almost all the communities of the RA initiated different undertakings aimed at memorialization of fallen soldiers of Artsakh War. Such initiatives include street naming, renaming, erection of monuments and memorials, building memorials and "memory corners" at schools and painting graffities on walls.

Informed by and contributing to three literatures—on the relationship between the politics of memory and war commemoration, on war memorials, and on virtual grief—this book investigates how the official and public remembrance and forgetting of the 44-day war are being expressed via the transforming landscapes and commemoration practices of Armenia's borderland communities. This book takes a closer look at the mnemonic actors responsible for erection of the war memorials, categorize them, and describe their agendas and the ways they interact with each other. This research also takes a closer look at the geographic patterns of their activity. State and local authorities

overwhelmingly prefer to place the war memorials in community pantheons or memorial complexes, which are located in isolated residential areas, while parents and relatives, friends and neighbors of the fallen soldiers prefer more public and visible places, school grounds, effectively bringing their individual grief into public space.

This research illustrates official war commemoration practices that are reproducing ceremonial practices of post-Soviet period, while at the same time exposing some unique characteristics of informal commemoration practices formed around individual memorials. Being placed in public areas, war memorials have become an important part of the daily life of the community, around which new customs, community traditions and rituals continue to be formed.

The highlight of this research is the study of virtual commemorating practices of the war, which distinguishes the commemoration of the 44-day war from previous Artsakh wars and illustrates new mourning practices, rituals and public perception. Social media platforms have changed the landscape of grief by encouraging mourners to create online shrines and share information about the fallen soldiers, and make their memorials more accessible to the general public.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գ. Աթանեսյան, Խորհրդային և հետխորհրդային հուշարձանները հայաստանյան հանրային դիսկուրսում, ատենախոսական աշխատանք, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 2018, 206 էջ

Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան, Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Հայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը, Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում, պատմություն, հիշողություն, առօրյա, Եր., 2015, էջ 238-286:

Լ. Խառատյան, Գ. Շագոյան, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, Heinrich Boell Foundation South Caucasus, Երևան, 2022, 28 էջ:

Հ. Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը: Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 432 էջ:

Հ. Մարության, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, 89 էջ:

Հ. Մարության, Հուշարձանը՝ որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 172-180:

Հ. Մելքումյան, Հիշողությունից ազգայնականությո՞ն. խորհրդային և հետխորհրդային հուշարձանները, ՀԱԻԱ 1, Երևան, 2017, էջ 42-64:

Մ. Գալստյան, Աշխատանքային միգրացիան և սոցիալ մշակութային գործընթացները Հայաստանում, ՀԱԻ հրատ., Եր., 2023, 388 էջ:

Ն. Մարգարյան, Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ: Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային VIII գիտաժողով, Գյումրի, 2010, էջ 48-53:

Ս. Հակոբյան, Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդակա՞ն, մոդե՞ռն թե՞ պոստմոդեռն սուգ // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 5, Եր., ՀԱԻ, 2023, էջ 109-122:

B. Anderson. Imagined Communities: Reflections on the Origins and Spread of Nationalism, rev. edn., London, 1991.

D. Babis. Digital mourning on Facebook: the case of Filipino migrant worker live-in caregivers in Israel, Media Culture & Society, 43(3) 2020, 397-410.

D. Karabegovic. Who chooses to remember? Diaspora participation in memorialization initiatives, Ethnic and Racial Studies, 2019, 1-19.

E. Franchi. Memories of Winners and Losers: historical Remarks on why Societies Remember and Commemorate Wars, STAMPA, 2019, 35-69.

E. Hobsbawm. Ranger T., The Invention of Tradition, Cambridge, 1983.

J. Miller. Space is Place: Why the Placement of Sculpture Matters, 1-16.

J. Moore, S. Magee S. et al. Social Media Mourning: Using Grounded Theory to Explore How People Grieve on Social Networking Sites, OMEGA—Journal of Death and Dying, 0(0), 2017, 1-29.

J. Paulson, N. Abiti, et al. Education as site of memory: developing a research agenda. International Studies in Sociology of Education, 29(4), 2020, 429-451.

J. Winter, E. Sivan. War and Remembrance in the Twentieth Century, Cambridge, 1999.

J. Winter. Sites of Memory, Sites of Mourning: The Great War in European Cultural History. Cambridge University Press; 2014.

J.R. Brubaker, G.R. Hayes, P. Dourish. Beyond the Grave: Facebook as a Site for the Expansion of Death and Mourning, The Information Society: An International Journal, 2013, 29(3), 152-163.

K. Korostelina, Shaping unpredictable past: National identity and history education in Ukraine. National Identities, 13(1), 2011, 1–16.

M. Bernhard, J. Kubik. A Theory of the Politics of Memory // In Twenty Years after Communism: The Politics of Memory and Commemoration, edited by Michael Bernhard and Jan Kubik, Oxford and New York: Oxford University Press, 2014, 7-34.

M. Giangiulio, E. Franchi, G. Proietti. Commemorating War and War Dead: Ancient and Modern. Stuttgart: Franz Steiner Verlag, 2019.

M. Gibson, Death and Grief in the Landscape: Private Memorials in Public Space, Cultural studies review, 17, 2011, 146-161.

M. Klaassens. Roadside Memorials: Public Places of Public Greaf, URSI research conference 2007, 1-14.

N. Cesare, J. Branstad, Mourning and memory in the twittersphere, Mortality, 23(1), 2017, 82-97.

Popular Memory Group, 'Popular memory: theory, politics, method', in Centre for Contemporary Cultural Studies, Making Histories: Studies in History-Writing and Politics, London, 1982, 205-252.

S.H. Church. Digital Gravescapes: Digital Memorializing on Facebook, The Information Society, 2013, 29(3), 184-189.

T.G. Ashplant, G. Dawson, M. Roper. The Politics of War Memory and Commemoration, 1st ed, Routledge, 2000.

А. Марутян. Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа, ЭО. № 3, 2008, 122-123.

В. Ачкасов. 2013, «Политика памяти» как инструмент строительства постсоциалистических наций, Журнал социологии и социальной антропологии, 16(4), 106–123.

Г. Атанесян. Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, 31-36.

Л. Абрамян. «Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении)», Acta Slavica Iaponica XX, 2003, 25-49.

О. Малинова. Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, "ПОЛИТИЯ" № 4 (87) 2017, 6-22.

Т. Рунаев. Виртуальные кладбища как коммеморативные практики: Разновидности и векторы развития, «Вестник АГУ». Выпуск 3 (244), 2019, 111-119.

Т. А. Смирнова. Особенности изучения исторической памяти и практик коммеморации Первой мировой войны в Великобритании 1918-1939 гг., Ярославский педагогический вестник, № 4, Том I (Гуманитарные науки), 2014, 95-98.

Ю. Антонян. Социальная семиотика «мигрантских» церквей в Армении, Государство, религия, церковь в России и за рубежом. 2016, N2 (34), 156-175.

Я. Ассман. Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, Москва, Языки славянской культуры, 2004.

Համացանցային հղումներ՝

«Դուք հավերժ կմնաք մեր սրտերում». Նար-Դոսի անվան դպրոցի բակում բացվեց 44-օրյա պատերազմում զոհված 6 շրջանավարտների հիշատակին նվիրված հուշարձան, հասանելի է՝ https://civic.am/news/13606--44-

«Եռաբլուր» զինվորական պանթեոն է այցելել Արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, https://armtimes.com/hy/article/221750, 25.06.2024:

«Եռաբլուր» զինվորական պանթեոնում կատարվել է հոգեհանգստյան կարգ, https://www.shantnews.am/news/view/832527.html, 25.06.2024:

«Կյանքս՝ կյանքիդ գնով», դպրոցի բակում 9 սաների հիշատակը հավերժացնող հուշարձան բացվեց, հասանելի է՝ https://factor.am/377116.html

28 անմահ անուն, որ կյանքը զոհեցին հանուն հայրենիքի. Դիլիջանի պանթեոնում հուշակոթող է կառուցվել, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=_ZiUuV0icr4, 25.06.2024:

44 օրյա պատերազմի նահատակներին նվիրված հուշահամալիրի հանդիսավոր բացման արարողությունը Կապանում, https://www.youtube.com/watch?v=MF9JUgWJbEo&t=59s, 02.07.2024:

44-օրյա պատերազմում զոհված Կարեն Մարգարյանի հիշատակին Պառավաքարում կիսանդրի և մատուռ են կառուցել, https://www.youtube.com/watch?v=qcEpNcOhm8o, 09.07.2024:

https://erablur.am/story/sirvats-ein-aktiv-ynkeraser-ev-hayrenaser-1

https://historymuseum.am/%d5%b0%d5%a1%d5%be%d5%a5%d6%80%d5%aa%d5%ab-%d5%b3%d5%a1%d5%b4%d6%83%d5%b8%d6%80%d5%a4%d5%b6%d5%a5-%d6%80%d5%a8%d5%9d-%d5%b4%d5%a1%d5%bd-ii/#1702852066303-f4ca1ba2-1fd1, 20.05.2024:

https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/11/09/Nikol-Pashinyan-visited-Erablur/, 25.06.2024:

Поршнева О. Феномен исторической памяти о войне, 2005, https://elar.urfu.ru/bitstream/10995/4751/2/uvmi4-2005-16.pdf, 15.05.2024.

Шинкова А. Трансформация отношения к конечности бытия-в-мире под воздействием цифровых вызовов, 2020, https://cyberleninka.ru/article/n/trans-

formatsiya-otnosheniya-k-konechnosti-bytiya-v-mire-pod-vozdeystviem-tsifrovyh-vyzovov, 10.05.2024.

Ամենայն հայոց կաթողիկոսը հոգևորականների ուղեկցությամբ այցելել է Եռաբլուր զինվորական պանթեոն, https://armtimes.com/hy/article/205384, 01.07.2024:

Անմահացած մեր հերոսներ, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=STTZZEAxhgQ

Ապրիլյան պատերազմի հերոսների դիմանկարները՝ ԵՊՀ պատերին, http://www.old.ysu.am/newspaper/hy/1479362589, 10.06.2024:

Արարատ Միրզոյանն այցելել է «Եռաբլուր» պանթեոն, https://shabat.am/am/article/254469/Ararat-Mirzoyann-aycelel-e--YErablur-, 01.07.2024:

Արտաշատում բացվել է անմահացած եզդի քաջորդիների հիշատակը հավերժացնող հուշաքար, հասանելի է՝ https://armtimes.com/hy/article/247426

Գագարինում բացվեց Արցախյան վերջին պատերազմի զոհերի աղբյուր-հուշարձանը, https://armenpress.am/arm/news/1054441

Գավառ քաղաքում կառուցվում է հայրենիքի համար նահատակված հայորդիների հիշատակին նվիրված հուշահամալիր-պանթեոն, հասանելի է՝ https://www.1in.am/3174245.html:

Գավառի Արծվաքար թաղամասում կառուցվում է Արցախյան պատերազմներում զոհվածներին նվիրված հուշակոթող, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1110045

Երևանի 22 հիմնական դպրոցը կանվանակոչվի արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գևորգ Արշակյանի անվամբ, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1086545

Երևանի թիվ 100 դպրոցի բակում հուշաքար է տեղադրվել պատերազմում զոհվածների հիշատակին, հասանելի է՝ https://www.aravot.am/2021/08/13/1209956/

Երևանում բացվել է Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը, https://www.1in.am/1740061.html, հասանելի է՝ 16.05.2024:

Ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված տղաների՝ հուշարձանի բացում, https://www.youtube.com/watch?v=h43kSYsCC0o, 02.07.2024:

Ինչքա՞ն խաչքար դնենք, հասկացանք. եկեք ամենքի վզից էլ մի հատ խաչքար կապենք, ասենք՝ քարշ տվեք, երեխեք. Նիկոլ Փաշինյան, https://newspress.am/?p=216160&l=am, բեռնման օրը՝ 09.05.24:

Լանջաղբյուրում բացվեց և օրհնվեց Արցախյան պատերազմի զոհերի

հուշաղբյուրը, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/1064373

Լիոնի քաղաքապետը ծաղիկներ է խոնարհել Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին (լուսանկարներ), https://armtimes.com/hy/article/257370, 01.07.2024:

Խնկարկում և հարգանքի տուրք՝ Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին, https://medialab.am/187754/, 25.06.2024:

Կաթողիկոսն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://shabat.am/am/article/251940/Katoghikosn-aycelel-e--YErablur--zinvorakan, 25.06.2024:

Կաթողիկոսն այցելել է Եռաբլուր, https://m.a1plus.am/hy/article/461920, 01.07.2024:

Կարմիրգյուղում բացվեց Արցախյան ազատամարտի զոհերի և հայրենյաց պաշտպանների հուշարձանը, հասանելի է՝ https://armenpress.am/hy/article/951363

Հայաստանի պատմության թանգարան, Առցանց ցուցադրություն. հավերժի ճամփորդները, Հավերժի ճամփորդները. անուններ, պատմություններ և երազանքներ, որոնք մեզ հետ են, https://historymuseum.am/%D5%A1%D5%BC%D6%81%D5%A1%D5%B6%D6%81-%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BD%E2%80%A4-%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%AA%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%80%D5%A4/, 20.05.2024:

Հայաստանի պատմության թանգարան, Հավերժի ճամփորդները՝ մաս III, https://historymuseum.am/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%AA%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%D5%9D-%D5%B4%D5%A1%D5%BD-iii/, 02.07.2024:

Հայաստանի պատմության թանգարան, Հավերժի ճամփորդները՝ մաս II, Հավերժի ճամփորդներ … Անկատար երազանքներ,

Հանուն հայրենիքի նահատակված Ֆիզմաթ և Ուսում դպրոցների սաների հիշատակի հուշարձան-խաչքարի բացումը, հասանելի է՝ https://physmath.am/page/3/

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարն այցելել է «Եռաբլուր» պանթեոն (տեսանյութ), https://armtimes.com/hy/article/255575, 01.07.2024:

Հաստատվել է Գորիսի զինվորական պանթեոնի նախագիծը, հասանելի է՝ https://hy.armradio.am/archives/341601, 25.06.2024:

Հերոսապատում, Սիրված էին, ակտիվ, ընկերասեր և հայրենասեր, հասանելի է՝ https://erablur.am/story/sirvats-ein-aktiv-ynkeraser-ev-hayrenaser, 09.05.24:

ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու, 9 հունվարի 2003, N80-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37837, 09.05.24:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ելույթը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանում, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18, բեռնման օրը՝ 09.05.24:

ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետությանհրապարակումhttps://www.youtube.com/watch?v=IbVaV9Mekkc, բեռնման օրը՝ 09.05.24:

ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները, դեսպաններն այցելում են Եռաբլուր, https://armtimes.com/hy/article/221717, 25.06.2024:

ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 29 մայիսի 2002թ. N628, http://www.irtek.am/views/act.aspx?aid=18583:

ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=15615, 24 հունվարի 2002թ. N65

ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 24 դեկտեմբերի 2003թ. N17-93Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757

ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 30 դեկտեմբերի 2004թ. N1929Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13320

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149449

ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060

ՀՀ-ում և Արցախի Հանրապետությունում եռօրյա սուգ է. ինչ է արգելվում սգո օրերին, https://hy.armradio.am/archives/309764, 20.06.2024:

Ճամբարակում բացվեց հերոս Սարգիս Ղազարյանի հիշատակը հավերժացնող արձանը, https://www.youtube.com/watch?v=Ur46AduKuis&t=43s, 02.07.2024:

Մեզ բացակա չդնեք. անմահացած տղաներին նվիրված խաչքարի բացում Իջևանի թիվ 5 դպրոցի բակում, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=xEcmYHEwAQw

Նազարբեկյան 31շ. բակում, բացվեց պատերազմում լեգենդ դարձած Միերի և Էրիկի անվամբ հուշաղբյուր-հուշարձան, https://www.youtube.com/watch?v=rkaYU6MgBJg&t=2418s. 02.07.2024:

Պանթեոնը հավասարություն պետք է խորհրդանշի, հասանելի է՝ https://www.aliqmedia.am/2021/08/21/26613/, 25.06.2024:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքը, ընդունված է Ազգային ժողովի կողմից, 11 նոյեմբերի 1998թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=38019

Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին Հայկական ՍՍՀ օրենքը, ընդունված 01.03.1978, https://www.irtek.am/views/act.aspx?tid=2319&sc=p4#p4, 01.07.2024:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգման և օգտագործման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության որոշումը ընդունված 20 ապրիլի 2002թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=22601

Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին, հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/2819/about

Սա հորդոր է ուսանողներին ու անցորդներին. գրաֆիտի՝ քառօրյա պատերազմում զոհված հերոսների դիմանկարներով, https://www.1in.am/2019015.html, 18.06.2024:

Սարուխանում կանգնեցվել է հուշակոթող՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերին, https://www.youtube.com/watch?v=T4Sr5T4JB2I, 02.07.2024:

Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանի գլխավորությամբ տեղի ունեցավ երթ՝ դեպի քաղաքային պանթեոն, https://syuniacyerkir.am/sisian-hamaynqi-khekavari-pashtonakatar-armen-hakobjanyani-glkhavorutyamb-tekhi-unetsav-ert-depi-qakhaqayin-panteon, 01.07.2024:

Վաղաշենում բացվեց պանթեոն՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված հայորդիների, հասանելի է՝ http://gegharkunik.mtad.am/news/item/2021/

10/03/2/, 15.05.2024.

Վարչապետը լուսաբացին այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, Վարչապետը հարգանքի տուրք է մատուցել 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հիշատակին (լուսանկարներ, տեսանյութ), https://armtimes.com/hy/article/221722, 25.06.2024:

Վարչապետը ստորագրել է Հայաստանում եռօրյա սուգ հայտարարելու որոշում, https://armenpress.am/hy/article/1037889, 20.06.2024:

ՏԵՍԱՆՅՈՒԹ. Անհավասարությունը պետք է վերացվի. ինչու ոչ բոլոր զինծառայողների նկարներով գրաֆիտներ կան, https://armlur.am/1293678/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR3fV3s-ZiRNzj8z2LJhOZ1VDKa8u68DfqJT4b-Yhul4doRn8NMpnAJfrPo_aem_lOYBNL sptwZCPzcJM3GLFw, 02.07.2024:

Փոխվարչապետ Սուրեն Պապիկյանն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, https://www.gov.am/am/news/item/15125/, 25.06.2024:

Դաշտային ազգագրական նյութեր՝

ԴԱՆ Արարատի մարզ, 2022:

ԴԱՆ Արարատի մարզ, 2023:

ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2022:

ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

ԴԱՆ, Երևան, 2024:

ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022:

ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, 2022:

ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, 2023:

ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

ԴԱՆ, Տավուշի մարզ, 2023:

ՀԱՐՑԱՐԱՆ

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐԱՑՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարցազրույցի անցկացման մարզը/համայնքը _____ / _____

Հարցազրույցի մասնակցի սեռը, տարիքը _____

Հարցազրույցի մասնակցի կարգավիճակը **1.** զոհվածի հարազատ, **2.** պատերազմի մասնակից/ ընտանիքի անդամ, **3.** պատերազմի հետ ուղղակի առնչություն չունեցող անձ _____

Տեղեկացվածություն, գիտելիք

1. Որո՞նք եք համարում պատերազմի զոհերի հիշատակման միջոցները:
2. Ի՞նչ իրավիճակ, միջավայր պետք է ստեղծված լինեն, որ համարեք՝ պատերազմը մոռացվել է:
3. Ձեր քաղաքում/գյուղում/թաղամասում առկա՞ են Արցախյան առաջին պատերազմին նվիրված հուշարձաններ: Եթե այո, խնդրում ենք՝ մի փոքր ներկայացրեք, թե որտե՞ղ են տեղադրված, ովքե՞ր են տեղադրել, ներկայումս ովքե՞ր են այցելուները…
4. Ձեր քաղաքում/գյուղում/թաղամասում առկա՞ են ապրիլյան քառօրյա և 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններ: Եթե այո, խնդրում ենք, օրինակներ բերել և մանրամասնել:
5. Ի՞նչ տարբերություններ և նմանություններ եք տեսնում Արցախյան 1-ին և 44-օրյա պատերազմներին նվիրված հուշարձանների միջև:
6. Ձեր կարծիքով, ինչու՞ են տեղադրվում հուշարձանները, ի՞նչ նպատակ և ասելիք ունեն դրանք:
7. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ հուշարձաններ պետք է տեղադրվեն (տեսակները՝ հուշահամալիրներ, խաչքարեր, հուշատախտակներ, կիսանդրիներ, արձաններ, ցայտաղբյուրներ և հուշաղբյուրներ): Ինչու՞ եք այդպես կարծում:

8. Ձեր կարծիքով, որտե՞ղ պետք է տեղադրվեն հուշարձանները: Ինչու՞ եք այդպես կարծում:
9. Ձեր կարծիքով, ովքե՞ր պետք է տեղադրեն հուշարձանները, ինչու՞:
10. Ձեր քաղաքում/գյուղում/թաղամասում կազմակերպվե՞լ են պատերազմին (և՛ Արցախյան 1-ին և՛ 44-օրյա) նվիրված միջոցառումներ, հուշ-երեկոներ: Եթե այո, խնդրում ենք, օրինակներ բերել և մանրամասնել:
11. Ձեր կարծիքով, ինչու՞ են կազմակերպվում պատերազմին նվիրված միջոցառումներ, հուշ-երեկոներ, ի՞նչ նպատակ և ասելիք ունեն դրանք:
12. Ձեր կարծիքով, ովքե՞ր պետք է կազմակերպեն հիշատակի միջոցառումները, հուշ-երեկոները, ինչու՞:

Վերաբերմունք

13. Ինչպե՞ս եք վերաբերվում, երբ հուշարձանները տեղադրվում են.
    a. Քաղաքից/գյուղից դուրս՝ առանձնացված հատուկ վայրերում,
    b. Քաղաքի/գյուղի կենտրոնական մասում/հրապարակներում,
    c. Որևէ հիմնարկի բակում՝ դպրոց, զինկոմ, ոստիկանություն և այլն,
    d. Շենքի բակերում և փողոցների մայթերում:
14. Ինչպե՞ս եք վերաբերվում,
    a. Երբ հուշահամալիրներ են կառուցվում կամ հուշարձաններ են տեղադրվում երկրի իշխանությունների կողմից:
    b. Երբ հուշարձանները տեղադրում են քաղաքի/գյուղի իշխանությունները,
    c. Երբ հուշարձանները տեղադրում են զոհվածների ընտանիքի անդամները, հարազատներն ու ընկերները,
    d. Երբ հուշարձանների տեղադրումը նախաձեռնում են բարերարները:
    e. Ի՞նչ կարծիք ունեք դեպի Ապարան տանող ճանապարհին՝ Տառերի պուրակի և Սուրբ Խաչի մոտ, կառուցվելիք «Հավերժության պուրակի» մասին (նախաձեռնող և կառուցող՝ «Թովմասյան» հիմնադրամ):
    f. Ի՞նչ կարծիք ունեք Բուսաբանական այգում կառուցվելիք «Կյանքի (Կենաց) պուրակի» մասին (կառուցող՝ Երևանի քաղաքապետարան և ՀՀ կառավարություն):

15. Ինչպե՞ս եք վերաբերվում,
    a. երբ պատերազմին նվիրված միջոցառումներ են կազմակերպվում դպրոցներում, մանկապարտեզներում, ինչու՞,
    b. երբ պատերազմի զոհերին նվիրված հուշ-երեկոներ են կազմակերպվում, ինչու՞,
    c. երբ քաղաքական ակցիաներ են կազմակերպվում՝ հիշատակելով պատերազմի զոհերին, ինչու՞,
    d. Առաջին տիկնոջ կողմից կազմակերպած մարտի 8-յան և ապրիլ 7-յան միջոցառումներին, ինչու՞:

Փորձառություն, առնչություն

16. Երբևէ հանդիսացե՞լ եք հուշարձանների բացման նախաձեռնող/մասնակից: Եթե այո, խնդրում ենք, մի փոքր պատմել Ձեր փորձառության մասին (ու՞մ հիշատակի համար էր, ու՞մ գաղափարն էր տեղադրել այն, ովքե՞ր օգնեցին ֆինանսապես, որտե՞ղ տեղադրեցիք, ովքե՞ր էին ներկա, ովքե՞ր ելույթ ունեցան, ովքե՞ր են այցելուները և այլն):
17. Երբևէ ներկա եղե՞լ եք հուշարձանների բացման արարողությունների: Եթե այո, խնդրում ենք, մի փոքր պատմել այդ միջոցառման մասին՝ ու՞մ հիշատակի համար էր, ու՞մ գաղափարն էր տեղադրել այն, ու՞մ ֆինանսավորմամբ էր, որտե՞ղ է տեղադրված, ովքե՞ր էին ներկա, ովքե՞ր ելույթ ունեցան, ովքե՞ր էին այցելուները, ինչպե՞ս կազմակերպվեց ծեսը /ծաղկեպսակ դրեցին, ծաղիկներ խոնարհեցին, մոմավառություն արեցին, քահանան օծեց, երեխաներն արտասանեցին կամ երգեցին և այլն/:
18. Երբևէ մասնակցե՞լ եք կամ հանդիսացե՞լ եք կազմակերպիչ պատերազմի զոհերին նվիրված հուշ-երեկոների, միջոցառումների: Եթե այո, խնդրում ենք, մի փոքր պատմել միջոցառման մասին՝ ու՞մ հիշատակի համար էր, ովքե՞ր էին կազմակերպիչները, ովքե՞ր էին ներկա, ովքե՞ր ելույթ ունեցան, ի՞նչ նպատակ ուներ միջոցառումը և այլն:

ՀԱՐՑԱՐԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ (Ա) ՀԱՐՑԱՀԱՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Նախատեսված է հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ոլորտի մասնագետների հետ հարցազրույցներ իրականացնելու համար)

Կազմակերպություն_____

Փորձագետի անուն ազգանուն_____

Պաշտոն_____

Տարիք_____

Կրթություն_____

Հեռախոսահամար/էլ.հասցե_____

Պատերազմի հիշատակումը

1. Ի՞նչ եղանակներով է պետք հիշատակել պատերազմի զոհերի հիշատակը:
2. Արդյո՞ք որևէ կերպ հիշատակվել են պատերազմի զոհերը Ձեր համայնքում:
3. Ի՞նչ դեր է խաղում հուշարձանը հիշատակման տարբեր պրակտիկաների շարքում:
4. Ու՞մ հիշատակին նվիրված կամ ի՞նչ բովանդակությամբ հուշարձաններ են տեղադրվել Ձեր համայնքում:
5. Ձեր կարծիքով, ու՞մ նվիրված հուշարձաններ պետք է տեղադրվել հանրային վայրերում:
6. Ձեր կարծիքով, ի՞նչ ուղերձ պետք է հղեն հուշարձանները:
7. Ու՞մ նախաձեռնությամբ են տեղադրվել հուշարձանները Ձեր համայքնում:
8. Արդյո՞ք պետք է քաղաքային և համապետական իշխանություններից զատ այլ անձինք նույնպես կարողանան հանրային վայրերում տեղադրել հուշարձաններ:
9. Ի՞նչ տիպի հուշարձաններ են տեղադրվել Ձեր համայնքում
10. Արդյո՞ք տեսնում եք տարբերություններ և նմանություններ Արցախյան 1-ին, Ապրիլյան և 44-օրյա պատերազմներին նվիրված հուշարձանների միջև:

11. Տեղադրվել են արդյոք հուշարձաններ առանց համայնքապետարանի հետ անհամաձայնության
12. Որտե՞ղ են հիմնականում տեղադրվում այդ հուշարձանները և ու՞մ կողմից:
13. Ինչպե՞ս է վերաբերվում համայնքապետարանը նման պրակտիկանե-րին:
14. Որտե՞ղ պետք է տեղադրվել պատերազմի զոհերի հիշատակն հավեր-ժացնող հուշարձանները:
15. Նման հուշարձանները ճիշտ եք համարում տեղադրել հանրային վայրե-րում՝ պանթեոնների փոխարեն:
16. Ինչպիսի ծեսեր/միջոցառումներ կարելի է իրականացնել այդ վայրե-րում, ինչպիսիք՝ ոչ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Նկ. 1. Եռաբլուր զինվորական պանթեոնը, ք. Երևան, 2020 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի

Նկ. 2. 44-օրյա պատերազմում զոհված սևքարեցիներին նվիրված հուշարձանը, Վարշամյանի ու Սևքարեցի Սաքոյի հուշարձանները, գ. Սևքար, Տավուշ, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի

Նկ. 3. Արցախյան ազատամարտում զոհված գանձակցի հերոս տղաների անմահության պուրակի զրուցարանն ու հուշաղբյուրը, գ. Գանձակ, Գեղարքունիք:

Նկ. 4. Եկեղեցի նվիրված Շ. Գասպարյանի հիշատակին, գ. Աչաջուր, Տավուշ: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 5. Զոհված երկրապահների հիշատակին նվիրված խաչքար ու հուշաղբյուր, ք. Սիսիան, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 6. Արցախյան ազատամարտի ու 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը Կարմիրգյուղ գյուղում, Գեղարքունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 7. Արցախյան ազատամարտի ու 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը Սարիգյուղի հուշահամալիրի տարածքում, Տավուշ, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 8. Արցախյան ազատամարտի ու 44-օրյա պատերազմի զոհերի զինվորական պանթեոնը Բաղաբուրջի հուշահամալիրում, Կապան, Սյունիք, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 9. 44-օրյա պատերազմի զոհերի զինվորական պանթեոնը Քաջարանում, Սյունիք, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 10. Արցախյան ազատամարտի ու 44-օրյա պատերազմի զոհերի զինվորական պանթեոնը Սիսիանում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի

Նկ. 11. 44-օրյա պատերազմի զոհերի զինվորական պանթեոնը Գորիսի հուշահամալիրում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 12. 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանը Եղեգնաձորի պանթեոնում, Վայոց ձոր, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 13. 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանն ու զինվորական պանթեոնը Վաղաշեն գյուղում, Գեղարքունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 14. 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանն ու հուշաղբյուրը դպրոցի բակում, Գորիս Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 15. 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանը Գորիսի Ա. Բակունցի անվան դպրոցի բակում, Սյունիք, 2023թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 16. 44-օրյա պատերազմի գրաֆիտի, Լանջաղբյուր, Գեղարքունիք, 2023թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 17. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Մարտունու թիվ մեկ դպրոցի բակում, Գեղարքունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 18. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Դիլիջանի դպրոցի բակում, Տավուշ, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 19 Արցախյան ազատամարտի հուշարձանը Գավառի նոր կառուցվող հուշահամալիրում, Գեղարքունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 20. Արցախյան պատերազմների զոհերին նվիրված հուշարձանը Վերին Գետաշենում, Գեղարքունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 21. Արցախյան պատերազմների զոհերին նվիրված հուշարձան Արին գյուղում, Վայոց ձոր, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 22. Արցախյան պատերազմի անհատական հուշարձան Արենի գյուղում, Վայոց ձոր, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 23. Արցախյան երկրորդ պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Ջերմուկի եկեղեցու բակում, Վայոց ձոր, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 24. Արցախյան պատերազմների զոհերին նվիրված հուշարձան Կիրանցում Տավուշ, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 25. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Հաղարծինի Հայրենական պատերազմի հուշահամալիրի տարածքում, Տավուշ, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 26. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Գորիսում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 27. 44-օրյա պատերազմի անհատական հուշաղբյուր Գորիսում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 28. 44-օրյա պատերազմի անհատական հուշարձան Սիսիանում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 29. 44-օրյա պատերազմի անհատական հուշարձան Սիսիանում, Սյունիք, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:



Նկ. 30. 44-օրյա պատերազմի անհատական մատուռ Լեռնաձորում, Սյունիք, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 31. 44-օրյա պատերազմի անհատական հուշարձան խաղահրապարակում, Աճարկուտ, Տավուշ, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 32. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Քաջարանում, Սյունիք, 2022 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Նկ. 33. 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձան Դիլիջանում, Տավուշ, 2023 թ.: Լուսանկարը՝ Գ. Աթանեսյանի:

Գարիկ Աթանեսյան, Միհրան Գալստյան
Գայանե Հակոբյան, Լուսինե Անգելուշ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒԾԱՐՁԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Էջադրում և ձևավորում՝
Արթուր Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ISBN 978-9939-886-68-8

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ